

Հայ Դատի տարեգիրք 2020



Հայ Դատի յանձնախմբերի և գրասենյակների աշխատանքները

Երեւան
2021

Հայ Դատի տարեգիրք 2020

Հայ Դատի յանձնախմբերի
և գրասենեակների աշխատանքները

Բովանդակություն

Հայ Դատի յանձնախմբի հիմնադրությունը	4
Հայ Դատի Կենտրոնական գրասենեակ	9
Հայ Դատի Սմերիկայի յանձնախումբ	11
Հայ Դատի Երուզայի յանձնախումբ/Բրիսելի գրասենեակ	17
Հայ Դատի Ռուսաստանի յանձնախումբ/Մոսկվայի գրասենեակ	25
Հայ Դատի Միջին Արեւելքի յանձնախումբ/Բէյրութի գրասենեակ	28
Հայ Դատի Կանադայի յանձնախումբ	29
Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբ	33
Հայ Դատի Հարավային Ամերիկայի յանձնախումբ	42
Հայ Դատի Ուրուգուայի յանձնախումբ	46
Հայ Դատի Բրազիլիայի յանձնախումբ	49
Հայ Դատի Լիբանանի յանձնախումբ	50
Հայ Դատի Աստրիայի յանձնախումբ	52
Հայ Դատի Կիպրոսի յանձնախումբ	56
Հայ Դատի Ֆրանսիայի յանձնախումբ	59
Հայ Դատի Գերմանիայի յանձնախումբ	65
Հայ Դատի Յունաստանի յանձնախումբ	66
Հայ Դատի Սիացեալ Թագաւորութեան յանձնախումբ	71
Հայ Դատի Նիդերլանդների յանձնախումբ	76
Հայ Դատի Լեհաստանի յանձնախումբ	81
Հայ Դատի Շեդիայի յանձնախումբ	84
Հայ Դատի Երուսաղէմի յանձնախումբ	85
Հայ Դատի Թեհրանի յանձնախումբ	86
Հայ Դատի Նոր Զուղայի յանձնախումբ	89
Հայ Դատի Սուրիոյ յանձնախումբ	91
Հայ Դատի Իրաքի յանձնախումբ	93
Հայ Դատի Քուվէյթի յանձնախումբ	94
Հայ Դատի Նոր Զելանդիայի յանձնախումբ	95

Պատրաստություն՝ Հայ Դատի կենտրոնական գրասենեակի
Հրատարակություն՝ «Հայ Դատ» հիմնադրամի
Լուսանկարները՝ բաց աղբիւրներից

Տպագրություն՝ «ԵՄՄԷ» տպագրատանը
Զեւատրում ու շարուածք՝ Գրիգոր Հակոբյանի

Երկու խօսք

Ձեզ ենք ներկայացնում «Հայ Դատի տարեգիրք 2020»-ը, որը լինելու է ամէնամեայ: Այն համառօտ ամփոփում է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայ Դատի յանձնախմբերի եւ գրասենեակների ցանցի տուեալ տարուայ գործունէութեան կարեւորագոյն աշխատանքները:

2020 թականը հայութեան, Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների համար եղաւ փոթորկալի: Յովսէան Տաւուշեան կռիւները, եւ յատկապէս Սեպտեմբերի 27-ին, Թուրքիայի եւ վարձկան ահաբեկիչների սանակցութեամբ՝ Ադրբեջանի կողմից Արցախի դէմ սանձազերծուած պատերազմը յանգեցրին հազարաւոր մարդկային զոհերի, վիրաւորների, տեղահանուածների եւ տարածքային կորուստների: Հայութիւնը յայտնուեց անբողջապէս նոր իրականութեան, նոր վտանգների ու նոր մարտահրաւէրների առջեւ:

Անբողջ տարուայ ընթացքում, Հայ Դատի յանձնախմբերն ու գրասենեակները ոչ միայն շարունակեցին իրենց նախաձրագրուած աշխատանքները, այլեւ, 44-օրեայ պատերազմով պայմանաւորուած, նոր թափ հաղորդեցին իրենց գործունէութեանը, որը բնականաբար ազդուեց նաեւ տարեսկզբից Covid-19-ով ստեղծուած տեղաշարժի ու հրապարակային հաւաքների սահմանափակումներից եւ մարդկային յարաբերութիւնների նոր իրադրութիւնից:

Ծրագրուած էր 1920 թ. Սեւրի պայմանագրի եւ Հայաստան-Թուրքիա սահմանի մասին ՄՄՆ նախագահ Վուորո Վիլսոնի իրաւարար վճռի 100-ամեակները նշել մեծ հնչեղութեամբ՝ Սեւրից Վաշինգտոն ու Երեւան: Համաւարակն ու 44-օրեայ պատերազմը սահմանափակեցին այդ ծրագրերի իրականացումը:

Տարեգրքում, ինչ-ինչ պատճառներով, տեղ չեն գտել մի քանի երկրների Հայ Դատի յանձնախմբերի, Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի արտաքին յարաբերութիւնների եւ Հայ Դատի համակարգին մաս կազմող երկու հիմնարկների (Երեւանում գործող «Արեւմտահայաստանի եւ արեւմտահայութեան հարցերի ուսումնասիրութեան կենտրոն» [akunq.net], եւ Վաշինգտոնում գրանցուած «Արդարութեան եւ մարդու իրաւունքների իրաւական կենտրոն» [armenianlegal.org]) աշխատանքների ամփոփ զեկոյցները: Այս բացթողումը սրբագրուելու է «Հայ Դատի տարեգիրք 2021»-ում:

Մինչ այդ, կարող էք Հայ Դատի աշխատանքներին հետեւել տարեգրքում նշուած կայքերի եւ սոցցանցերի էջերի միջոցով:

**Հայ Դատի Կենտրոնական գրասենեակ
22 Նոյեմբերի, 2021 թ.**



Հայ Դատի յանձնախմբի հիմնադրությունը

Հ. Յ. Դաշնակցության Հայ Դատի յանձնախմբերն այդ անունով գործում են առաել քան 75 տարի, սկսած 1944 թվականից, սակայն դրանց ակունքներն աելի վաղ ժամանակներից են գալիս: Առաջին աշխարհամարտի աարտին Ամերիկայի Միացեալ Նահանգներում կազմած «Հայաստանի անկախության ամերիկեան կոմիտեն», իսկ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ՝ նաեւ «Հայաստանի Հանրապետության պատիրակությունը» եղել են այն կառույցները, որոնց միջոցով Հայ Յեղափոխական Դաշնակցությունը միջազգային մակարդակով վարում էր քաղաքական, յարաբերական եւ քարոզչական աշխատանքներ՝ յանուն հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչման եւ Հայաստանի անկախության:

Երկրորդ աշխարհամարտի աարտին, 1944 թ. Ամերիկայի Միացեալ Նահանգներում Հ. Յ. Դաշնակցությունը կազմեց Հայ Դատի յանձնախումբ (Armenian National Committee), որը Նիւ Եորքում ունեցաւ գրասենեակ եւ հայ ժողովրդի իրաւունքների ինդիորը ներկայացրեց նորակազմ Միաորած Ազգերի Կազմակերպությանը:

Հայոց Յեղասպանության յիսունամեակի առիթով Ափիաքի բոլոր համայնքներում Դաշնակցությունը կազմեց յատուկ յանձնախմբեր, որոնք էլ այնուհետեւ կոչեցին ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբեր եւ առ այսօր գործում են աշխարհի շուրջ երեսուն երկրներում:

1947 թ. Բոսթոնում, Միսոն Վրացեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Հայրենիք տարեգիրք-տօնացոյց» գրքում լոյս է տեսել հետաքրքիր մի յօդաձ՝ Հայ Դատի յանձնախմբի հիմնադրութեան կապակցութեամբ: Այն ներկայացնում է ժամանակի ազգային-քաղաքական առաջադրանքներն ու Հայ Դատի յանձնախմբի հիմնադրութեան եւ հետագայ գործունէութեան նպատակները: Յօդաձը

նոյնութեամբ ներկայացած է Հայ Դատի Կենտրոնական խորհրդի www.ancnews.info կայքում:

Հայ դատի յանձնախմբերը

Հայ Դատի կառույցը բաղկացած է շուրջ 9 տասնեակի հասնող եւ աշխարհի շուրջ երեսուն երկրում գործող տարածաշրջանային, շրջանային, նահանգային եւ քաղաքային մակարդակների վրայ գործող յանձնախմբերից:

Տարածաշրջանային յանձնախմբեր

Հայ Դատի տարածաշրջանային յանձնախմբերն են Ամերիկայի Միացեալ Նահանգների, Եւրոպայի, Հարաւային Ամերիկայի, Ռուսաստանի, Սերձաոր Արեւելքի յանձնախմբերը, որոնք բոլորն էլ ունեն Հայ Դատի գրասենեակներ:

Շրջանային յանձնախմբեր

Հայ Դատի շրջանային յանձնախմբեր են գործում Կանադայում, Աստրալիայում, ԱՄՆ Արեւմտեան եւ Արեւելեան ափերում, Լիբանանում, Ուրուգվայում, Բրազիլիայում, Աստրիայում, Բելգիայում, Բուլղարիայում, Կիպրոսում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Յունաստանում, Միացեալ Թագաւորութիւնում, Իտալիայում, Նիդերլանդներում, Լեհաստանում, Իսպանիայում, Շեդիիայում, Եգիպտոսում, Երուսաղէնում, Իրանում (Թեհրանում եւ Նոր Ջուղայում), Սիրիայում, Իրաքում, Արաբական Միացեալ Էմիրութիւններում, Քուվէյթում եւ այլուր:

Նահանգային եւ քաղաքային յանձնախմբեր

Հայ Դատի համակարգում նահանգային կամ քաղաքային յանձնախմբեր են կոչւում մեր այն յանձնախմբերը, որոնց գործունէութեան տիրոյթն ընդգրկում է որեւէ պետութեան որեւէ նահանգի կամ քաղաքի տարածքը: Այդպիսի յանձնախմբեր

շատ կան յատկապես Ամերիկայի Միացեալ Նահանգներում եւ Կանադայում:

Հայ Դատի տարածաշրջանային գրասենեակները

Միջազգային քաղաքական կեանքի կարեւոր մայրաքաղաքներում՝ Վաշինգտոնում, Բրիսէլում, Մոսկայում եւ Բէյրութում վերջին տասնամեակներում գործում են Հայ Դատի գրասենեակներ: Դրանք, պայմանաւորաւ գործունէութեան տիրոջ լայն ընդգրկմամբ, Հայ Դատի համակարգում կոչում են տարածաշրջանին գրասենեակներ:

Տարածաշրջանային գրասենեակներից գաւ, Հայ Դատի գրասենեակներ են գործում Նաեւ այլ երկրներում եւ տարածքներում, օրինակ Սիդնէյում, ՄՄՆ Արեւմտեան եւ Արեւելեան ափերում՝ համապատասխանաբար Գլենդէլում եւ Վոթթաունում, Օտտաւայում, Տորոնտոյում, Բուենոս Այրեսում, Փարիզում, Սթենքում եւ այլուր:

Հայ Դատի նպատակներն ու քաղաքական առաջնահերթութիւնները

Երկայուն, պայմանաւորաւ համայն հայութեանը առերեսաւ մարտահրաւիրներով, ՀՅԴ Հայ Դատի քաղաքական-մարտավարական առաջնահերթութիւնները ներառում են հետեւեալ չորս խմբերը:

- ✔ **Արցախեան հիմնախնդիր**
- ✔ **Հայոց Ցեղասպանութեան ճանաչման, դատաւարտման եւ հատուցման գործընթաց**
- ✔ **Միջազգային միջպետական յարաբերութիւններում եւ խորհրդարանական դիւանագիտութեան հարթակներում Հայաստանի Հանրապետութեանն օժանդակութիւն**
- ✔ **Արցախի Հանրապետութեան տարածքային անբողջականութեան վերականգնում եւ անկախութեան ճանաչում**

Հայ Դատի ձեռքբերումները

Հայ Դատի յանձնախմբերի եւ գրասենեակների գործունէութեան արդիւնքում հայկական սփիւռքը ստացաւ ուրոյն քաղաքական դիմագիծ եւ վերած-

ւեց միջազգային յարաբերութիւններում քաղաքական գործօնի:

Միջազգային յարաբերութիւնների եւ սփիւռքերի աշխարհահռչակ բազմաթիւ հետազօտողներ (Յոսի Շէյն, Ռոբերտ Կոհեն, Գ. Շեֆեր, Ս. Հանթինգթոն եւ ուրիշներ) հայկական սփիւռքը դասում են ամենաազդեցիկ լաբբիստական կառոյցներ ունեցող սփիւռքերի շարքին, որոնց քանակն աշխարհում այնքան էլ մեծ չէ: Ընդունաւ է կարծել, որ, օրինակ Ամերիկայի Միացեալ Նահանգներում, հայկական լաբբին իր ազդեցութեամբ զիջում է միայն հրեական լաբբին:

1944 թականի վերջից սկսաւ Հայ Դատի յանձնախմբերի գործունէութիւնը սեփական պետութիւն չունեցող, բայց պետականութեան վերականգնման երազը պահող, ազգային երազանքներ ու նպատակներ ունեցող տարագիր ժողովրդի քաղաքական արդար հաւակնութիւնների ճիչն էր: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնը հասկանալի պատճառներով կաշկանդաւ էր մեր ժողովրդի ազգային շահերի ու նպատակների բարձրաձայնման, դրանց համելու կոնկրետ քայլերի իրականացման գործում: Սյդ պայմաններում մեր ժողովրդի նիւրական նպատակներն ու երազները վառ պահող, մատաղ սերնդի դաստիարակմամբ, երիտասարդութեան քաղաքականացմամբ զբաղող հիմնական կազմակերպաւ ուժը հայկական սփիւռքն էր՝ ի դէմս իր գործունէութեան քաղաքական բաղադրիչի՝ էթնիկ լաբբինգի կան հայկական շահերի պաշտպանութեան կազմակերպութիւնների:

Հայ Դատի ձեռքբերումները քաղաքական հարթութեան վրայ յատկանշեցին Հայոց Ցեղասպանութեան խնդրի միջազգայնացումով, այնուհետեւ միջազգային ճանաչումով, իսկ 1988թ.-ից զուգահեռաբար ձեռքբերումներ գրանցեցին Նաեւ դարաբաղեան շարժման արդիւնքում Արցախի պետութեանն ու ժողովրդին օժանդակութեան աշխատանքներում: Դարաբաղեան հիմնախնդրի՝ հանրային դիւանագիտութեան մակարդակում սպասարկումը դարձաւ Հայ Դատի գործունէութեան անկիւնաքարային առաջադրանքներից մէկը:



Ըստ այդմ առաջարկում ենք, ստորեւ հա-
կիրճ ծանոթանալ Հայ Դատի գործունեության
առանցքային երկու խնդիրների՝ Հայոց Ցեղաս-
պանության միջազգային ճանաչման եւ Արցախի
շահերի պաշտպանության գործում հիմնական
ձեռքբերումներին:

Միջանկեալ նշենք, որ այս ոլորտներում ձեռք
բերած արդիւնքերը նաեւ երախտիքն են Հայաս-
տանի Հանրապետության դիւանագիտական
ներկայացուցչութիւնների, ՀՀ եւ ԱՀ ԱԳՆ կենտրո-
նական ապարատների եւ հայկական սփիւռքի
բազմաթիւ այլ կազմակերպութիւնների, միութիւն-
ների եւ անհատների:

Արցախեան հիմնախնդիր



artsakhforum.org

**Արցախի բարեկամների «Pro Artsakh»
միջազգային ցանցի ստեղծում**

2019 թ. հոկտեմբերի 11-ին Ստեփանակերտում
կայացաւ «Համագործակցութիւն յանուն արդարու-
թեան եւ խաղաղութեան» խորագրով Արցախի բա-
րեկամների համաժողով, որի նպատակն էր ընդ-
լայնել եւ ամրապնդել Արցախի Հանրապետության
ապակենտրոն համագործակցութիւնն օտարերկ-
րեայ պետութիւնների տարբեր շրջանների եւ քա-
ղաքների հետ, նոր ազդակ եւ գործնական բնոյթ
հաղորդել Արցախի արդէն առկայ միջազգային
կապերին, ինչպէս նաեւ ստեղծել Արցախին աջակ-
ցող սուբիեկտներին, քաղաքական եւ հասարակա-
կան գործիչներին միատրոդ միջազգային ցանց:

Համաժողովին նասնակցեցին տարբեր երկր-
ներում գործող Արցախի հետ խորհրդարանական
բարեկամութեան խմբերի եւ շրջանակների, ինչպէս
նաեւ քաղաքական եւ հասարակական կառոյցների
ներկայացուցիչներ, պատիրակութիւններ Արցա-
խի անկախութիւնը ճանաչած կամ Արցախի հետ

համագործակցող օտար պետութիւնների վարչա-
տարածքային միատրոններից. ընդհանուր՝ շուրջ 30
երկրներից աւելի քան 150 քաղաքական-հասարա-
կական գործիչներ եւ մտաւորականներ:

Համաժողովի քննարկումներն անցկացեցին
երկու թեմաների շուրջ.

**ա) «Արցախի ժողովրդի ինքնորոշման
իրատնքը եւ խաղաղ կարգաւորման
գործընթացը».**

**բ) «Արցախի Հանրապետութեան
միջազգային կապերի ընդլայնման
հնարաւորութիւնները սնտեսական,
նշակութային եւ գիտակրթական ոլորտնե-
րում՝ Արցախի մեկուսացմանն ուղղած
Ադրբեջանի քաղաքականութեանը դիմագ-
րաւելու նպատակով»:**

Համաժողովն ընդունեց հռչակագիր, որով յայ-
տարարել է «Պրօ Արցախ» միջազգային ցանց
ստեղծելու նսսին՝ միջազգային հարթակներում
Արցախի նսսին տեղեկացածութիւնը բարձրաց-
նելու, նրա ժողովրդի օրինական շահերը պաշտ-
պանելու, միջազգային գործընթացներում Արցախի
ներգրամանն աջակցելու նպատակով:

Ներկայումս «Pro Artsakh» ցանցի աշխատանք-
ները համակարգում են ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի
Կենտրոնական գրասենեակի կողմից:

**Արցախի Հանրապետութեան միջազգային
յարաբերութիւնների զարգացում**

Արցախի Հանրապետութեան անկախութեան
ճանաչման համար Հայ Դատի յանձնախմբերի եւ
գրասենեակների կողմից կատարում են հսկա-
յածաւալ աշխատանքներ, որոնք թէեւ վերջնարդ-
յունքում չեն հանգեցրել ԱՀ որպէս միջազգային
իրատնքի սովերեն սուբիեկտի ճանաչմանը, այնու-
ամենայնիւ, շօշափում են միջազգային ճանաչման
այլ նսկարդակներ, ինչպիսիք են ապակենտրոն
ճանաչումը, տեղական ինքնակառավարման նսր-
միւնների շրջանակներում ապակենտրոն համագոր-
ծակցութիւնը եւ միջխորհրդարանական յարաբե-
րութիւնները: Կատարած ու յընթացս իրականացող
աշխատանքներն էականօրէն բարձրացնում են Ար-
ցախի Հանրապետութեան միջազգային վարկն ու
հեղինակութիւնը, արտաքին միջավայրում ձեւաւոր-



րուն են հակամարտության օրիելկտի ընկարում եւ հող են նախապատրաստում ԱՀ վերջնական ճանաչման մեկնարկի համար:

Ընդհանրապէս կարելի է առանձնացնել Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանն ուղղած արտաքին քաղաքականութեան որպէս անկախ գործընթացի անշրջելիութեան եւ դրան այլընտրանքի բացակայութեան ցուցիչի երեք ուղղույթին՝

- 1. ապակենտրոն համագործակցութիւն,**
- 2. միջխորհրդարանական դիւանագիտութիւն,**
- 3. ապակենտրոն ճանաչում:**

Արցախի հարցով հայկական լաբբիի աշխատանքային հիմնական ուղղութիւններից մէկը Արցախի եւ աշխարհի տարբեր երկրների բազում համայնքների միջեւ ապակենտրոն համագործակցութեան հաստատմանը նպաստելն ու այդ համագործակցութիւնը զարգացնելն է: Եւան յարաբերութիւնները էականորեն նպաստում են ուղիղ շփումներով պայմանաւորաձ բարեկանական կապերի անրապնդմանը տարբեր ժողովուրդների հետ: Եւան գործընթացները նպաստում են նաեւ Արցախի տեղական ինքնակառավարման համակարգի կայացմանը, ինչպէս նաեւ մշակութային, կրթական, սպորտային եւ առեւտրային տարաբնոյթ ծրագրերի իրականացմանը:

Հայ Դատի յանձնախմբերի ու գրասենեակների աշխատանքների շնորհիւ, ինչպէս նաեւ պե-

տականաշինութեան գործընթացում ձեռք բերած յաջողութիւններով պայմանաւորաձ որոշակի յաջողութիւններ է գրանցել նաեւ ԱՀ միջազգային ճանաչման գործընթացը:

Էական յաջողութիւններ են գրանցել նաեւ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւնների ընդլայնման տեսանկիւնից: Մասնաւորապէս, ներկայումս Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը ի դէմս համատեղ բարեկանութեան խմբերի եւ շրջանակների, միջխորհրդարանական գործակցութիւն ունի Եւրոպական Խորհրդարանի, Ֆրանսիայի Սենատի, Լիտվայի Սէյմասի, Բելգիայի Ֆլամանդախոս եւ Ֆրանսիախոս խորհրդարանների, Կանադայի Հանայնքների պալատի եւ Սատրապիայի Խորհրդարանի միջեւ:

Ինչ վերաբերում է Արցախի եւ աշխարհի տարբեր քաղաքների միջեւ ապակենտրոն համագործակցութեան հաստատմանը, ապա ներկայ դրութեանը Արցախի տարբեր համայնքների հետ միջհամայնքային ապակենտրոն համագործակցութեան յուշագրեր ստորագրած Ֆրանսիական, ամերիկեան, լիբանանեան, իսպանական, բրազիլական քաղաքների թիւը հասնում է շուրջ 25-ի:

Ինչ վերաբերում է ապակենտրոն ճանաչմանը, ապա մինչեւ 2020 թուականի սեպտեմբերի 27-ից սկսած ադրբեջանաթուրքական ագրեսիան, Արցախի Հանրապետութեան անկախութիւնը/ինքնորոշման իրաւունքի իրացումը ճանաչել էին



Բասկերի երկրի խորհրդարանը, ամերիկեան 8 նահանգ, 4 քաղաք, աստրալիական մէկ նահանգ: Սեպտեմբերի 27-ից յետոյ Արցախի Հանրապետութեան անկախութեան ապակենտրոն ճանաչման սակարդակը շեշտակի աւելացաւ՝ ընդգրկելով ամերիկեան ու աստրալիական նահանգների, երոպական շուրջ 30 քաղաքների: Ներկայումս Արցախի Հանրապետութեան անկախութիւնը ճանաչած ամերիկեան նահանգների թիւը 10 է:

Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչում

1925-1923 թթ. Օսմանեան Կայսրութեան կողմից հետեւողականօրէն ծրագրաւորած եւ առանձայատուկ վայրագութեամբ իրականացած Հայոց Յեղասպանութեան փաստը ճանաչել է երեք տասնեակ պետութիւնների եւ բազմաթիւ միջազգային կազմակերպութիւնների կողմից: Հայոց Յեղասպանութիւնը ճանաչած պետութիւնների աշխարհագրութիւնն ու միջազգային կշիռը բաւարար է պնդելու համար, որ միջազգային հանրութեան կողմից թրքական եղեռնագործութիւնը ճանաչուած է որպէս ցեղասպանութիւն՝ բաւարարելով այդ ոճրագործութեան սահմանման համար անհրաժեշտ իրաւաքաղաքական նախապայմանները, որոնք սահմանուած են Ռաֆայէլ Լեմկինի եւ ՄՍԿ-ի կողմից:

Ներկայումս, Հայոց Յեղասպանութիւնը ներպետական իրաւական աստիճանակարգման տարբեր սակարդակներում՝ գլխաւորապէս խորհրդարանական բանաձեւերով, երբեմն գործադիր

իշխանութեան որոշումներով կամ օրէնքով ճանաչել են առաւել քան 30 պետութիւններ:

Հայոց Յեղասպանութիւնը ճանաչել է ՄՍԿ-ի Մովտանգութեան խորհրդի հինգ մշտական անդամներից երեքի՝ Սմերիկայի Միացեալ նահանգների, Ռուսաստանի Դաշնութեան եւ Ֆրանսիայի Հանրապետութեան կողմից:

Հայոց Յեղասպանութիւնը ճանաչել են նաեւ Եւրոպական Խորհրդարանը, Սիրիան, Պորտուգալիան, Իտալիան, Չեխիան, Գերմանիան, Բելգիան, Բրազիլիան, Բուլղարիան, Լիքսենբուրգը, Սատրիան, Դանիան, Չիլի, Վատիկանը, Բոլիւիան, Շեդիան, Արգենտինան, Լիտւան, Լատւիան, Վենեսուելան, Լեհաստանը, Նիդերլանդները, Սլովակիան, Սլովենիան, Կանադան, Ուրուգայը, Շեյցարիան, Լիբանանը, Յունաստանը, Կիպրոսը, Պարագայը, Ուրուգայը:

Հայոց Յեղասպանութիւնը որպէս այդպիսին ճանաչել են շուրջ երկու տասնեակի հասնող միջազգային կազմակերպութիւններ, այդ թում Ֆրանկաֆոնիայի Միջազգային կազմակերպութիւնը, Եւրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը եւ այլն:

ՄՄՆ-ի, Աստրալիայի, Կանադայի, Շեյցարիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Իսպանիայի, Բելգիայի, Սատրիայի, Ուկրայինայի, Մեքսիկայի ընդհանուր առմամբ շուրջ 130 վարչատարածքային միաւորներ նոյնպէս ճանաչել են Հայոց Յեղասպանութիւնը:

Հայ Դատի Կենտրոնական գրասենեակ

Armenian National Committee-International



www.ancnews.info | <https://www.facebook.com/ArmenianNationalCommitteeInternational>

Հայ Դատի Կենտրոնական խորհրդի ղեկավարման ներքոյ Երեանում գործում է Հայ Դատի Կենտրոնական գրասենեակը, որը պատասխանատու է Կենտրոնական խորհրդի որոշումների գործադրման, Հայ Դատի աշխատանքների համադրման, ինչպես նաև ՀՅԴ Բիւրոյի միջազգային յարաբերությունների սպասարկման համար:

Սյդպիսի գրասենեակ անցեալում գործել է Սթենբում, երբ քաղաքական արգելանքների պատճառով Բիւրոյի նստավայրը դեռևս Երեանում չէր:

2020 թ. փետրարի 24-ին Երեանում բացվեց (նկար 1) ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբերի ու գրասենեակների խորհրդաժողովը, որին մասնակցեցին Հայ Դատի աւելի քան 20 յանձնախմբերի շուրջ 50 ներկայացուցիչներ: Փետրարի 25-ից խորհրդաժողովն իր աշխատանքները շարունակեց Ստեփանակերտում (նկար 2), ապա աւարտեց Երեանում:

Հանաժողովի օրակարգը վերաբերում էր Հայ Դատի յանձնախմբերի ու գրասենեակների աշխա-

տանքների բոլոր ուղղութիւններին, ոլորտներին, ինչպէս նաև հայկական շահերի պաշտպանութեան գործիքակազմին:

2020 թ. հեկտեմբերից սկսած ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի Կենտրոնական գրասենեակը պարբերաբար հրապարակում է Հայ Դատի յանձնախմբերի ու գրասենեակների գործունէութեան



Նկար 2




Նկար 1

անփոփազրեր, որոնք լրատամիջոցներին, հասարակական լայն շրջանակներին, սանագիտական ու քաղաքական հանրոյթներին հնարավորութիւն են տալիս կենտրոնացած եւ հաաստի տեղեկատուութիւն ստանալ ՀՅԴ Հայ Դատի համաշխարհային ցանցի գործունէութեան վերաբերեալ, իրագել լինել Սփիւռքի քաղաքական գործունէութեան ընթացիկ արդիւնքներին եւ առաջադրած խնդիրներին: Անսեկան պարբերութեամբ, էլեկտրոնային փաստային համակարգի միջոցով, մեր համակիրներին են տրամադրուած նախորդ ամսայ Հայ Դատի գործունէութեան տեղեկատուներ:

ՀՅԴ Հայ Դատի Կենտրոնական գրասենեակը շուրջ տասնհինգ առցանց հանդիպում-քննարկումներ է ունեցել Հայ Դատի յանձնախմբերի ու գրասենեակների ներկայացուցիչների հետ:

Սերի պայմանագրի 100-ամեակի առիթով, գրասենեակը անգլերէն լեզուով եւ առանձին գրքոյկով հրատարակեց իրաագէտ Սիդա Յովհաննիսեանի իրաագիտական վերլուծութիւնը՝ «Սերի Դաշնագրի եւ Վուդրո Վիլսոնի Իրավարար Վճռի Վաերականութեան Սասին» (On the Validi-



ty of the Treaty of Sevres and the Arbitral Award of Woodrow Wilson)

Հայ Դատի Ամերիկայի յանձնախումբ

Armenian National Committee of America (ANCA)



www.anca.org | www.facebook.com/ancagrassroots

2020թ. ընթացքում Հայ Դատի Ամերիկայի յանձնախումբը (ANCA) շարունակել է ռազմավարական բնոյթ ունեցող քաղաքական առաջնահերթությունների սպասարկման գործողությունները՝ մասնատրապէս՝ Արցախի Հանրապետության պաշտպանությունը, ՄԱՆ-Հայաստան գործընկերության ընդլայնումը, Հայոց Ցեղասպանության մասով արդարության ապահովումը, ՄԱՆ-ի արտաքին օգնության կառուցողական քաղաքականության առաջնությունը, Հայաստանի անվտանգության, Արցախի ինքնիշխանության բարձրացումը, Մերձավոր Արեւելքի հայ համայնքների բարեկեցութեանը սպառնացող խնդիրների յաղթահարումը և այլն:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից սանձազերծած կործանարար պատերազմից և Հայաստանին պարտադրած նոյեմբերի 9-ի հրադադարի յայտարարությունից յետոյ ANCA-ի գործունէութեան հիմնական ուղղություններ դարձան՝

- 1) ՄԱՆ-ի աջակցութեանը Արցախի անվտանգութեան և Հայաստանի ինքնիշխանութեան ընդլայնումը,
- 2) Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը՝ ռազմական հանցագործությունների համար,
- 3) Ադրբեջանի կողմից անօրինականօրէն պահուղ աւելի քան 200 հազար ռազմագերիների ազատ արձակման ապահովումը,
- 4) ՄԱՆ-ի կողմից հրատապ օգնութեան տրամադրումն այն ընտանիքներին, ովքեր զրկւել են տանիքից,
- 5) ՄԱՆ-ի կողմից Ադրբեջանին զէնքի և ռազմական օգնութեան տրամադրման դադարեցումը (նկար 1, 2):

Over 50 U.S. House Members Call for U.S. Sanctions on President Aliyev, Azerbaijani Leaders for War Crimes Committed in Artsakh

Representatives TJ Cox, Brad Sherman, Jim Costa, and Katherine Clark Lead Congressional Letter to Secretary Pompeo.

anca.org

Նկար 1

anca.org/alert

The ANCA calls on the U.S. Congress to immediately take steps to cut all U.S. military aid to the Aliyev regime in Baku and enact broad and overwhelming military and economic sanctions on Turkey. Aliyev's Azerbaijan and Erdogan's Turkey are the modern day sick men of Eurasia - warmongering in the midst of a global COVID-19 pandemic.

-- Raffi Hamparian, ANCA Chairman

Նկար 2



Հայոց ցեղասպանություն

2020թ. ընթացքում ANCA-ն օգտագործեց Կոնգրեսի զույգ պալատների կողմից 2019թ. Հայոց Ցեղասպանության փաստը գրեթե միաձայնօրէն ընդունած բանաձեւերը՝ վերջ դնելու ՄՄՆ գործադիր իշխանության մեղսակցությանը թուրքական ժխտողականության համատեքստում:

Ամերիկայում թուրքական ժխտողականության ուժեղ քարոզի պայմաններում աւելի քան 80 սենատորներից եւ ներկայացուցիչներից բաղկացած երկկուսակցական խումբը սանձակցեց ANCA-ի տեղական, տարածաշրջանային եւ ազգային ծրագրերին՝ արդարություն պահանջելով Թուրքիայի դեռեւ անպատիժ մնացած յանցագործության համար:

Կոնգրեսի առանցքային դաշնակիցների կողմից մեծ աջակցություն ստացած ANCA-ի արշալը յանգեցրեց Կոնգրեսի գրադարանավարուհի դոկտոր Կառլա Հէյդենի որոշմանը, որով «Հայկական կոտորածներ» խորագրով դասակարգած գրքերը եւ այլ ռեսուրսներ սկսեցին նշել որպէս «Հայոց Ցեղասպանություն»: Այս փոփոխության մէջ կարեւոր դեր խաղաց Կալիֆոռնիայի համալսարանը՝ Լոս Անջելեսում ամերիկեան առաջատար հետազոտական գրադարաններից մէկը, որն այդ հարցով նախապէս պաշտօնական դիմում էր ներկայացրել Կոնգրեսի գրադարանին (նկար 3):

ANCA-ն աշխատանքներ է իրականացրել նաեւ Հայոց Ցեղասպանության վերաբերեալ հանրա-

յին կրթվածությունը բարձրացնելու ուղղութեամբ: Մասնատրապէս յանձնախումբը ողջունել է Ներկայացուցիչների պալատի ընդունած 943 բանաձեւը (Never Again Education Act), որը Կրթութեան նախարարութեանը լիազօրում է առաջիկայ 5 տարիների համար ամենամեայ 2 մլն. դոլար դրամաշնորհ տրամադրել Հոլոկոստի կրթութեանը աջակցելու համար: Ներկայացուցիչների պալատի կրթութեան եւ աշխատուժի կոմիտէի նախագահ Բոբի Սքոթին ուղղած նամակում՝ յանձնախումբը կոչ է արել քննարկել հայերի, յոյների, ասորիների, քաղղեացիների, մարոնիտների եւ այլ ժողովուրդների ցեղասպանությունների վերաբերեալ հանրային կրթութեան բարձրացմանն աջակցող փոփոխությունները:

Արցախեան հիմնախնդիր

Հայ Դատի Ամերիկայի յանձնախումբը շարունակել է աշխատանքները՝ նպաստելու Արցախի Հանրապետութեան անվտանգութեան եւ բարգաւաճման գործում ՄՄՆ ներգրաւածութեան ու աջակցութեան մեծացմանը, ինչպէս նաեւ նպաստելու Ադրբեջանի ագրեսիւ վարքը կաշկանդելուն եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում Արցախի կարգավիճակի եւ անվտանգութեան խնդիրները լուծելուն (նկար 4, 5):

Հայաստանի եւ Արցախի դէմ Թուրքիայի եւ Ադրբեջանի յարձակումներին նախորդած ամիսներին Հայ Դատի յանձնախումբը Կոնգրեսում աշխատեց պաշտպանելու Արցախի օգնութեան ծրագիրը՝ կոչ անելով շարունակել Արցախի ականազերծման եւ վերականգնման օժանդակությունը: Արցախին օգնութեան խնդրանքը մաս էր կազմում աւելի քան 100 միլիոն դոլարի նպատակային օգնութեան փաթեթի, որը կ'ուժեղացնէր ՄՄՆ-Հայաստան տնտեսական եւ ռազմական գործընկերությունը եւ աջակցությունը Հայաստանին: 2020 թականի մարտին եւ ապրիլին ՄՄՆ -ի աւելի քան 75 ներկայացուցիչներ եւ 30 սենատորներ արձագանգեցին ANCA-ի կոչերին՝ Կոնգրեսի անդամներին կոչ անելով շարունակել աջակցությունը Արցախի ականազերծման աշխատանքներին:

Յուլիսին ՄՄՆ Ներկայացուցիչների պալատը որոշում ընդունեց Արցախում ականազերծման աշ-



Նկար 3

խատանքները շարունակելու վերաբերեալ ընդունելով Հայ Դատի յանձնախմբի ջանքերով առաջնորդ եւ Կոնգրեսի հայկական հարցերով խմբի համանախագահ Ջեքի Սփեյլերի, խմբի անդամներ Ջոն Քոքսի, Գուս Բիլիրակիսի, Ռայա Քրիստանըֆի եւ նրանց ատելի քան 35 գործընկերների կողմից ներկայացված բանաձեւը:

Հայաստանի եւ Արցախի դէմ ադրբեջանական թուրքական աճող ագրեսիայի պայմաններում ANCA-ն սերտորէն համագործակցեց կոնգրեսական առաջնորդների հետ: 2020 թականի սայիսին, ԱՄՆ ներկայացուցիչների երկկուսակցական խումբը միացաւ Կոնգրեսի հայկական խմբի ղեկավարներին եւ ահազանգեց Ադրբեջանի լայնածաւալ զորավարժութիւնների վերաբերեալ ԱՄՆ ղեկավարներին եւ միջազգային միջնորդներին լուրջ ստահոգութիւններ յղելով, որ գլոբալ համաճարակի պայմաններում Բաքու անխոհեմ գործողութիւնները կարող են ապակայունացնել Կովկասը: 2020 թականի յունիսին սենատոր Ռոբերտ Մենենդէզը Կառավարութեան հաշտտողականութեան գրասենեակից պաշտօնապէս խնդրեց Սենատի Արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովին տրամադրել Ազատութեան աջակցութեան ակտի 907-րդ յօդաձի («907-րդ բանաձեւ») համապատասխանութեան վերաբերեալ սանրաման զեկոյց: Մենենդէզը նաեւ տեղեկատւութիւն խնդրեց Ադրբեջանին ԱՄՆ ռազմական օժանդակութեան վերաբերեալ՝ այն անհանգստութեամբ, որ այդ օգնութիւնը բաականաչափ աճել էր՝ հասնելով ատելի քան 120 մլն. դոլարի՝ վերջին երեք տարիների ընթացքում (մինչեւ 2016-2019թթ.): Յուլիսին, երբ

Ադրբեջանը յարձակում ձեռնարկեց Հայաստանի նկատմամբ, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը ճշող մեծամասնութեամբ ընդունեց Կոնգրեսի հայկական խմբի համանախագահ Ֆրանկ Փալոնի օրէնսդրական փոփոխութեան նախագիծը, որով Կոնգրեսն ատելի մեծ վերահսկողութիւն էր սահմանում ԱՄՆ արտաքին ռազմական օժանդակութեան ծրագրի վրայ:

Արցախի շուրջ ԱՄՆ քաղաքականութիւնը. Ադրբեջանա-թուրքական պատերազմը եւ դրա հետեանքները սեպտեմբերեան յարձակումները եւ դրա հետեանքները

ԱՄՆ Կոնգրեսի արձագանքը 2020 թականի սեպտեմբերին Արցախի եւ Հայաստանի դէմ սանձազերծած պատերազմին բաական արագ էր եւ ուժգին: Սենատի եւ Ներկայացուցիչների պալատի ատելի քան 100 անդամներ պաշտպանեցին Հայ Դատի Ամերիկայի յանձնախմբի կողմից քաջալերած օրէնսդրական երեք նախաձեռնութիւններ, որոնց միջոցով Կոնգրեսը դատապարտեց Թուրքիայի եւ Ադրբեջանի ագրեսիան եւ աջակցեց Արցախի ժողովրդին:

Հոկտեմբերի սկզբին Սենատի եւ Ներկայացուցիչների պալատի մի շարք առանցքային դէմքեր, իրենց վաթսունից ատելի գործընկերների հետ, պետքարտուղար Պոնպէյթին կոչ արեցին վճռական քայլեր ձեռնարկել, դատապարտել Ադրբեջանի եւ Թուրքիայի յարձակումները, վերջիններիս նկատմամբ կիրառել պատժամիջոցներ:

ANCA-ն աջակցեց կոնգրեսական Բրեդ Շերմանի կոչին՝ ուղղած Ադրբեջանի նկատմամբ «Մագ-



Նկար 4



Նկար 5

նիտակու գլոբալ պատժամիջոցների» կիրառմանը՝ ԱՄՆ վարչակազմից պահանջելով սահմանափակել, սառեցնել ադրբեջանական իշխանատուների ֆինանսական ակտիվները եւ սահմանափակել նրանց ճանապարհորդությունները:

Հոկտեմբերին ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոյի եւ Սդրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի հանդիպմանն ընդառաջ՝ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի աւելի քան 50 անդամներ պահանջեցին պատժամիջոցներ կիրառել նախագահ Ալիեյի եւ երկրի ռազմական ղեկավարության դէմ՝ ռազմական յանցագործությունների կատարման համար:

Սդրբեջանա-թուրքական ագրեսիայի ընթացքում ANCA-ն հրապարակային արշաներ սկսեց ամերիկեան եւ միջազգային այն ընկերությունների դէմ, որոնց տեխնոլոգիաներն օգտագործում էր թուրքական անօդաչու թռչող սարքերում: Սյդ արշաները յանգեցրեցին ընկերությունների հրապարակային յայտարարություններին, որոնք պարտաւորում էին վերանայել իրենց վաճառքի հարցերը: ANCA-ի մտահոգությունները կիսում էին Կոնգրեսի առաջնորդները, այդ թում՝ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի հետախուզության յանձնաժողովի նախագահ Դեվին Նոնեսը, ով նոյնպէս ԱՄՆ վարչակազմին կոչ արեց ճնշում գործադրել Թուրքիայի վրայ՝ դադարեցնելու անօդաչուների կիրառությունները:

ANCA-ն նաեւ սերտօրէն համագործակցել է Կոնգրեսի ղեկավարության հետ՝ ապահովելու ԱՄՆ-ի վերաակտիւացումը ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցային գործընթացի շրջանակներում եւ վերանայման ենթարկել Թուրքիայի եւ Սդրբեջանի կողմից Հայաստանին պարտադրած անխոհեմ համաձայնությունը:

ԱՄՆ-Հայաստան յարաբերությունները

2020թ. ANCA-ն փորձել է նպաստել ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության ձեւաւորմանը՝ ընդլայնել առեւտուրը, աւելացնել Հայաստանին տրամադրուղ ամերիկեան օգնությունը, հետագայում զարգացնել փոխշահաւէտ քաղաքական, տնտեսական, անվտանգային, ռազմական եւ

խաղաղապահ համագործակցութիւն, ինչպէս նաեւ ապահովել բարձր մակարդակի երկկողմ այցելութիւնների յաճախականութիւն:

ANCA-ի համար գերակայ առաջնահերթութիւն էր նաեւ ԱՄՆ-ի կողմից Հայաստանին աջակցութիւնը COVID-19-ի դէմ պայքարում: Յանձնախումբը ողջունեց օժանդակութեան նախնական յատկացումները, սակայն հետագայում պահանջեց յաւելեալ 25 միլիոն դոլարի օգնութիւն: Սյդ պահանջին միացան մի շարք կոնգրեսականներ:

Հաշի առնելով պաշտօնական Վաշինգտոնի պահածօր պատերազմի ժամանակ, ինչպէս նաեւ համավարակի դէմ պայքարում Հայաստանին տրամադրած օժանդակութեան չաւելացումը՝ ANCA-ն կոչ արեց վերանայել դեպքում Էին Թրէյսիի դիւանագիտական գնահատականը եւ նրա գործունէութիւնը որակել որպէս ձախողած (սկար 6):

ANCA-ն այլ ուղղութիւններով նոյնպէս շարունակել է աշխատանքներ իրականացնել: Սյդ աշխատանքները վերաբերել են հայ-ամերիկեան յարաբերությունների հասարակական-քաղաքական, տնտեսական եւ բնապահպանական հարցերին:

Թուրքիայի հանդէպ ԱՄՆ քաղաքականութիւնը

2020թ. Հայ Դատի Ամերիկայի յանձնախումբը նպատակ է ունեցել հասասարակչօրել ԱՄՆ-Թուրքիա յարաբերությունները եւ պատասխանատութեան ենթարկել Թուրքիային իր հակամերիկեան գործողությունների եւ բացայայտ թշնամական բնոյթ ունեցող հակահայկական կողմնորոշման համար:



Սկար 6

2020թ. ընթացքում ԱՄՆ-Թուրքիա յարաբերություններն զգալիորէն փոխուեցին. անցում, որը պայմանաւորուած էր եւ արտացոլուեց նաեւ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի գրեթէ միաձայն ընդունուած թիւ 296 (2019 թ. հոկտեմբերին) եւ Սենատի կողմից միաձայն ընդունուած թիւ 150 բանաձեւերով, որոնցով Կոնգրեսը հաստատեց Հայոց Ցեղասպանութեան պաշտօնական եւ շարունակական ոգեկոչումը:

Թուրքիայի ուղղութեամբ յանձնախմբի գործունէութիւնը մեծ նասամբ, համակարգել է յունա-ամերիկեան խմբերի, այդ թում՝ Յունա-ամերիեան առաջնորդութեան խորհրդի (HALC) եւ Ի պաշտպանութիւն քրիստոնեաների (IDC) կազմակերպութեան հետ (նկար 7):

Քաղաքական այլ առաջնահերթութիւններ ներառում էին.

- ✔ **ԱՄՆ գործադիր իշխանութեան կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչում եւ յիշատակութիւն**
- ✔ **ԱՄՆ կողմից Թուրքիայի դէմ պատժամիջոցների կիրառում**
- ✔ **ԱՄՆ պաշտօնական պահանջի ձեւակերպում Թուրքիային՝ յանձնել Էրդողանի թիկնապահներին, որոնք մեղադրում են 2017 թ. նայիսին Վաշինգտոնում բռնութիւններ գործելու համար**
- ✔ **ԱՄՆ կողմից Թուրքիայում տեղակայուած միջուկային զէնքի հեռացում եւ Թուրքիայում ռազմավարական ակտիւնների հետագայ տեղակայման համար արգելքի սահմանում**

✔ Թուրքիայի հետ արտօնեալ առեւտրի հնարաւորութեան կասեցում, քանի դեռ Սնկարան շրջափակման է ենթարկում Հայաստանը եւ ժխտում է Հայոց Ցեղասպանութիւնը:

Երկարաժամկետ հեռանկարում ANCA-ն ձգտում էր ԱՄՆ-ի ճնշմանը Թուրքիայի վրայ՝ դադարեցնելու Հայոց Ցեղասպանութեան համար արդարադատութեանը խոչընդոտելը, դադարեցնելու Կիպրոսի օկուպացիան, վերացնելու Հայաստանի շրջափակումը, դադարեցնելու քրիստոնեաների նկատմամբ հետապնդումները, վերադարձնելու եկեղեցու գողացուած ոմնեցածքը եւ դադարեցնելու քրդերի եւ նրանց ղեկավարութեան նկատմամբ հետապնդումները:

Երիտասարդական ծրագրեր

Հայ Դատի Ամերիկայի յանձնախումբը յստակ նպատակ ունի հզօրացնել ամերիկահայերի յաջորդ սերունդը՝ վերապատրաստելով համալսարանական ուսանողների՝ որպէս հայութեան շահերի արդիւնաւէտ պաշտպանների եւ օգնել նրանց սկսել քաղաքական յաջող կարիերա (նկար 8):

ANCA-ի երկու երիտասարդական կրթական ծրագրերը՝ «Leo Sarkisian Summer Internship Program»-ը եւ «Hovig Apo Saghdejian Capital Gateway Program»-ը շարունակուեցին անխափան իրականացել՝ անցում կատարելով առջանց ռեժիմի: «Leo Sarkisian Summer Internship Program»-ով, տարեկան ութշաբաթեայ ծրագրերի ընթացքում վերապատրաստել են ամերիկահայ համայնքի հարիւրաւոր երիտասարդներ, որոնք ներկայումս զբաղեցնում



Նկար 7



Նկար 8

են պատասխանատու հանգամանքներ (սկար 9): «Leo Sarkisian Summer Internship Program»-ի հարիրաւոր շրջանաւարտներ աշխատում են Սպիտակ տանը, Կոնգրեսում, դաշնային գործակալութիւններում, Հանաշխարհային բանկում, ուղեղային յայտնի կենտրոններում, խոշոր լրատւամիջոցներում եւ այլ շատ յարգած կազմակերպութիւններում:

Երկարաժամկէտ հեռանկարում յանձնախումբը ձգտում է դաստիարակել Կոնգրեսի հայազգի անդամների եւ պաշտօնեաների նոր սերունդ, որը Միացեալ Նահանգների կառավարութեան որոշումների կայացման գործընթացում առանցքային կարեւորութիւն կունենայ:

Օնլայն լաբբինգ

ANCA-ն կտրուկ ընդլայնեց իր հասանելիութիւնը սոցիալական ցանցերում եւ իր արագ արձագանք-գան համակարգի հզօրութիւնը, դրանով առաւել քան երբեւէ հնարաւոր եղաւ կապել հայամէտ ընտրեալ պաշտօնեաներին իրենց ընտրողների հետ:

ANCA-ի արագ արձագանգման ծրագիրը, որն այժմ ունի աւելի քան 50,000 գրանցած մասնակից, հանդիսանում է հայութեան շահերի պաշտպանութեան նորարարական գործիք, ինչը համայնքային ակտիւիստներին հնարաւորութիւն է տալիս իրենց տեղական, նահանգային եւ դաշնային ընտրած պաշտօնեաներին ինքնաբերաբար ուղարկել նպատակային, յարմարեցած հաղորդագրութիւններ՝ ի պատասխան ANCA-ի «գործողութիւնների



6 սրի

ահագանգերի»: Տարեկան կտրածքով, այս խումբը միլիոնաւոր հայանպաստ հաղորդագրութիւններ է յղում իրենց ընտրեալ պաշտօնեաներին:

Աղբրեջանա-թուրքական յարձակումների ընթացքում ANCA-ի արագ կապի համակարգը, որն ներառում է Կոնգրեսի գրասենեակների տեւալները, անգնահատելի արդիւնք ունեցաւ՝ դառնալով ընտրած պաշտօնեաներին հասնելու եւ տեղեկատւութեանը ապահովելու վստահելի գործիք: Այս ծրագիրը, որն աւելացւել է զանգաւածային հաղորդագրութիւնների փոխանցման համակարգով, կենսական նշանակութիւն ունեցաւ Կոնգրեսի հայանպաստ գործողութիւնների ապահովման գործում:



Հայ Դատի Եվրոպայի յանձնախումբ/ Բրիտանի գրասենեակ

European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD)



www.eafjd.eu | www.facebook.com/European.Armenian.Federation

Հայ Դատի Բելգիայի յանձնախումբ

CDCA Belgique – Comité de Défense de la Cause Arménienne



www.facebook.com/HAYTAD.BELGIQUE

«Մոռացած փախստականներ. Ի՞նչ պատահեց Բաքվի հայերի հետ»

2020 թ. փետրվարի 5-ին Եվրոպայի յանձնախումբի տեղի ունեցավ Բաքվի հայ փախստականներին նվիրված «Մոռացած փախստականներ. ի՞նչ պատահեց Բաքվի հայերի հետ» խորհրդածո-

ղովը: Այս թեմային առաջին անգամ էր անդրադարձ կատարում Եվրոպայի յանձնախումբը: Միջոցառումը կազմակերպել էր ՀՀԳ Եվրոպայի Հայ Դատի գրասենեակի եւ ԵՄ-ում ՀՀ առաքելության համատեղ ջանքերով (նկար 1):



Նկար 1

Խորհրդատուները հիարընկալեց Եւրոխորհրդարանի պատգամաւոր Կոստաս Մարիդեք: Բանախօսներն էին Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի նախկին փոխխօսնակ, իր նարդասիրական գործունէութեամբ յայտնի բարոնուհի Քերոլայն Քոքսը, ամերիկահայ գրող, իրաւաբան եւ իրաւապաշտպան Մնա Ստուածատուրեան Թերքոթը եւ Բրիտէլի բաց համալսարանի դասախօս, թարգմանիչ Դաւիդ Բաբայեւը: Բարոնուհի Քոքսին Լոնդոնից ուղեկցում էր Միացեալ Թագաւորութեան Հայ Դատի յաճնախմբի ատենապետ Մներ Սոսկոֆեանը:

Հայոց Ցեղասպանութեան 105-րդ տարելից

Թէեւ կորոնավիրուսի պատճառով հնարաւոր չեղաւ կազմակերպել ոգեկոչման ամենականգանգաձային արարողութիւններ եւ բողոքի ցոյց Թուրքիայի դեպանութեան առջեւ, այնուամենայնիւ Եւրոպայի հայ համայնքները՝ մասնաւորապէս ՀՅԴ Հայ Դատի յաճնախմբերը, կազմակերպեցին ոգեկոչման առցանց միջոցառումներ: Սա ուղերձ էր առ այն, որ նոյնիսկ համաճարակի պայմաններում հայ ժողովուրդը յիշում է Հայոց Ցեղասպանութեան գոհերին եւ պահանջում է ցեղասպանութեան ճանաչում, դատապարտում եւ հատուցում: Ըստ այդմ, ՀՅԴ Եւրոպայի Հայ Դատի գրասենեակը նախաձեռնել էր թային արշաւ, որի նպատակն էր #Justice for the #ArmenianGenocide #Virtualcommemoration կապակցութիւնները «twitter» սոցիալական ցանցում դարձնել ամենատարածած թեմաներից: Այս նպատակով հարիւրաւոր էլ-նամակներ ուղարկեցին Եւրոպայի հայկական կազմակերպութիւններին եւ Եւրոպայում բնակող հայերին:

Արդիւնքում, երեք երկրներում՝ Բելգիայում, Յունաստանում եւ Ֆրանսիայում Հայոց Ցեղասպանութեան թեման Սպրիլի 24-ին դարձաւ ամենատարածած ու քննարկած թեմաներից: Բելգիայում եւ Ֆրանսիայում այն առնուազն 7-րդ ամենատարածած թեման էր՝ ունենալով մօտ 70 հազար հրապարակում: Յունաստանում թեման առնուազն 9-րդ էր: Այսպիսի էլեկտրոնային արշաները Հայոց Ցեղասպանութեան նսաին յիշեցնելու եւ այն եւրոպական օրակարգում պահելու արդիւնաւէտ ձեւերից են:

Եւրոխորհրդարանի մի շարք պատգամաւորներ էլ իրենց ուղերձների միջոցով յարգանքի տուրք մատուցեցին Հայոց Ցեղասպանութեան գոհերին:

Եւրոպայի Հայ Դատի գրասենեակի կողմից քննադատութեան արժանացաւ Եւրոմիութեան պաշտօնական անդրադարձը՝ Հայոց Ցեղասպանութեան տարելիցի առթիւ:

Ի տարբերութիւն նախորդ տարիների (2016-2019), 2020 թ. Հայաստանում ԵՄ պատիրակութեան «twitter»-եան գրառման մէջ չօգտագործեց «ցեղասպանութիւն» եզրը: Այս հիւսաթափեցնող փաստի առիթով՝ Եւրոպայի Հայ Դատի գրասենեակը բաց նամակ յղեց Հայաստանում ԵՄ պատիրակութեան ղեկավար դեսպան Վիկտորինին:

Արցախի ընտրութիւններ

Եւրոպայի Հայ Դատի գրասենեակն ամիսներ շարունակ Արցախի խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններին միջազգային դիտորդական առաքելութիւն կազմակերպելու յարց աշխատանքներ էր տարել (նկար 2): Առաքելութիւնը պէտք է կազմած լինէր երեք խմբից՝ 1) միջազգային փորձառու դիտորդներից բաղկացած 10 հոգանոց խումբ՝ եւրոպական 8 երկրներից 2) մօտ մէկ տասնեակ քաղաքական գործիչներից կազմած խումբ եւ 3) լրագրողական խումբ: Սակայն, համաժարակով պայմանաւորաւ իրավիճակից ելնելով կայացեց դիտորդական առաքելութիւնը չեղարկելու վերաբերեալ դժուարին որոշում:



Նկար 2

Երոպայի Հայ Դատի գրասենեակի չեղարկած միջոցառումներ

Կորոնավիրուսի պատճառով ստեղծած առողջապահական ճգնաժամից ելնելով՝ ՀՅԴ Երոպայի Հայ Դատի գրասենեակը չեղարկեց եւս երեք միջոցառումներ:



Չեղեալ է յայտարարել նաեւ աւանդաբար մայիսին Բրիաչիում անցկացող Տերվուրէն փողոցի տօնը, որի ընթացքում Հայ Դատի գրասենեակը, համագործակցելով Հայ Օգնութեան Միութեան Բեզիայի մասնաճիւղի հետ, պէտք է ներկայացնէր Արցախը, մասնատրապէս Արցախի թէյերը եւ աւանդական աղանդերները: Ապրիլի վերջին Երոխորհրդանում պէտք է տեղի ունենար «Armenia. Reinventing a Future» ցուցահանդէսը: Ցուցահանդէսը նիւրած էր վերջին տասնամեակներում Հայաստանի ձեռքբերումներին եւ զարգացմանը: Երոպայի Հայ Դատի գրասենեակը պէտք է ներկայացնէր բարձրագոյն տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի նաւաւները եւ դրանց կիրառումը անվճար արտադարոցական կրթութեան մէջ: Ցուցահանդէսի կազմակերպչական աշխատաւքներում գրասենեակը համագործակցում էր «AGBU Europe»-ի հետ: Սակայն, համաճարակի պատճառով Երո-

խորհրդարանը անորոշ ժամակակով յետաձգեց բոլոր միջոցառումները, այդ թում Երոպայի Հայ Դատի գրասենեակի հետ նախատեսած միջոցառումը:

Հայաստանի անկախութեան 102-րդ ամեակը

Հայաստանի Հանրապետութեան հռչակման առթիւ Երոպայի Հայ Դատի գրասենեակի կազմակերպմանը՝ Երոպայում Հայ Դատի յանձնախմբերի ղեկավարները շնորհատրանքներ են յղել աշխարհասփում հայութեանը:

20-րդ դարակզբին Հայաստանի Առաջին Հանրապետութեան ժողովրդավարական եւ առաջադէմ մի շարք բարեփոխումները Երոպական հասարակական-քաղաքական շրջանակներին ներկայացնելու համար հրապարակել ու լայնօրէն տարածել են քարոզչական բնոյթի պաստաւքներ (նկար 3-6):

Թիրախային պայքար Էրդողանի դէմ

Պայմանատրած Թուրքիայի նախագահ Ռեջեք Էրդողանի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչման համար պայքարողների, այն է՝ Հայ Դատի յանձնախմբերի դէմ հնչեցած սպաւռնալիքներով, Երոպայի Հայ Դատի յանձնախումբն արշաւ հրականացրեց ընդդէմ Թուրքիայի նախագահի: Երոպայի Հայ Դատի գրասենեակը յայտարարութեանը հանդէս եկաւ հայերէն եւ անգլերէն լեզուներով, որը լայն արձագանգ ստացաւ մանուրում:



Նկար 3



Նկար 4



Նկար 5



Նկար 6





Սկար 7

Միեւնոյն ժամանակ Եւրոպայի Հայ Դատի յանձնախմբերը գրութիւններ յղեցին իրենց երկրների օրէնսդիր նարմիններին՝ տեղեկացնելով Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման համար պայքար մղողների դէմ պետական մակարդակով սպառնալիքների մասին:

Քարոզչական եւ տեղեկատուական աշխատանք՝ հայ-ադրբեջանական յոլիսեան բախումների օրերին

Հայկական կողմի քարոզչական յաղթանակ կարելի է համարել ՀՅԴ Եւրոպայի Հայ Դատի գրասենեակի ջանքերով Եւրոխորհրդարանի 29 պատգամաւորների (այդ թւում ԵԽ երեք փոխնախագահներ) նամակը՝ ուղղած Եւրոյանձնաժողովի փոխնախագահ ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգութեան քաղաքականութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Ջոզէֆ Բորէլին (նկար 7): Նամակում նրանք շեշտում են, որ Եւրոմիութիւնը պէտք է օգտագործի իր լծակները տարածաշրջանում վստահութեան անրապնդման իրական եւ արդիւնաւետ միջոցներ գործի դնելու համար եւ կոչ են անում Ադրբեջանի իշխանութիւններին կիրառել ԵԱՀԿ-ի հրադադարի խախտումների հետաքննութեան մեխանիզմը:

Եւրոպայի Հայ Դատի յանձնախումբը տեղեկատուական արշաւ կազմակերպեց եւ ահազանգող նամակներ յղեց Եւրոպատգամաւորներին՝



Սկար 8

տեղեկացնելով Ադրբեջանի կողմից միջուկային ահաբեկչութեան սպառնալիքների, Հայաստանի տարածքային անբողջականութիւնը խախտող ռազմական ագրեսիայի եւ տարածաշրջանի կայունութիւնը վտանգող քաղաքականութեան մասին:

Եւրոպայի Հայ Դատի յանձնախմբի տեղեկատուական աշխատանքի շնորհիւ Եւրոխորհրդարանի մի շարք պատգամաւորներ հրապարակումներ կատարեցին՝ յորդորելով դադարեցնել ռազմական ագրեսիան եւ կոչ անելով Ադրբեջանին համաձայնել կիրառել ԵԱՀԿ հրադադարի վերահսկողութեան մեխանիզմները:

Սերի դաշնագրի հարիւր ամեակը

Եւրոպայի Հայ Դատի գրասենեակը կազմակերպեց Սերի դաշնագրի ստորագրման 100-ամեակի եւ դրա արդիականութեան վերաբերեալ Հայ Դատի յանձնախմբերի ներքին քննարկում (նկար 8):

Բացի վերինարից, պայմանագրի ստորագրման օրը գրասենեակը հրապարակեց նաեւ Հայ Դատի յանձնախմբի նախագահ Գասպար Կարապետեանի հետ հարցազրոյց: Հրապարակեց նաեւ Սերի



Սկար 6

դաշնագրի վերաբերեալ երկու տեղեկատուական պատահա: Բացի այդ, «Ֆէյսբուք»-ում տարածուեց պայմանագրի 100-ամենակին նւիրած շրջանակ, որն օգտատէրերը կարող էին տեղադրել իրենց հիմնական նկարի շուրջ (նկար 9):

Եվրոպայի Հայ Դատի յանձնախմբի աշխատանքը՝ Արցախի Անկախութեան տօնի առիթով

Արցախի Հանրապետութեան Անկախութեան 29-րդ տարելիցի առիթով ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի յանձնախումբը աշխատանք կատարեց, որպէսզի տարբեր եվրոպական երկրների քաղաքական եւ հասարակական գործիչներ հանդէս գան շնորհատրական ուղերձով:

Արդիւնքում՝ բաաականին մեծ թով քաղաքական գործիչներ հրապարակումներով հանդէս եկան: Նրանցից էր, օրինակ, Եվրոխորհրդարանի կիարացի պատգամաւոր Դեմիտրիս Պապադակիսը «twitter»-ում շնորհատրեց Արցախի ժողովրդին՝ Անկախութեան հռչակման 29-ամենակի առիթով՝ նշելով, որ Արցախի ժողովրդին իր պատմական հայրենիքում իրագործել է ազատութեան իր հիմնարար իրատները:

Հայ Դատի Եվրոպայի գրասենեակի գործունէութիւնը՝ Արցախեան երկրորդ պատերազմի ընթացքում:

Հանաներոպական մակարդակ

Եվրոպայի Հայ Դատի յանձնախումբը լայնածաւալ աշխատանք կատարեց Եվրոխորհրդարանի 2020 թ. հոկտեմբերի 7-ի լիագումար նիստում Արցախեան պատերազմի շուրջ քննարկմանն ընդառաջ: Տեղեկատուական շարունակական աշխատանք է կատարել անհատական պատգամաւորների եւ իրենց օգնականների հետ: Արդիւնքում՝ պատգամաւորների ճնշող մեծամասնութիւնը՝ բոլոր քաղաքական խմբերից, յստակօրէն եւ խիստ կերպով դատապարտեցին Թուրքիայի դերը հականարտութեան սրացման մէջ, ինչպէս նաեւ Ադրբեջանին աջակցութիւն ցուցաբերելու համար: Ելոյթ ունեցող 60 պատգամաւորից միայն հինգն իր աջակցութիւնը յայտնեց Ադրբեջանին: Բոլոր հինգ պատգամա-

ւորները նախկինում Ադրբեջանի հետ սերտ կապեր են ունեցել, որոշները՝ նեղ անձնական շահեր:

Գրասենեակի կօօրդինացիոն աշխատանքի շնորհիւ 24 եվրոպատգամաւորներ գրաւոր հարցում յղեցին Եվրոմիութեան խորհրդի նախագահ Շաւլ Միշէլին՝ հարցնելով, թէ արդեօ՞ք ԵՄ-ը պատրաստում է պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի դէմ եւ թէ ի՞նչ քայլեր է պատրաստում ձեռնարկել ԵՄ խորհուրդն Ադրբեջանի դեկաւարութեան նկատմամբ ճնշում գործադրելու համար, որպէսզի վերջինս դադարեցնի ռազմական գործողութիւնները եւ Արցախից դուրս բերի իր զօրքերը:

48 հոգուց բաղկացած Եվրոպատգամաւորների մէկ այլ խումբ էլ նամակ յղեց Եվրոմիութեան Բարձր ներկայացուցիչ ժոզէֆ Բորէլին՝ խիստ զայրոյթ յայտնելով Արցախի խաղաղ բնակչութեան նկատմամբ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի վերաբերեալ եւ կոչ անելով կոնկրետ քայլեր ձեռնարկել այս ուղղութեամբ եւ իրականացնել բովանդակային գործողութիւններ (նկար 10, 11):

Պատերազմի առաջին օրերից Եվրոխորհրդարանի եւ այլ խորհրդարանների պատգամաւորներ, քաղաքական գործիչներ սոցիալական ցանցերում հրապարակումներ կատարեցին՝ իրենց աջակցութիւնը յայտնելով Արցախի բնիկ հայ ազգաբնակչութեանը եւ դատապարտելով ադրբեջանաթորքական տանդեմի յարձակումը: Սյս հրապարակումների մի կարեւոր մաս Եվրոպայի Հայ Դատի գրասենեակի լաբբիստական եւ տեղեկատուական աշխատանքի արդիւնք է:

Պատերազմի անրողջ ընթացքում եւ աւարտից յետոյ, Եվրոպայի Հայ Դատի գրասենեակը հանգամանալից եւ փաստարկած նամակներ տարա-



Նկար 10



Նկար 11

ծեց Եվրոխորհրդարանում՝ խորհրդարանականներին հաաստի տեղեկություններ հաղորդելով պատերազմի, վարձկան ահաբեկիչների, Թուրքիայի և Սղրբեջանի վայրագ ռազմական յանցագործությունների և ստեղծած հումանիտար աղէտի վերաբերեալ:

Գրասենեակը նաեւ ակտիւ կերպով մասնակցեց հայկական ցոյցերի կազմակերպմանը, Բրիւսէլում տեղի ունեցած երկու ցոյցերի ընթացքում գրասենեակի ներկայացուցիչները հանդէս եկան ելոյթներով: Գրասենեակի հրաւերով ցոյցերին մասնակցեցին Բելգիայում Արցախի հետ ֆրանսախօս եւ ֆլամանդական բարեկանութեան խմբերի անդամները, ինչպէս նաեւ Եվրոխորհրդարանի պատգամատուրներ՝ Ֆրանսուա Ալֆոնսին, Պիտէր Վան Դալենը եւ Կոստաս Մարիդէսը, որոնք հանդէս եկան ելոյթներով եւ իրենց աջակցութիւնը յայտնեցին հայութեանը:

Նոյեմբերի 10-ին Եւրոպայի Հայ Դատի գրասենեակի զինադադարի յայտարարութեան կապակցութեամբ տարածեց յայտարարութիւն, որով մերժեց ընդունել այդ յայտարարութեան դրոյթները:

Արդէն նոյեմբերի 14-ին Եւրոպահայ ասեւի քան 100 կազմակերպութիւններ կոչ արեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին կրկին ներգրասել

Լեռնային Դարաքաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացում՝ վերանայելով ներկայիս յայտարարութիւնը, որը ստորագրուել է առանց ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահներից երկուսի՝ ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի:

Բելգիական մակարդակ

Համագործակցելով ՀՅԴ Եւրոպայի Հայ Դատի գրասենեակի հետ եւ Բելգիայի Հայ Դատի յանձնախմբի ջանքերով Բելգիայում Արցախի հետ ֆրանսախօս, ինչպէս նաեւ հոլանդախօս բարեկանութեան խմբերը շնորհատրական նամակներ ուղղեցին Արցախի նորընտիր նախագահ Արայիկ Յարութիւնեանին: Նամակում նրանք նշում էին, որ շատ լաւ գործնական յարաբերութիւններ էին հաստատել Արցախի նախկին իշխանութիւնների հետ եւ իրենց պատրաստակամութիւնն են յայտնում համագործակցութեան բարձր մակարդակը պահպանել Արցախի նորընտիր իշխանութիւնների հետ եւ: Բարեկանութեան երկու խմբերի անդամները նաեւ շեշտում էին, որ Արցախի ընտրած ներկայացուցիչների մասնակցութիւնը հակամարտութեան կարգաւորման բանակցութիւններին անհրաժեշտ է եւ վճռորոշ: Նրանք նաեւ ափսոսանք էին յայտնում, որ համաճարակի պատճառով չեն կարողացել ֆիզիկապէս ներկայ գտնուել ընտրութիւններին, քանի որ Եւրոպայի Հայ Դատի գրասենեակի կազմակերպած դիտորդական առաքելութիւնը, ինչպէս նշեց, ցաօք չեղարկուել էր:

Հայ Դատի Բելգիայի յանձնախումբը մեծ դերակատարում ունեցաւ ինչպէս պատերազմի ընթացքում, այնպէս էլ յուլիս ամսին սահմանային լարման



Նկար 12



Նկար 13



Նկար 14

օրերին Բրիաէլում անցկացած ցոյցերի կազմակերպման գործում:

Ռազմական գործողութիւնների ընթացքում Բելգիայում Արցախի հետ բարեկամութեան ֆրանսախօս շրջանակը յայտարարութիւն տարածեց՝ շնորհատրելով 29 տարայ կայուն եւ ակտիւ ժողովրդավարութեան համար «ինչը տարածաշրջանային խաղաղութեան համար լուրջ ներդրում է»: Շնորհատրական հրապարակումներ են կատարել նաեւ Բելգիայի Սենատի եւ Ֆլամանդական Խորհրդարանի մի շարք անդամներ:

Արցախի ժողովրդի դէմ սանձազերծած պատերազմի առաջին օրերին գրասենեակի ջանքերով Արցախի հետ Բելգիայի երկու բարեկամութեան խմբերը հանդէս եկան յայտարարութիւններով՝ իրենց մտահոգութիւնը յայտնելով մասնատրապէս խաղաղ բնակչութեանը թիրախատրելու Ադրբեջանի մարտավարութեան եւ համակարտութիւնում Թուրքիայի անթոյլատրելի ներգրաւածութեան առնչութեամբ: Պատերազմի ընթացքում այս երկու խմբերի, մասնատրապէս նրանցում ընդգրկած պատգամատրներին հետ աշխատանքի շնորհիւ հոկտեմբերի 15-ին Բելգիայի Ֆլամանդա-

կան խորհրդարանն ընդունեց մի բանաձեւ, որում դատապարտում է Ադրբեջանի ռազմական գործողութիւնները, քննադատում է Թուրքիային՝ իր մասնակցութեան եւ ջիհադիստ վարձկանների տարածաշրջան տեղափոխելու համար: Բանաձեւի նախաբանում հանգամանալից ներկայացում է Արցախի Հանրապետութեան եւ հակամարտութեան բաւականին լաւ ներկայացած նախապատտութիւնը (նկար 12):

Բելգիայի Դաշնային խորհրդարանը պատերազմի վերաբերեալ բանաձեւ ընդունեց միայն յունարի 21-ին, թէեւ գործընթացը սկսել էր բաւականին վաղ: Բանաձեւի համահեղինակներից մէկը ժորժ Դալեմանն էր, ով Երոպայի Հայ Դատի գրասենեակի միջոցով պատերազմի վերջին օրերին այցելել էր Արցախ:

Այս բարեկամութեան խմբերի հետ սերտ համագործակցութեան արդիւնքում, բելգիական ամենաազդեցիկ օրաթերթերում երեք բաց-նամակ հրապարակեց՝ ի պաշտպանութիւն Արցախի եւ հայ ժողովրդի: Դրանցից մէկը ստորագրած էր մէկ տասնեակից աւելի հասարակական, քաղաքական գործիչների, լրագրողների, դասախօսների կողմից:

Հայ Դատի յանձնախմբի ջանքերով 32 ֆրանսախօս բելգիական քաղաքական եւ հասարակական գործիչներ Բելգիայի ամենահեղինակատր պարբերաթերթի մէջ հրապարակեցին յայտարարութիւն, ըստ որի միջազգային հանրութեան կողմից Արցախի Հանրապետութեան ճանաչումը նախապայման է եւ ամենաարդիւնաւէտ միջոցը






Cercle d'amitié francophone belge avec la République d'Artsakh (Nagorno-Karabagh)

H.E. Mr. Arayik Harutyunyan
President of Artsakh Republic

Your Excellency,

On behalf of the Cercle d'Amitié Artsakh - Francophonie belge, we would like, as current and former Members of the Belgian Federal and Brussels Parliament and former Rector of the Université Catholique de Louvain, but most of all as friends of Artsakh, convey you and the people of Artsakh this message of heartfelt congratulations on the occasion of the 29th Independence Day.

« Heartfelt congratulations to the Republic of Artsakh for 29 years of steady and lively democracy which is a major contribution to peace in the region ».

« Toutes nos félicitations chaleureuses pour ces 29 années de démocratie vivante et stable qui apportent une contribution majeure au processus de paix dans la région ».

Best regards to you, Mister President, and the people of Artsakh, and we hope to be able to come back soon to your beautiful country and generous people,

André du Bus, President of the Cercle d'Amitié and former Brussels MP
Georges Dallemagne, federal MP
Emmanuel De Bock, Brussels MP
Hervé Doyen, Mayor of Jette and former Brussels MP
Pierre Kopsany, Mayor of Ganshoren and Brussels MP
Simone Sesskind, former Senator and Brussels MP
Serge de Patoul, former Brussels MP
Joey Dubil, former Brussels MP and journalist
Fatoumata Sidibé, former Brussels MP and artist
Bernard Coulia, former Rector of Université Catholique de Louvain
Julie de Groot, former President of the Brussels Francophone Parliament

Նկար 15



Նկար 16

Արցախի բնակչության պաշտպանությունն ապահովելու համար: Նրանք կոչ էին անում Բելգիային եւ Եվրոմիութենը յստակօրէն դատապարտել թուրք-ադրբեջանական յարձակումը Արցախի վրայ:

Եվրոպայի Հայ Դատի գրասենեակի նախաձեռնութեամբ եւ կազմակերպական ծաւալուն աշ-

խատանքի արդիւնքում, տարբեր առաջատար լրատւամիջոցներ ներկայացնող լրագրողների երկու պատիրակութիւններ մեկնեցին Արցախ՝ լուսարանելու ադրբեջանաթուրքական ոճրագործութիւնները եւ ներկայացնելու արցախցիների կացութիւնը: Գրասենեակի ջանքերով եւ ուղեկցութեամբ նաեւ բելգիական քաղաքական գործիչների երկու խումբ մեկնեց Արցախ՝ պատերազմի ընթացքում եւ աւարտից յետոյ: Երկրորդը ներկայ եւ նախկին քաղաքական գործիչներից կազմած Արցախի հետ Բելգիայի ֆրանսախօս բարեկամութեան խումբն էր, այցի ընթացքում խմբի անդամներն իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին ներդրում ունենալու տարբեր ոլորտների վերակառուցման աշխատանքներում (նկար 13-16):

Հայ Դատի Ռուսաստանի յանձնախումբ/Մոսկվայի գրասենեակ Армянский Национальный Комитет России



www.proarmenian.ru | www.facebook.com/haydatmoscowoffice

ՀՅԴ Հայ Դատի Մոսկվայի գրասենեակի հովանու ներքոյ իրենց գործունեությունն են ծառայում «Պրո-Արմենիա» տեղեկատվական վերլուծական կենտրոնն ու Հայ Դատի բարեկամների ակումբները: Գրասենեակն ունի պաշտօնական կայքէջ, ինքնուրույն ալիք, երիտասարդական կենտրոն եւ տեսանկարահանման ստուդիա: Մոսկվայի գրասենեակը 2020 թականին ակտիվ գործունեություն է ծառայել ինչպէս Հայ Դատի օրակարգային խնդիրների լուծման, այնպէս էլ Ռուսաստանի Դաշնությունում հայության համախմբման եւ շահերի պաշտպանության ուղղություններով:

Մասնավորապէս, 2020 թականի յունւարի 28-ին գրասենեակի նախաձեռնութեամբ Մոսկվայում մեծ շուքով նշուց Հայոց Բանակի օրը, որին մասնակցեցին ինչպէս ՌԴ տարբեր քաղաքներից, այնպէս էլ Հայաստանից ժամանած հիւրեր: Փետրւարի 27-ին գրասենեակի նախաձեռնութեամբ Մունգայիթի գոհերի յիշատակին նւիրած խաչքարի մօտ կազմակերպուց խնկարկման եւ պատկերադրութեան արարողություն, նոյն օրը կազմակերպուց ստորագրահաւաք եւ թուով 12 դեսպանատներ ուղարկուցին Մունգայիթի ցեղասպանական ջարդերի դատապարտման պահանջագրեր: Փետրւարի 28-ին Հայ Դատի Մոսկվայի գրասենեակում կազմակերպուց կլոր սեղան՝ «Սովորական ցեղասպանություն: Մունգայիթի եւ Բաքւի Եղեռնագործությունները» խորագրով (նկար 1):

Փետրւար ամսին Հայ Դատի Մոսկվայի կենտրոնում կազմակերպուց հանրային քննարկում, որի ընթացքում ներկայացուց Արցախում կազմակերպուած Հայ Դատի խորհրդատուական արդիւնքները,

վեր բարձրացած հարցերն ու Մոսկվայի գրասենեակի եւ յանձնախմբի յանձնառությունները: Քննարկմանը, որին մասնակցում էին նաեւ մի շարք գործընկերներ, որոշում կայացուց ձեռնարկել համագործակցային նոր հարթակ, որը պիտի ընդլայներ գրասենեակի գործունեութեան շրջանակները: Այս աշխատանքներին զուգահեռ հիմնադրուց «Պրո-Արմենիա» հեռուստաստուդիան, որը 2020 թականին հիւրընկալել է տասնեակ ռուս քաղաքական գործիչների եւ նրանց հայամէտ դիրքորոշումները տարածել ռուսախօս հասարակութեան շրջանում, լուսաբանել բազմաթիւ միջոցառումներ եւ գործընթացներ: Հեռուստաստուդիային զուգահեռ գործարկուց նաեւ www.pro-armenia.ru համառուսատանեան երկլեզու տեղեկատվական պորտալը:

Մարտ-ապրիլ ամիսներից սկսած Ռուսաստանի Դաշնությունում սահմանուցին խիստ ինքնամեկուսացման եւ անցագրային ռեժիմներ, ինչի հետեւանքով արտագնայ աշխատանքի մեկնած հազարաւոր հայրենակիցներ յայտնուցին փողոցում, առանց սպրոստի միջոցի եւ կացարանի: Հայ Դատի գրասենեակը առաջին իսկ օրից իր բոլոր ռեսուրսները ուղղեց խոցելի վիճակում յայտնուած մեր հայրենակիցների յայտնաբերման, կացարանով եւ անդով ապահովման եւ, ի վերջոյ Հայրենիք փոխադրման խնդիրների լուծմանը: Այդ օրերին գրասենեակի կանաւորները այն եզակի անձանցից էին, ովքեր հերթապահություն էին սահմանել հաւաքակայանի վերածուած «Դոմոդեդովօ» օդանաւակայանում եւ օրական տասնեակ շահառուների էին տեղափոխում ժամանակաւոր կացարաններ: Աշխատանքների արդիւնաւէտութիւնը



բարձրացնելու նպատակով ՀԳ գրասենեակի եւ Հայ Օգնության Միության Մոսկայի սամանաճիղի նախաձեռնությամբ, հիմնադրուեց «Ալպաէն» համառուսաստանեան բարեսիրական շարժումը, որը հունանիտար աջակցութիւն տրամադրեց սոցիալապէս անապահով անեղի քան 500 ընտանիքների:

Ապրիլի 24-ի նախընթաց շրջանում, թէեւ կարանտինի պայմաններում հնարաւոր չէր մասսայական միջոցառումների անցկացումը, գրասենեակը կազմակերպեց Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ առցանց քննարկում, ինչպէս նաեւ հարիւրաւոր կանաւորներ նամակներ յղեցին Ռուսաստանում Թուրքիայի դեսպանատանը պահանջելով ճանաչում եւ հատուցում: Սյր ակցիաներին մասնակցութիւն ցուցաբերեցին նաեւ բազմաթիւ ռուսաստանցի գործիչներ:

Յունիս եւ յուլիս ամիսներին Հայ Դատի Մոսկայի գրասենեակի նախաձեռնությամբ հիմնադրուեց Ռուսաստանի հայկական կազմակերպութիւնների համագործակցութեան «Ալիանս» հարթակը, որին իրենց մասնակցութիւնը բերեցին անեղի քան քառասուն հասարակական-քաղաքական կազմակերպութիւններ եւ միութիւններ: «Ալիանս»-ի կարեւոր ձեռքբերումներից էր հասարակական դաշտի համախմբումն ու նոր գործիչների ի յայտ բերումը, ինչպէս նաեւ հայկական շրջանակներում փոխադարձ անհանդուրժողականութեան վերացումը: Համագործակցութեան շրջանակներում «Ալիանս»-ի մասնակից կազմակերպութիւնների անունից կատարել է աղբրեջանական ազրեսիան դատապարտող մի քանի քաղաքական յայտարարութիւններ, ինչպէս նաեւ Ռուսաստանի իշխանութիւններին ուղղած կոչեր՝ կանխելու աղբրեջանական տարբեր շրջանակների կողմից հայատեացութեան քարոզն ու ազրեսի գործողութիւնները: Իսկ Տաւուշեան դէպքերի ժամանակ տարածել է աղբրեջանական ազրեսիան դատապարտող երկու ուղերձ-յայտարարութիւն՝ տասնեակ հայկական կազմակերպութիւնների ստորագրութեամբ:

Տաւուշեան իրադարձութիւնների ժամանակ գրասենեակի եւ յանձնախմբի ներկայացուցիչները մասնակցել են բազմաթիւ քաղաքական հանդիպումների, աշխատանքներ տարել Ռուսաստանում

հանրային կարծիքի ձեւաւորման եւ հակահայկական քարոզչութեան կանխման ուղղութեամբ: Գործընկերութեան շրջանակներում ձեւաւորել է նաեւ տեղեկատուական-վերլուծական յանձնախումբ, որի կազմում ներգրաւել են մի շարք հեղինակաւոր եւ ազդեցիկ փորձագէտներ: Շնորհիւ կատարած աշխատանքների հնարաւոր դարձաւ ռուսաստանեան հանրութեանը ներկայացնել օբիեկտիւ տեղեկատուութիւն իրադարձութիւնների վերաբերեալ եւ կանխել հակահայ դրսեւորումները առաւելապէս այն շրջաններում, որտեղ մեծ է աղբրեջանական համայնքի ազդեցութիւնը:

Սյր օրերին Մոսկայում սկիզբ առած այսպէս կոչւած «Ժիրանեան պատերազմ» անունը կրող հայաղբրեջանական բախումները լուրջ վտանգ էին ներկայացնում վերաճելու ազգամիջեան բախումների: Սրղէն իսկ տեղի էին ունեցել մի քանի բռնութիւններ հայերի նկատմամբ, հայերին պատկանող անշարժ եւ շարժական գոյքերի վնասարարութիւն, ատելութեան եւ բռնութեան քարոզ: Աղբրեջանցիներին պատկանող շուկաներում արգելել էր հայկական տաղաւարների աշխատանքը, հայկական ապրանքների վաճառքն ու հայկական պետհամարանիշերով մեքենաների մուտքը առետրի կենտրոններ: Աղբրեջանի կողմից ուղղորդող բռնութեան քարոզը տարածում էր նաեւ իսլամադաւան այլ շրջանակներում եւ վտանգ կար, որ հայատեացութիւնը կարող է տարածել նաեւ տարածքներում եւ հասնել անկառավարելի մասշտաբների: Սյր օրերին գրասենեակի պատասխանատուները ունեցել են մի շարք հանդիպումներ ՌԳ իշխանութիւնների ներկայացուցիչների հետ, զուգահեռաբար աշխատանքներ են տարել հայկական շրջանակների



Սկայ 1

հետ՝ նպատակ ունենալով կանխելու հնարատր անկանխատեսելի զարգացումները, իրաական աջակցություն ցուցաբերելու բախումների արդիւնքում կախնաւորաձ երիտասարդներին, ինչպէս նաեւ կազմակերպելու կանխարգելիչ միջոցառումներ բոլոր այն շրջաններում, որտեղ առկայ էր բախումների բռնկման նոր վտանգ: Մյո օրերին Հայ Դատի գրասենեակը մշտապէս իր անվերապահ աջակցութիւնն է ցուցաբերել ՀՀ դեսպանատան եւ Ռուսաստանի Հայերի միութեան կողմից տարուղ աշխատանքներին, փորձել է ընդհանուր օրակարգի շուրջ համախմբել հայկական կազմակերպութիւններին եւ գործիչներին:

Արցախեան պատերազմի մեկնարկից սկսած Հայ Դատի գրասենեակն ակտիւօրէն մասնակցեց Արցախի աջակցութեան միասնական շտաբի ձեւաւորման աշխատանքներին: Հէնց առաջին իսկ օրը ձեւաւորեց միասնական շտաբ, որը ամենօրեայ ռեժիմով հանդիպումներ էր կազմակերպում երեք հարթակներում՝ ՀՀ դեսպանատուն, Ռուսաստանի Հայերի միութիւն եւ Հայ Դատի Մոսկայի գրասենեակ: Հայ Դատի պատասխանատուներին վստահեց կամաւորների հաւաքագրման եւ Հայաստան փոխադրման կարեւոր աշխատանքը, որի արդիւնքում հարիւրաւոր հայրենակիցներ հնարաւորութիւն ստացան վերադառնալ Հայրենիք եւ մասնակցել պաշտպանութեանը: Հայ Դատի Մոսկայի գրասենեակի ղեկավար Ներսէս Ներսիսեանին վստահեց նաեւ միասնական շտաբի բարեգործական բաժնի համակարգումը: Արցախի առաջնագիծ ուղարկեց հսկայական աջակցութիւն (ուղարկած ապրանքները չէին մնում պահեստներում, այլ ուղիղ հասնում էին առաջնագծի ջոկատներին), Ռուսաստանի գրեթէ բոլոր շրջաններից առաքած հումանիտար բեռները ինչպէս օդային, այնպէս էլ ցամաքային ճանապարհներով սեղմ ժամկէտներում փոխադրեցին Հայաստան: Մյո օրերին նոյնպէս գրասենեակը աշխատում էր

մի քանի ուղղութիւններով՝ քաղաքական, տեղեկատւական, կազմակերպչական եւ հումանիտար: Տեղեկատւական ոլորտի աշխատանքների արդիւնաւէտութիւնը բարձրացնելու նպատակով ներգրաւեցին նաեւ կամաւորներ, որոնք շուրջօրեայ ռեժիմով պայքարում էին աղբրեջանական եւ թուրքական ապատեղեկատութեան դէմ եւ փորձում պահպանել հաւասարակշռութիւնը:

Արցախեան պատերազմից յետոյ գրասենեակը նոր թափով լծեց Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած խնդիրների, մասնաւորապէս՝ ռազմագերիների, Արցախի կարգավիճակի եւ Ռուսաստանից Արցախին աջակցութեան տրամադրման հարցերի բարձրացման աշխատանքներին: Զուգահեռաբար աշխատանքներ են տարել հայկական կազմակերպութիւնների կարողութիւնների զարգացման, հայաշատ քաղաքներում հայկական կազմակերպութիւնների հիմնադրման եւ հայկական կիրակնօրեայ դպրոցների ստեղծման ուղղութեամբ:

Գրասենեակը յատուկ ուշադրութիւն է դարձնում նաեւ հայապահպանութեան խնդիրներին, որոնց լուծման համար ակտիւօրէն համագործակցում է ինչպէս ՀՅԴ ռուսաստանեան կառոյցի, ուղեկից միութիւնների, այնպէս էլ ռուսաստանեան մի շարք հասարակական կազմակերպութիւնների հետ: ՀՅԴ Հայ Դատի Մոսկայի գրասենեակի հովանու ներքոյ 2020 թ. մարտ ամսից գործում է «Լուսարձակ» կիրակնօրեայ դպրոցը, որն ունի անլի քան յիսուն աշակերտ: 2020 թականից Հայ Դատի գրասենեակի օրակարգի կարեւորագոյն հարցերից է հայաբնակ գիւղերում եւ հայաշատ քաղաքներում հայոց լեզու եւ գրականութիւն առարկաների ներառումը կրթական ծրագրերում, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Յեղասպանութեան մասին նիւթերի ներառումը ՌԴ-ում պատմութիւն առարկայի հանրակրթական, միջին մասնագիտական եւ ԲՈՒՀ-ական ծրագրերում:



Հայ Դատի Միջին Արևելքի յանձնախումբ/Բեյրութի գրասենեակ Armenian National Committee of Middle East (ANCME)



www.ancme.net | <https://bit.ly/3C5yWFy>

Հաշի առնելով Միջին Արևելքի վերջին տարիներու քաղաքական ապահովական եւ տնտեսական բարդ իրավիճակը եւ այդ կացության մէջ հայկական գաղութներու պարզած ծանր իրադրութիւնը՝ Հայ Դատի աշխատանքները դէմ-յանդիման գտնուեցան յաւելեալ մարտահրաւէրներու առջեւ:

Գլխաւոր գաղութներու մէջ հայութեան թիւի նօսրացումը եւ նիւթական դժարութիւնները մէկ կողմէ՝ աւելի հրանայական դարձուցին շրջանի մէջ Հայ Դատի աշխատանքներու աշխուժացումը, իսկ միւս կողմէ՝ պատճառ հանդիսացան, որ գրասենեակը չաջողի իր ծրագիրները ամբողջութեամբ իրականացնելու:

Հայոց Ցեղասպանութեան 105-րդ տարելիցի առթիւ Հայ Դատի Միջին Արևելքի գրասենեակի պատասխանատու Վերա Եագուբեանը տարբեր հարցազրոյցներ ունեցաւ «Արաբիա» «Աքայ Նիզ» հեռուստաընկերութիւնների, ինչպէս նաեւ «Նահար» առցանց հեռուստաընկերութեան հետ:

Ի պատասխան Հայոց Ցեղասպանութեան պատմական իրողութիւնը սոցիալական ցանցերում

ժխտող մի շարք արտայայտութիւնների՝ Հայ Դատի Միջին Արևելքի գրասենեակը հրապարակեց պատասխան հաղորդագրութիւն, որով ընդգծեց, որ սոցցանցերում վարձու օգտահաշիւների միջոցով տարածող յայտարարութիւնները կրօնական սադրանքներ հրահրելու եւ պատմական ճշմարտութիւնը խեղաթիւրելու նպատակ են հետապնդում:

Արցախի դէմ սանձազերծած թուրք-ադրբեջանական պատերազմի մանրամասնութիւններին, ազրեխայի յետեւում թաքնուած նպատակների, պատերազմական յանցագործութիւնների եւ ռազմական գործողութիւնների ընթացքի վերաբերեալ Միջին Արևելքի գրասենեակը առաջին օրից հարցազրոյցներ ունեցաւ արաբական եւ հայկական մի շարք լրատամիջոցների եւ տպագիր ու էլեկտրոնային մամուլի ներկայացուցիչների հետ (նկար 1, 2):

Գրասենեակի կողմից կատարել է մեծ ծաւալի տեղեկատուական աշխատանք, ինչի արդիւնքում արաբալեզու շուրջ 20 լրատուական ծառայութիւնների միջոցով ներկայացել է հայկական կողմի տեսակէտները:



Նկար 1



Նկար 2

Հայ Դատի Կանադայի յանձնախումբ

Armenian National Committee of Canada (ANCC)



www.anccanada.org | www.facebook.com/ArmenianNationalCommitteeofCanada

2020 թ. սկզբից ի վեր, տարբեր առիթներով Հայ Դատի Կանադայի յանձնախումբը կազմակերպել է ներկայացուցչական ընդունելություններ, որոնց մասնակցել են մեծ թուվ կանադական պետական, քաղաքական եւ հասարակական գործիչներ:

Փետրարին, Սունգայիթի եւ Բաքի ջարդերի յիշատակման առթիւ, Կանադայի խորհրդարանում պատգամաւորներ՝ Ֆայսալ Էլ Խուրիի, Պապ Սարոյայի եւ Էմմանուէլլա Լամբրոբուլոսի կողմից կատարել են յիշատակման յայտարարութիւններ:

Արձանագրելով Արցախի Հանրապետութեան համապետական ընտրութիւնների նախնական արդիւնքները՝ Մնկարայում Կանադայի դեսպանութիւնը, ապրիլ 1-ին, առանց պաշտօնական Օտտաւայի գիտութեան, «twitter»-ի իր միկրոբլոգում, յայտարարութեանը մերժել էր Արցախի ազատ եւ արդար ընտրութիւնների իրաական վաւերականութիւնը: Տարածած յայտարարութեանը դեսպանութիւնն իր համերաշխութիւնն էր յայտնել Ադրբեջանի տարածքային անբողջականութեանը եւ չէր նշել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը: Այս ուղղութեանը, Հայ Դատի Կանադայի յանձնախումբը բողոքի համապետական ալիք բարձրացրեց եւ սի շարք խորհրդակցութիւններից յետոյ, Կանադայի արտգործնախարար Ֆրանսուա Ֆիլիպ Շանպայնը Հայ Դատի յանձնախումբին յղեց յատուկ նամակ, որտեղ նշում էր Կանադայի աջակցութիւնը ժողովուրդների ինքնորոշման իրաւունքին:

Ապրիլի 24-ին, կազմակերպմամբ Հայ Դատի յանձնախումբի, տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 105-րդ տարելիցի առցանց ոգեկոչում, որն ունեցաւ առաւել քան 20.000 մասնակից: Մի-

ջոցառման ընթացքում Հայ Դատի յանձնախումբին եւ անբողջ կանադահայութեանը ուղերձ յղեց վարչապետ Ջասթին Թրիւօն՝ ոգեկոչելով ցեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակների յիշատակը եւ, առաջին անգամ, նշելով Օսմանեան Թուրքիան որպէս ցեղասպանութեան ոճիրը գործած պետութիւն: Վարչապետի ուղերձից բացի, յայտարարութիւններ արեցին խորհրդարանում ներկայացած բոլոր կուսակցութիւնների ղեկավարները, նահանգային վարչապետները, ինչպէս նաեւ աւելի քան 70 պատգամաւորներ ու նախարարներ՝ դաշնային եւ նահանգային մակարդակներից:

Մայիս 18-էն՝ 22 երկարող շաբաթը, Հայ Դատի յանձնախումբը յայտարարեց Արցախեան զօրակցութեան շաբաթ (սկար 1): Կորոնավիրուսի ստեղծած սահմանափակումներուն պատճառով տեղի չունեցան ֆիզիկական միջոցառումներ, սակայն առցանց դրութեանը սփռուեցան տարատեսակ քա-



Սկար 1

րոզգական նիւթեր, որոնք օգտագործեցան ներքին եւ արտաքին սպառման համար:

Հայ Դատի Կանադայի յանձնախումբը եւ Կանադայի յունական Կոնգրեսը, յունիսի 30-ին, համատեղ նասակ ուղարկեցին Կանադայի մեծագոյն ռազմարդիւնաբերական ընկերութիւններին՝ կոչ անելով նրանց, որ դադարեցնեն Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ զէնքի եւ ռազմական նշանակութեան արտադրանքի առեւտուրը:

Հաշի առնելով յուլիսի ընթացքում ՀՀ Տաուշի մարզում սահմանային ընդհարումները՝ Հայ Դատի յանձնախումբը ծաւալեց հսկայական քաղաքական եւ քարոզչական աշխատանք: Հնարաւոր

եղաւ ապահովել մեծ թուով դատապարտող յայտարարութիւններ՝ խորհրդարանականների եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաների կողմից: Այս շարքում խիստ ուշագրաւ է, Կանադայի Պահպանողական կուսակցութեան ղեկավար Մնորի Շիրի հայանէտ եւ հասցէական յայտարարութիւնը: Քարոզչական առումով եւս, հնարաւոր եղաւ կանադական լրատամիջոցներում ապահովել մի շարք հայանպաստ յօդածներ եւ հարցազրոյցներ:

Հայ Դատի յանձնախմբի ջանքերով, օգոստոսի 26-ին, հնարաւոր եղաւ ապահովել 260.000 դոլարի նիւթական օժանդակութիւն Հայաստանին՝ COVID 19-ի դէմ պետական պայքարի համար: Հարկ է նկատել, որ նախապէս հաստատուած եւս 100.000 դոլարի չափով օժանդակութիւն, նոյնպէս յատկացեց Հայաստանին (նկար 2):

Օգոստոսին Հայ Դատի Կանադայի յանձնախումբը, համագործակցաբար ԱՄՆ Արեւմտեան եւ Արեւելեան շրջանների Հայ Դատի յանձնախմբերի եւ Վաշինգտոնի գրասենեակի հետ, առջանց յիշատակեց Սեւրի Դաշնագրի հարիւրամեակը (նկար 3): Անբողջ անսայ ընթացքում, սոցիալական ցանցերի միջոցով սփռեց համապատասխան քարոզչական նիւթեր, կազմակերպեց նաեւ մէկ առջանց քննարկում՝ Սեւրի դաշնագրի վաւերականութեան եւ իրաւական այժմէականութեան



Նկար 2



Նկար 3

մասին: Այդ նիսիները անմիջապես տրամադրեցին կանադացի խորհրդարանականներին եւ մի շարք պետական մարմիններին: Հարկ է նշել, որ առաջին անգամ Սերի դաշնագիրը, հարիրամեակի առթիւ, Հան Տոնկի կողմից յիշատակեց Կանադայի խորհրդարանում:

ՀՀ անկախութեան վերականգնման 29-րդ ամեակի առթիւ, սեպտեմբերի 21-ին հայ համայնքին շնորհատրական ուղերձ յղեց Կանադայի վարչապետ Ջասթին Թրիպտոն, հայ համայնքը շնորհատրանքներ ստացաւ նաեւ կանադական հասարակական-քաղաքական մի շարք գործիչներից:

Արցախեան պատերազմ

Սեպտեմբերի 27-ից, Արցախի դէմ ահաբեկչական ներգրամամբ սանձազերծած աղբրեջանաթուրքական ագրեսիայով պայմանաւորած Կանադայի ամբողջ հայ համայնքն ու Հայ Դատի յանձնախումբը արագ մէկտեղեցին ուժերը եւ սկսեցին օգտագործել քաղաքական ու քարոզչական բոլոր հնարաւոր լծակները: Հայ Դատի շրջանային եւ տեղական մարմինները կարողացան տարատեսակ քաղաքական ու քարոզչական նախաձեռնութիւններ կեանքի կոչել, ունեցան առաւել քան 100 հանդիպումներ: Կատարած հսկայական աշխատանքի արդիւնքում հնարաւոր եղաւ հայութեան ձայնը լսելի դարձնել թէ՛ քաղաքական, եւ թէ՛ քաղաքացիական շրջանակնե-

րի մօտ՝ ապահովելով մի շարք յաջողութիւններ, մասնաւորապէս.

- ✔ **դաշնային, նահանգային եւ քաղաքային անկարդակներ ներկայացնող ընտրած պաշտօնեաների կողմից կատարեցին տասնեակ հասցէական դատապարտող յայտարարութիւններ,**
- ✔ **խորհրդրանական ընդդիմադիր բոլոր կուսակցութիւնների կողմից համենատարբար հայանպաստ յայտարարութիւններ,**
- ✔ **Կանադա-Հայաստան եւ Կանադա-Արցախ խորհրդարանական խմբակցութիւնների կողմից դատապարտման հասցէական յայտարարութիւններ (նկար 4),**
- ✔ **թուրքական անօդաչու սարքերի վրայ տեղադրած կանադական արտադրութեան տեսանկարահանման եւ թիրախաւորման արտադրանքի առկայութիւնը բացայայտելուց յետոյ՝ Կանադայի կողմից նշեալ ապրանքների արտահանման դադարեցման որոշում: Այս ուղղութեամբ պետական հետաքննութեան մեկնարկ (նկար 5),**
- ✔ **Քեբեկի եւ Օնտարիոյի խորհրդարանների կողմից Հայաստանին ու հայ ժողովրդին զօրակցութիւն յայտնող բանաձեւերի ընդունում,**
- ✔ **Քեբեկի Լաւալ քաղաքի կողմից Արցախի անկախութեան ճանաչում,**



BREAKING NEWS ANCC

ONTARIO PARLIAMENT SLAMS TURKEY & AZERBAIJAN, REQUESTS TO EXPEL TURKEY FROM NATO AND DISCUSSES THE RECOGNITION OF THE REPUBLIC OF ARTSAKH

📧 @ #RECOGNIZEARTSAKH ▶▶▶

Նկար 4

BREAKING NEWS The Globe & Mail

IRREFUTABLE EVIDENCE EMERGE PROVING CANADIAN MADE HARDWARE IS BEING USED TO KILL ARMENIAN CIVILIANS

📧 @ #RECOGNIZEARTSAKH ▶▶▶

Նկար 5



Նկար 6

- ✔ Կանադայի կողմից 400.000 դոլարի օժանդակություն Արցախում Կարմիր Խաչի միջազգային կազմակերպության աշխատանքների համար (նկար 6),
- ✔ առաջին անգամ, Կանադայի Սենատում ներկայացրեց Արցախի անկախությունը

- ճանաչող բանաձևի նախագիծ, որը սակայն անյաջողության մատնեց,
- ✔ դաշնային խորհրդարանի Արտաքին յարաբերությունների յանձնաժողովի որոշում՝ Կանադայի կողմից Թուրքիա զենքի մատակարարման վերաբերեալ ընդունված որոշումների շուրջ յատուկ հետաքննություն անցկացնելու վերաբերեալ,
- ✔ ամենշաբաթեայ կտրածքով բողոքի բազմատեսակ միջոցառումների անցկացում Կանադայի խոշոր քաղաքներում,

Վերոնշյալ բոլոր աշխատանքներին զուգահեռ՝ Հայ Դատի Կանադայի յանձնախումբն օգտագործեց յարբինգի աւանդական միջոցները՝ Հայաստան-Կանադա յարաբերությունների զարգացման, Դարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման, Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ կարելոր այլ թեմաների շուրջ՝ նշտապէս համագործակցելով տեղական մարմինների եւ քոյր կազմակերպությունների հետ:

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբ

Armenian National Committee of Australia (ANC-AU)



www.anc.org.au | www.facebook.com/ancaustralia

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբը հին-նականում կենտրոնացել է Հայաստանի կայուն զարգացմանը միտած աշխատանքների վրա, յանձնախմբի քաղաքական առաջադրանքների առանցքը եղել են Արցախի Հանրապետության շահերի պաշտպանության եւ Հայոց Ցեղասպանության ճանաչման աշխատանքները, յանձնախմբի ուշադրության կենտրոնում են եղել Հայաստան-Աստրալիա միջպետական յարաբերությունները:

Կայուն Հայաստան

ա) Յուլիսեան ագրեսիա

2020 թ. Յուլիսեան դէպքերի ընթացքում Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբը դիմեց Աստրալացի պետական ու քաղաքական գործիչներին եւ հայ համայնքի բարեկամներին, որպէսզի վերջիններս դատապարտեն ադրբեջանական գործողութիւնները եւ համերաշխութիւն յայտնեն Աստրալահայ համայնքին: Արդիւնքում՝ Աստրալիա-Հայաստան

Trent Zimmerman MP

Hon. Joel Fitzgibbon MP

**AUSTRALIA-ARMENIA INTER-PARLIAMENTARY
UNION CO-CONVENERS CONDEMN
AZERI ATTACK ON ARMENIA**

www.anc.org.au


միջխորհրդարանական բարեկամության խմբի համանախագահներ Թրենթ Զիմերմանը եւ Զօ Ֆիցցիբենը համատեղ յայտարարութեամբ խստօրէն դատապարտեցին Ադրբեջանի գործողութիւնները (նկար 1): Ադրբեջանի քաղաքականութեան դատապարտման գործընթացներ սկսեցին նաեւ նահանգային խորհրդարաններում:

բ) Պայքար COVID-ի դէմ

Յունիսի վերջին, Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբը սկսեց իրականացնել «#Combat-covid in Armenia» ծրագիրը՝ փորձելով մեղմել համաճարակի հետեանքով Հայաստանում ստեղծուած առողջապահական իրավիճակը: Այս ծրագրի շրջանակում յանձնախումբը սերտօրէն համագործակցեց ՀՀ Արտաքին գործերի նախարարութեան հետ եւ ստացաւ այն անհրաժեշտ պարագաների ցուցակը, որի կարիքը ՀՀ առողջապահական համակարգն ունէր: Սկսած դրանահաաաքի արդիւնքում Աստրալիայ համայնքը հանգանակեց առաւել քան 45.000 դոլար (նկար 2): Բացի նիւթական օժանդակութիւնից, Աստրալիայ անւանի բժիշկների մի խումբ մեկնեց Հայաստան, տեղում օգնութիւն ցուցաբերելու համար:

գ) Երկկողմ յարաբերութիւններ

Հայաստանի զարգացմանն ուղղւած՝ Հայ Դատի Աստրալիայի յանձնախմբի աշխատանքները կենտրոնանում են Երեւանի եւ Կանբերայի միջեւ առողջ եւ արդիւնաւէտ յարաբերութիւնների հաստատման եւ դրանց սպասարկման վրայ:



Նկար 2

Նախաձեռնութիւնների լայն շրջանակի շնորհիւ յանձնախումբը, Աստրալիայ գաղութի անունից փոխգործակցում է հայ եւ Աստրալիացի օրէնդիրների հետ: Յանձնախումբը կազմակերպել է բազմաթիւ քննարկումներ եւ հանդիպումներ, որոնց նասնակցել են Հայաստան-Աստրալիա միջխորհրդարանական յանձնաժողովի անդամներն ու քննարկել փոխադարձ հետաքրքրութիւններկայացնող հարցեր:

Հայոց Ցեղասպանութեան ճանաչում

ա) Արդարութեան միացեալ նախաձեռնութիւն

2020 թ. փետրւարի 25-ին Աստրալիայի խորհրդարանում Աստրալիայ, Ատրա-աստրալիական եւ Աստրալիա-յունական կոմիտէների միջեւ Աստրալիայի խորհրդարանի սրահներից մէկում ստորագրեց փոխընթացն յուշագիր: Աստրալիացի շուրջ 100 խորհրդարանականներ, քաղաքական գործիչներ, դիւանագէտներ, զերատեսչական պաշտօնեաներ, ակադեմիկոսներ, լրատւամիջոցներ եւ համայնքների ղեկավարներ հաաքել էին ոգեկոչելու պատմական արդարութիւնը եւ համատեղ նպաստելու, որ Աստրալիան պաշտօնապէս ճանաչի հայերի, յոյների եւ ասորիների ցեղասպանութիւնը՝ Օսմանեան Թուրքիայի կողմից: Այս նախաձեռնութեամբ նաեւ աստրալացի սենատորներից եւ պատգամատրներից պահանջեց հաստատել իրենց աջակցութիւնը հայերի, ասորիների եւ յոյների ցեղասպանութիւնների ճանաչմանը՝ ստորագրելով «Արդարութեան միացեալ նախաձեռնութեան» հաստատումը: Ներկայումս աստրալացի շուրջ 20 սենատորներ եւ նոյնքան էլ պատգամատրներ միացել են սոյն նախաձեռնութեանը (նկար 3):

բ) Համախմբւած աջակցութիւն

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբը ներկայացնում է հայ-աստրալիական հաաքական տեսակէտը հանրային քաղաքականութեանը վերաբերող մի շարք հարցերի վերաբերեալ, ներառեալ 1915 թ. Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը դաշնային մակարդակում: Համավարակն

իր ազդեցությունը թողեց պլանատորած միջոցառումների վրայ եւ դրանց հիմնական մասնանցկացուց առցանց, այդ թւում, Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկը: Սակայն դա չի անգարեց, որ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչմանը մասնակցեն ռեկորդային թուով խորհրդարանականներ՝ դաշնային եւ նահանգային խորհրդարաններից ու այլ քաղաքական գործիչներ:

Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչումը աստրալացի անանի քաղաքական գործիչների, ֆեդերալ սենատորների եւ պատգամատուրների կողմից, ինչպէս նաեւ Նոր Հարաւային Վէլս նահանգի վարչապետի ու նահանգի ողջ ղեկավարութեան կողմից, Կանաքերայի պաշտօնական դիրքորոշման պահպանման համար շատ երբեք լինելու են ստեղծել:

Վերոգրեալից բացի, Աստրալիա-հրէական գործադիր խորհուրդը, որն Աստրալիայում հրէա-

կան համայնքի գլխատուր ներկայացուցչական մարմինն էր 2020 թականի ընթացքում, հանդէս եկաւ Հայոց Ցեղասպանութիւնը ֆեդերալ մակարդակում ճանաչելու կոչով:

Հայերի, յոյների եւ ասորիների ցեղասպանութեան ճանաչման կոչով հանդէս եկան նաեւ, Նոր Հարաւային Վէլս նահանգի Էկումենիկ խորհուրդը, որն ընդգրկում է թուով 16 եկեղեցիներ Նոր Հարաւային Վէլս նահանգից եւ Աստրալիայի կենտրոնական տարածքներից:

գ) Ուկրեր են մեզ դէմ

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբի ջանքերը, յատկապէս Հայոց Ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներում լուրջ հակազդեցութեան են հանդիպում թուրք դիւանագէտների եւ ընդհուպ թուրքական պետութեան ղեկավարութեան կողմից: Յանձնախումբը ողջունեց Աստրալիայի խորհրդարանի անդամ Ադամ Սոմիլեքի պաշ-



Նկար 3

տոնազրկումը եւ արքայազնը Լէյբորիստական կուսակցութիւնից, քանի որ նա աջակցել էր թուրքական ծայրայեղ ազգայնական «Ուլքու Օջաքլի» կազմակերպութեանը, որն ըստ էութեան պատկանում է «Գորշ գայլերին»: 2014 թ. յունիսին Սոմիլերը երդմամբ սիացել էր «Գորշ գայլերին» վերջիններիս Սելբորնի գրասենեակում:

Սելին, հետաքրքիր է, որ Ստոկհոլմում տեղակայած «Nordic Research Monitoring Network» (Nordic Monitor) ընկերութիւնը հրապարակել էր փաստաթղթեր, որոնք ապացուցում էին, որ թուրքական արտաքին հետախուզական ծառայութիւնը լրտեսական գործունէութիւն է ծաայում Աստրալիայում եւ թիրախում ունեն էրդողանի քննադատներին ու ընդդիմախօսներին:

Սյս բացայայտումը մանրամասն տեղեկութիւններ է տրամադրում Աստրալիական հասարակական տրամադրութիւնները լրտեսական ցանցի միջոցով Մակարային փոխանցելու վերաբերեալ, ինչը աստրալիական օրէնսդրութեան կոպիտ ոտնահարում է:

Արցախի Հանրապետութիւն/ 2020 թ. պատերազմ

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբը ներկայացնելով աստրալիահայութեան հաւարական տեսակէտը՝ արդիւնաւէտութեամբ իրականացնում է հայութեան շահերի պաշտպանութեան աշխատանքներ, յատկապէս Արցախի Հանրապետութեան ինքնորոշման իրաւունքի եւ անկախութեան համատեքստում: Յանձնախումբը յանձնառու է շարունակել խթանել Արցախի եւ Աստրալիայի միջեւ յարաբերութիւնները, ինչպէս ֆեդերալ, այնպէս էլ նահանգային մակարդակներում:

Սյս ոլորտում յանձնախմբի կարեւորագոյն ձեռքբերումներից թերեւս առաջինը «Արցախի բարեկամներ» ցանցն է, որի կազմում ընդգրկւած են աստրալացի առաւել քան 60 յայտնի քաղաքական գործիչներ, որոնց թում՝ ՄՄՆ նախկին դաշնային գանձապետ եւ նախկին դեսպան, Զօ Հոուքին, դաշնային նախարարներ եւ խորհր-

դարանականներ, նահանգային վարչապետ եւ նահանգային խորհրդարանականներ, քաղաքապետ եւ խորհրդականներ, ակադեմիական եւ մտաւորական մարդիկ, ինչպէս նաեւ մի շարք կրօնական եւ համայնքային հաստատութիւնների ղեկավարներ:

2020 թ. սեպտեմբերին Արցախի նկատմամբ ադրբեջանաթուրքական պատերազմի սանձազերծումից յետոյ, Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբը, համայնքի հետ լայն համագործակցութեամբ, իրականացրեց մի շարք գործողութիւններ այդ թում բողոքի ցոյցեր՝ Պերտ, Սիդնէյ, Կանբերա քաղաքներում եւ այլուր:

ա) Տեղեկացւածութեան բարձրացում

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբն իրականացնում է մի շարք ծրագրեր եւ քարոզչական բնոյթի արշաներ, որոնց նպատակն է բարձրացնել տեղի հասարակական-քաղաքական շրջանակների տեղեկացւածութեան մակարդակը Դարաբաղեան հիմնախնդրի, Հայաստանի եւ Ադրբեջանի վերաբերեալ, յատուկ շեշտում է վերջինիս հակաժողովրդավարական բնոյթը: Յանձնախումբը սոցցանցերում նախաձեռնել է #FriendsFridays սոցիալական մեդիայի արշար, որն ընդգծում է ականատր այն գործիչներին, ովքեր հաստատել են իրենց անդամակցութիւնը Աստրալիայում «Արցախի բարեկամներ» ցանցին (նկար 4):



Նկար 4

Մեծ ծառայով տարածող քաղաքական յայտարարություններից բացի, յանձնախումբը քարոզչական բնոյթի նիւթեր է տարածել Արցախի պատմութեան եւ ներկայի վերաբերեալ՝ բարձրացնելու համար աստրալիական հասարակութեան տեղեկացածութիւնը Արցախից: Կարելոր աշխատանք է կատարել նաեւ միջազգային լրատական գործակալութիւնների հետ:

բ) Քաղաքական աջակցութիւն

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբի գործողութիւնների արդիւնքնում, 2020 թ. սեպտեմբերի 27-ից Արցախի դէմ սանձազերծած թուրք-ադրբեջանական ագրեսիան Աստրալիայի հասարակական-քաղաքական կեանքում խիստ դատապարտման արժանացաւ: Հայ ժողովրդին իրենց զօրակցութիւնը յայտնեցին եւ ադրբեջանական ագրեսիան դատապարտեցին մի շարք խորհրդարանականներ ու քաղաքական գործիչներ, ինչպէս Ֆելերալ մակարդակում, այնպէս էլ նահանգային: Սյս առումով յիշատակման են արժանի դաշնային պատգամատորներ՝ Թիմ Զիմերմանը եւ Զոէլ Ֆիցգիբոնը, ով նախկինում զբաղեցրել է Աստրալիայի պաշտպանութեան նախարարի պաշտօնը: Կարելոր էին նաեւ Աստրալիայի խորհրդարանի ներկայացուցիչների պալատի անդամներ, պատգամատորներ՝ Զօ Սլեքսանդրի եւ Փօլ Ֆլեթչերի զօրակցութիւնները:

Աստրալիական կանաչների կուսակցութիւնը, որը երկրի խոշորագոյն քաղաքական միաւրումն է, պատերազմի սկզբից օրեր անց Թուրքիային եւ Ադրբեջանին յայտարարեց ագրեսորներ եւ պահանջեց ռազմական գործողութիւնների անյապաղ դադարեցում (նկար 5):

Աստրալիայի խոշորագոյն՝ Նոր Հարաւային Վելս նահանգից ընտրած խորհրդարանական Հուգ Մրք Դերնոթը բաց նամակ գրեց Աստրալիայում Ադրբեջանի դեսպանին՝ խստօրէն քննադատելով Արցախի նկատմամբ ագրեսիայի սանձազերծման, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան սահմանամերձ բնակավայրերի թիրախատումն համար:

Արդէն հոկտեմբերի 22-ին Նոր Հարաւային Վելս նահանգի խորհրդարանը, ձայների 61-2 յարաբերակցութեամբ ընդունեց Արցախի Հանրապետութեան անկախութիւնը ճանաչող եւ Թուրքիայի ու Ադրբեջանի անօրինական գործողութիւնները դատապարտող բանաձեւ (նկար 6):

Աստրալիացի քաղաքական գործիչների միջոցով Արցախին աջակցութիւնը Հայ Դատի յանձնախումբի համար լաւ հնարատրութիւն է Աստրալիայի հասարակական-քաղաքական եւ պետական շրջանակներին դուրս հանել Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից նենգափոխած տեղեկատւութեան ազդեցութեան գօտուց:



Նկար 5



Նկար 6

գ) Համայնքային ակտիվություն, ներառեալ մեդիալուսաբանում

Հայ դատի Աստրալիայի յանձնախումբը մեծապես աջակցեց պատերազմի ընթացքում համայնքային բոլոր նախաձեռնություններին, այդ թում բողոքի հանրային միջոցառումներին, որոնց մասնակցությունը, պայմանաւորաձ համավարակով, սահմանափակած էր 500 մարդով:

Հոկտեմբերի 6-ին, թուվ 500 աստրալիացիներ, Սիդնեյից գնացին Կանբերրա, որտեղ բողոքի

ցոյց իրականացրեցին Ադրբեջանի դեսպանատան առջե: Հոկտեմբերի 24-ին եւ դեկտեմբերի 10-ին նոյնպէս անցկացրեցին բողոքի միջոցառումներ: Վերջինն անցկացել է Կանբերայում, Դաշնային Խորհրդարանի առջե: Վարչապետ Ցքոթ Մորիսոնին յանձնաձ նամակով, ցուցարարները բողոքում էին կառավարութեան լռութեան դէմ:

Բողոքի այս ցոյցերը լայնօրէն լուսաբանել են աստրալիական ամենաառաջատար լրատւամիջոցներով, ինչպէս նաեւ համաշխարհային մի շարք լրատւամիջոցների տեղական ծառայությունների կողմից (սկար 7-10):



7 սկար



8 սկար



6 սկար



Նկար 10

**դ) Կառավարության աջակցություն
ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացին**

Արտաքին գործերի նախարար Սարիս Փէյնը վերահաստատեց Աստրալիայի կառավարության աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացին՝ կարեւորելով «մարդկանց հաասար իրաւունքներն ու ինքնորոշումը» որպէս հակամարտութեան կարգաւորման երեք հաասար սկզբունքներից մէկը՝ կայուն խաղաղութեան հասնելու համար: Նախարար Փէյնը հետագայում կոչ արեց ինչպէս Հայաստանին, այնպէս էլ Ադրբեջանին աջակցել ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ տարածաշրջանում խաղաղութիւն հաստատելու ջանքերին (նկար 11):

Արշաներ սոցիալական մեդիայում

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբը լայն ծաւալով իրականացնում է սոցիալական տարբեր արշաներ, որոնք մի կողմից ներառում են ժամանցային բնոյթին սօս քննարկումներ, միւս կողմից աստրալիական, միջազգային եւ հայաստանեան լրատական միջոցների հետ հարցազրոյցներ եւ այլն:

Հանավարակի պայմաններով թելադրած՝ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման կենտրոնական միջոցառումը նոյնպէս առջանց անցկացւեց եւ ռե-

կորդային թով՝ շուրջ 15.000 մասնակցութիւն ապահովեց: Հաշի առնելով արձանագրուած արդիւնքը, 2021թ. ոգեկոչման միջոցառումը հաասնաբար նոյնպէս առջանց կանցկացւի:

2020-ի Արցախեան պատերազմի ընթացքում, հարիւրաւոր Աստրալացիներ մասնակցեցին Աստրալիայի Հայ Դատի յանձնախմբի #EndYourSilence սոցիալական արշաին, որի նպատակն էր տարածել Արցախի Հանրապետութեան վրայ Ադրբեջանի



Նկար 11

յարձակումների մասին տեղեկություն ու տեղական լրատվամիջոցներին յորդորել դադարեցնել իրենց «մահացու լռությունը»:

Իրաքանչիւր գրառման համար, որն ընդգրկում էր #EndYourSilence հեշթագը, յանձնախումբը 5 դոլար նւիրաբերեց Հանահայկական հիմնադրամին: Արդիւնքում՝ յանձնախմբի նւիրատւութիւնը հիմնադրամին ընդհանուր առմամբ կազմեց 40.000 դոլար:

Քաղաքական յարաբերութիւններ

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբը անուր կապեր ունի Աստրալիայում բնակուղ այլ էթնիկ համայնքների հետ եւ մի շարք ճակատներում ներկայացնում է հայ համայնքին: 2020 թ. սկզբին, աստրալիա-կիպրական համայնքի հրաւերով, Հայ Դատի յանձնախումբը հանդիպում է ունեցել Կիպրոսի խորհրդարանի նախագահ Դիմիտրիս Սիլուրիսի հետ: Հանդիպման ընթացքում քննարկեցին կարեւոր հարցեր՝ Կիպրոսի հայ համայնքի դրական դերի, Կիպրոս-Հայաստան յարաբերութիւնների, երկու ժողովուրդների համար թուրքական սպառնալիքների, ինչպէս նաեւ Աստրալիայում եւ անբողջ աշխարհում կիպրացիների

եւ հայերի հետագայ հանագործակցութեան հնարաւորութիւնների վերաբերեալ (սկար 12):

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբը նաեւ մասնակցեց Աստրական ազգային խորհրդի կողմից կազմակերպած՝ ասորի նահատակների ոգեկոչմանը նւիրած առցանց միջոցառմանը, որի ընթացքում ելոյթ ունեցան նաեւ հայկական, յունական եւ աստրական համայնքի ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ եւ գիտնականներ: Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչը կարեւորեց յանուն արդարութեան համատեղ պայքարը շարունակելու յանձնառութիւնը:

Երիտասարդական ծրագրեր

Հայ Դատի Աստրալիայի յանձնախումբն իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնք երիտասարդներին հնարաւորութիւն են տալիս ընդգրկել Հայ Դատի Աստրալիայի գրասենեակի աշխատանքներում՝ իրաքանչիւր իր կարողութիւնների շրջանակներում: Այս առումով սերտ հանագործակցութիւն է առկա համապատասխան կրթօջախների հետ, տարբեր ծրագրերով գրասենեակում աշխատում-սովորում են ոլորտային հետաքրքրութիւն ունեցող հայ երիտասարդներ (սկար 13): Երիտասարդներին հնարաւորութիւն է տրւում ծանօթանալ նաեւ Աստրալիայի պետական համակարգի, յառկապէս Դաշնային խորհրդարանի աշխատանքին: Յատուկ միջոցառումներով բարձրացում է համայնքային կեանքի հանդէպ ակտիւութիւն ցուցաբերող երիտասարդների գիտելիքները հայութեանը վերաբերող ամնատարբեր հարցերում:



Սկար 12



Սկար 13

Օժանդակության արշավներ

2020 թ. օգոստոսի 4-ին Բեյրութի տոսկալի պայթիմի հետեանքների վերացման գործում օժանդակություն ապահովելու համար Հայ Դատի յանձնախմբի ջանքերով հանգանակեց 70.000 ԱՄՆ դոլար:

Հայ Դատի յանձնախմբի նախաձեռնությամբ, Սիդնեյի հայկական կազմակերպությունները հանգանակեցին 5000 ԱՄՆ դոլար, որն ուղղեց կորոնավիրուսային հիանդությունից բուժող կանանց համար յատուկ կացարանների ստեղծմանը:

Յանձնախումբը, մասնակցեց Հայ Օգնության միության արշավին, եւ համագործակցաբար Համազգային հայ կրթանշակութային հիմնադրամի, Հ.Ա.Ը.Ա.-ի, Հայ երիտասարդաց դաշնակցության

եւ Հայկական ռեսուրս կենտրոնի հետ շուրջ 4.000 դոլար հանգանակեց Աստրալիական հրդեհների հետեանքների յաղթահարմանը օժանդակելու նպատակով:

Հայկական մասնագիտական ցանց

Հայ Դատի Աստրալիայի յանձնախմբի կարեւոր նախաձեռնություններից մէկը «Հայկական մասնագիտական ցանցի» (**Armenian Professional Network /APN**) ստեղծումն էր, որի նպատակն է Աստրալիայի համայնքում սոցիալապէս պատասխանատու, համայնքային հարցերի վրայ կենտրոնացած մասնագէտների յայն, ուժեղ եւ անուր ցանցի ստեղծումը:

Հայ Դատի Հարաւային Ամերիկայի յանձնախումբ (Արգենտինա, Ուրուգուայ, Բրազիլիա)



Consejo Nacional Armenio de Sudamerica

www.cna.org.ar | www.facebook.com/consejonacionalarmenio

Հայ Դատի Բուճնուս Այրեսի գրասենեակը 2020 թ. ընթացքում իրականացրել է բազմակողմանի յարաբերական աշխատանքներ, ունեցել մեծ թուով հանդիպումներ, իրականացրել բողոքի միջոցառումներ: Յանձնախումբի աշխատանքները տարածել են նաեւ հարեւան երկրներում, սասնատրապէս Գատենալայում եւ Մեքսիկայում: Յանձնախումբն իրականացրել է առաւել քան 15 հանդիպումներ Հարաւ-ամերիկեան բարձրաստիճան պաշտօնեաների հետ:

2020 թ. նայիսին Հայ Դատի Արգենտինայի յանձնախումբը հանդիպումներ է ունեցել INADI-ի (Խտրականութեան, օտարատեացութեան եւ ցեղասպանութեան դէմ պայքարի ազգային ինստիտուտ) ներկայացուցիչ Վիկտորիա Դոնդայի հետ եւ քննարկել փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցերի լայն շրջանակ: Հանդիպումներ

են եղել մի շարք խորհրդարանականների, քաղաքապետերի, Արգենտինայի Սոցիալիստական կուսակցութեան նախագահի, Չիլիի Սոցիալիստական կուսակցութեան ներկայացուցչի, Արգենտինայում ՄԱԿ-ի առաքելութեան համակարգողի եւ սարդու իրատնքների խորհրդականի հետ եւ այլն: Արգենտինայի Ազգային ժողովի, Սենատի, Բուճնուս Այրեսի Քաղաքային խորհրդի, ինչպէս նաեւ թուով 9 քաղաքապետարաններին է յանձնել հայութեան Դատին առնչող բանաձեւերի նախագծեր:

Կորիենտես քաղաքում Հայոց Յեղասպանութեան յուշարձանի վերականգնման առիթով՝ յանձնախումբը յոնիս անսին շնորհակալագիր յղեց քաղաքապետին:

2020 թ. յուլիսին Տաուշեան սահմանային լարումների ընթացքում Հայ Դատի Արգենտինայի յանձնախումբը Ազգային ժողովի, Բուճնուս Այրեսի Քաղաքային խորհրդի անդամներին ներկայացրեց ստեղծած իրավիճակը եւ խնդրեց, որպէսզի վերջիններս դատապարտեն Հայաստանի սահմանների վրայ ադրբեջանական յարձակումները:

Հարաւային Ամերիկայի Հայ Դատի յանձնախմբի կազմակերպմամբ՝ սեպտեմբերի 9-ին տեղի ունեցաւ «Մերի պայմանագրի ստորագրումից 100 տարի անց» տարածաշրջանային համաժողովը, որին սասնակցեցին իրատնքի եւ հասարակական գիտութիւնների դասախօս Օսկար Լոպէս Գոլդարասենան, արգենտինացի լրագրող ժորժ Էլիասը, արգենտինացի լրագրող եւ ուսուցիչ Մարսելօ Տաբորդան եւ միջազգային յարաբերութիւնների բրազիլացի սասնագէտ Գուտեր Ռուդրիգո (նկար 1):



Նկար 1

Արցախի նկատմամբ ադրբեջանաթուրքական պատերազմի սկզբից օրեր անց, հոկտեմբերի 1-ին Հայ Դատի յանձնախումբը Հայաստանի դեսպանության առջև միացաւ ի գորակցութիւն՝ հայ ժողովրդին կազմակերպած ցոյցին:

Հոկտեմբերի 3-ին, Հ. Յ. Դաշնակցութեան, Արգենտինայի Երիտասարդական միութեան, Հայ օգնութեան, Հանազգային հայ մարմնակրթական եւ Պատանեկան միութիւնների կազմակերպմամբ իրականացուց զանգաւածային երթ դէպի Թուրքիա-յի եւ Ադրբեջանի դեսպանատներ՝ պահանջելով



Սկար 2



Սկար 3



Սկար 4



անյապաղ դադարեցնել Արցախի եւ Հայաստանի նկատմամբ ագրեսիան (նկար 2-4):

Հայ Դատի Հարաւային Ամերիկայի յանձնախումբը կարեւոր ներգրաւածութիւն եւ նասնակցութիւն է ոնեցել Արգենտինայի հայ համայնքի կողմից իրականացւած մի շարք բողոքի ակցիաների կազմակերպական աշխատանքներուն եւ իրականացման գործուն (նկար 5-6):

Հոկտեմբերի 8-ին, 10-ին, 19-ին, 27-ին եւ 31-ին Արգենտինայում իրականացել են բողոքի բազմամարդ ցոյցեր, ատոերթեր: Ցոյցեր են եղել Թուրքիայի, Ադրբեջանի եւ Իսրայէլի դեսպանատների առաջ: Աննախաղէպ էր, յատկապէս հոկտեմբերի

31-ի հանանայրցանաքային բողոքի ակցիան, երբ Հարաւային Ամերիկայի բոլոր երկրներուն գործող հայ համայնքները հանաձայնեցին եւ նոյն ժամին իրականացրեցին բողոքի միջոցառումներ իրենց երկրներուն:

Նոյեմբերի 13-ին յանձնախումբը նասնակցեց Արգենտինայի Կաթողիկէ հանալսարանի կողմից կազմակերպած «Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւն/Արցախ, աշխարհաքաղաքականութիւն, պատմութիւն եւ իրողութիւն» բանալէճին:

Արցախի հակամարտութեան վերաբերեալ հանապատասխան նիւթեր են ապահովել ներքողրեալ լրատական կայաններուն:



Նկար 5




Նկար 6

- ✔ 30/9 – Radio Gráfica (ռադիոկայան)
- ✔ 8/10 – Radio 10 (ռադիոկայան)
- ✔ 18/10 – C5N con Maria Belen Aramburu (Հեռուստաալիք)
- ✔ 19/10 – «Արգենտինացիները պատերազմական գոտում. Լեոնային Դարաբադի դէպքը»: Հատած: El Primer Café por Spotify (առցանց կայան)
- ✔ 20/10 – TV Pública en vivo desde la Marcha por el reconocimiento de Artsaj (Հեռուստաալիք)
- ✔ 22/10 – Radio La Boca (ռադիոկայան)
- ✔ 29/10 – Página 12 (Օրաթերթ)
- ✔ 6/11 – C5N — Luciana Rubinska (ռադիոկայան)

- ✔ 8/11 – Radio Futuro Rock – Զգացողութիւնների աշխարհ – Federico Vázquez (ռադիոկայան)
- ✔ 13/11 – Իշխանութեան Գաղտնիքները – Ariel Crespo (ռադիոկայան)
- ✔ 11/12 – Radio Cut – Սիրելի միմեանց ազատութեանը (ռադիոկայան)

ՀՅԴ «Արմենիա» պաշտօնաթերթի կողմից Հայաստան ճամբորդած լրագրողներն իրենց տեղեկութիւնները տարածեցին ոչ միայն հայկական լրատւամիջոցներով, այլ նաեւ արգենտինական մի քանի ռադիոկայանների, հեռուստաալիքների, թերթերի հետ համագործակցելով: Հնարատր եղաւ Հարաային Ամերիկայում Դարաբադեան հիմնախնդրի վերաբերեալ ապահովել պատշաճ տեղեկացածութիւն:



Հայ Դատի Ուրուգուայի յանձնախումբ

El Consejo Causa Armenia del Uruguay



<https://bit.ly/3c4sSCN>

Ինչպէս Արցախեան նախորդ ընտրութիւնների պարագայում, Հայ Դատի Ուրուգուայի յանձնախումբը 2020 թ. ընտրութիւնների համար նոյնպէս նախատեսել էր ուրուգուայական դիտորդական առաքելութեան ժամանումն Արցախ, ինչը համավարակի պատճառով չեղարկուեց:

Հայոց Ցեղասպանութիւնն առաջինը ճանաչած Ուրուգուայում արդէն 20 տարուց անել ձեռնարած մի ասանդոյթ կայ, ըստ որի Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման կենտրոնական ձեռնարկը բացում է խորհրդարանում՝ Ներկայացուցիչների պալատի նախագահի եւ Հայ Դատի յանձնախմբի կողմից: Սակայն, համավարակով պայմանաւորած, 2020-ի ոգեկոչումն իր ձեւով այլ էր:

Հայ համայնքին ու Հայ Դատի յանձնախմբին տեսաուղերձներ յղեցին եւ Հայոց Ցեղասպանութեան հերթական տարելիցը ոգեկոչեցին Ուրուգուայի նախագահ Լուիս Լագաժէժէ Փօնու, Խորհրդարանի նախագահ Սարտին Լեւան, ինչպէս նաեւ երկրի փոխնախագահ Բեատրիս Արխիմով:

Նախագահ Փօնու իր ուղերձում նշել էր. «Մյուս հայերի եւ ողջ մարդկութեան համար յիշողութեան օր է: Ջերմօրէն գրկում եմ մեր հայ համայնքին, որն այնքան գործ է արել Հայ Դատին համար»:

Կառավարութեան եւ խորհրդարանի բոլոր կուսակցութիւնների տասնեակ անդամներ սոցցանցերի իրենց օգտահաշիւների միջոցով հրապարակեցին Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման ուղերձներ:

Իր հերթին՝ Հայ Դատի յանձնախումբը հրապարակեց տեսահոլովակ՝ «Հայոց Ցեղասպանութիւնը 1915-1923 սէկ րոպէի մէջ»:

Յուլիս ամսին Տաւուշի վրայ աղբրեջանական յարձակումներից յետոյ, Ուրուգուայում գործող քա-

ղաքական կուսակցութիւնների հետ մեծ ծաւալի աշխատանք տարուեց, որպէսզի վերջիններս դատապարտեն աղբրեջանական ագրեսիան: Մյս աշխատանքները պսակուեցին յաջողութեամբ:

Ուրուգուայի խորհրդարանի երկու պալատների բոլոր անդամներին, ինչպէս նաեւ մամուլի միջոցներին օգոստոսին յանձնուեց «Ապատեղեկատուութիւն. Աղբրեջանի հիմնական արտահանման արտադրանքը» փաստաթուղթը, որն անկախ աղբիւրներից ստացած փաստերով բացայայտում է աղբրեջանական կեղծիքները:

Արդէն օգոստոսի 12-ին Հայ Դատի Ուրուգուայի յանձնախումբը հանդիպում ունեցաւ Սենատի Միջազգային յարաբերութիւնների յանձնաժողովի հետ եւ ներկայացրեց աղբրեջանական ագրեսիայի բնոյթը, ընգծեց հակամարտութեան վերսկսման վտանգը, ինչպէս նաեւ անդրադարձ կատարեց Սերի դաշնագրի 100-ամեակին:

Սեպտեմբերի 1-ին Հայ Դատի յանձնախմբի անդամները հանդիպում ունեցան Ուրուգուայի Արտաքին գործերի նախարարութեան քաղաքական հարցերով տնօրէնի հետ: Դրա ընթացքում արձարուեց Ուրուգուայի կողմից Դարաբաղեան հակամարտութեան շրջանակում ներգրաւածութեան մեծացման անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ փոխանցեց Ուրուգուայի կողմից Արցախի Հանրապետութեան ճանաչման համայնքային պահանջը:

Արցախեան պատերազմ

Պատերազմի 44 օրերի ընթացքում Հայ Դատի յանձնախումբը, իր կողմից տարուող քաղաքական-յարաբերական աշխատանքին զուգահեռ, նաեւ համայնքային այլ կազմակերպութիւնների հետ

միանաբար մշակեց ընդհանուր ռազմավարություն՝ նպատակ ունենալով հասնել Ուրուգայի կողմից Արցախի Հանրապետության ճանաչմանը:

Սեպտեմբերի 28-ին Ուրուգայի Արտաքին գործերի նախարարությունը ռազմական գործողությունների վերաբերեալ տարածեց մի յայտարարություն, որը որեւէ հասցեականություն չէր պարունակում, ստահոգություն էր արտայայտում տարածաշրջանում բռնության աճի կապակցությամբ եւ այլն: Բնականաբար, Հայ Դատի յանձնախմբի եւ ամբողջ համայնքի համար այդ յայտարարությունը դժգոհության տեղիք տւեց: Յանձնախմբի կողմից տարած աշխատանքի արդիւնքում, այդ թւում Ուրուգայի նախագահ Լազարոյի հետ ունեցած ուղիղ կապի միջոցով եւ իր յանձնարարությամբ ԱԳ նախարարությունը հրապարակեց երկրորդ յայտարարությունը, նշելով թէ Ուրուգայը դատապարտում է հայ ժողովրդի դէմ կատարած յարձակումները:

Սեպտեմբերի 28-ին յայտարարությամբ հանդէս եկաւ «Արցախի ուրուգայցի բարեկամների խումբը» եւ խստորէն դատապարտելով զանգաձային յարձակումը՝ հրադադարի կոչ արեց: Խումբն


իր աջակցությունը յայտնեց Արցախի Հանրապետության ինքնորոշման իրաւունքի իրացմանը:

Հայ Դատի Ուրուգայի յանձնախմբի աշխատանքների արդիւնքում նաեւ, Ուրուգայի Սենատի կողմից միաձայնութեամբ ընդունւած բանաձեւով դատապարտուեց Հայաստանի եւ Արցախի վրայ կատարած յարձակումն ու քաղաքացիական բնակչության ռմակոծումը: Դատապարտուեց նաեւ պատերազմին Թուրքիայի կողմից հաւաքագրած վարձկանների սնանակցությունը (սկար 7):


Հոկտեմբերի 11-ին, յանձնախմբի ջանքերով տապալեց «ՕՐԴ» համալսարանում նախատեսւած «Էրդոհանի ժամանակաշրջանի Թուրքիայի արտաքին քաղաքականությունը» միջոցառման անցկացումը:

Հոկտեմբերի 12-ին երկրորդ յայտարարությամբ հանդէս եկաւ Արցախի ուրուգայցի բարեկամների խումբը: Վերջիններս իրենց զօրակցությունը յայտնեցին Արցախի Հանրապետութեանը եւ անյապաղ հրադադարի ու բանակցությունների վերսկսման կոչ արեցին:


Արդէն հոկտեմբերի 14-ին յայտարարությամբ հանդէս եկաւ Ուրուգայի Պատգամաւորների պա-



Նկար 7



Նկար 8



Un libro imprescindible sobre el reconocimiento del Genocidio Armenio por parte de Uruguay en 1965

Una investigación del historiador Gerardo Caetano, Salvador Neves y Mauricio Rodríguez con documentos inéditos provenientes del Archivo Nacional de Armenia y de la prensa nacional e internacional.

Un proyecto conjunto de la Fundación Zelmar Michelini (Uruguay) y la Fundación Hrayr Maroukhian (Armenia) para rescatar la memoria de “uno de los momentos más honrosos de la historia uruguaya”.

Prólogos del Dr. Juan Méndez y el Ing. Mario Nalpatian.



6 մինր

լատր: Վերջինս դատապարտեց քաղաքացիական բնակավայրերի մաքարծրումն ու Թուրքիայի կողմից վարձկանների հաաքագրումն ու նրանց սասնակցութիւնը պատերազմական գործողութիւններին:

Խիստ յատկանշական է հոկտեմբերի 28-ին Ուրուգայի նախկին չորս նախագահների համատեղ յայտարարութիւնը, որով նրանք իրենց զօրակցութիւնն ու պաշտպանութիւնն էին յայտնում Հայաստանին: Յայտարարութիւնը ստորագրել էին նախկին նախագահներ Խոսիո Ս. Նակգինեթթին, Լուիս Ալբերտո Լակաժէ դէ Հերրերան, Դանարէ Վասգէսը եւ Խոսէ Մուխիգան (նկար 8):

Դեկտեմբերին, կայացաւ «Հայ Դատը Արարատի եւ Ուրուգայի միջեւ. մի ճանաչման պատմութիւն» գրքի առցանց շնորհանդէսը, որին սասնակցեցին Ուրուգայի գործող նախագահն ու փոխնախագահը, Ուրուգայի Հանրապետական համալսարանի ռեկտոր Ռիկարդո Ալին, գրքի հեղինակներ՝ Խորարդո Գաեղանձն, Սալադոր Նաեաը եւ Մատրիսիո Ռոդրիգեսը (նկար 9): Շնորհանդէսին սասնակցում էին

նաեւ «Միջելինի» հիմնադրամի ներկայացուցիչ Սեւիլիա Միջելինին եւ «Հրայր Մարուխեան» հիմնադրամի ներկայացուցիչ Մարիո Նալբանդեանը:

Գիրքը վերաբերում է Ուրուգայում Հայ Դատի գործունէութեանը, յատկապէս Ցեղասպանութեան ճանաչման գործընթացին: Գրքի ֆինանսատրումն իրականացել է «Հրայր Մարուխեան» հիմնադրամի կողմից, իսկ հետազօտական աշխատանքը կատարել է «Ջելմար Միջելին» հիմնադրամը: Հետազօտութեան 200 օրինակներ բաժանել են կառավարութեան, խորհրդարանի, համալսարանների, գրադարանների, լրագրողների միջեւ:

«Արցախի ուրուգայցի բարեկամներ» խմբի անդամ, սարդու իրաւունքների եւ միջազգային իրաւունքի սասնագէտ դոկտ. Օսկար Լորես Կուլտարասնանի կողմից հեղինակած «Հայոց մշակոյթի ցեղասպանութիւնը» գիրքը անգլերէն հրատարակելու ուղղութեամբ տարել են անհրաժեշտ աշխատանքներ: Ձեռնարկի հովանատրն է «Խաչիկ Պապիկեան» հիմնադրամը:

Հայ Դատի Բրազիլիայի յանձնախումբ

Causa Armenia – CNA Brasil



Հայ Դատի Բրազիլիայի յանձնախմբի կողմից իրականացած քաղաքական-յարաբերական աշխատանքների արդյունքում 44-օրեայ պատերազմի ընթացքում Հայ ժողովրդին զօրակցութեան խօսքեր են յղել եւ ադրբեջանա-թուրքական յանցատուր գործողութիւնները դատապարտել Բրազիլիայի խորհրդարանի, Սան Պաուլօ եւ Օսասօ քաղաքների քաղաքային խորհրդարանի անդամներ, նտատրականներ, ակադեմիական գործիչներ: Յանձնախումբը կազմակերպել է բողոքի ցոյցեր եւ քարոզչական բնոյթի տարրեր միջոցառումներ:

**PROTESTO
PELA PAZ E CONTRA A
AGRESSÃO AZERÍ**

30/09 18:30
Av. Paulista, 1313
Em frente à FIESP

**Nossos soldados no
campo de batalha e
nós no campo da voz.
Faça a sua parte!**

MÁSCARAS E DISTANCIAMENTO SOCIAL SÃO OBRIGATORIOS!
RESSALTAMOS QUE ESTE É UM PROTESTO PACÍFICO.



Հայ Դատի Լիբանանի յանձնախումբ

Armenian National Committee of Lebanon (ANCL)



www.anclebanon.org | www.facebook.com/ANCLLebanon

Սիրիայի Հանրապետության խորհրդարանի կողմից Հայոց Ցեղասպանությունը ճանաչող բանաձեռի ընդունումից յետոյ, Հայ Դատի Լիբանանի մարմինը, հաղորդագրությամբ ողջունեց բանաձեռի միաձայն ընդունման փաստը:

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի մարմինը 13 փետրվար 2020-ին լիբանանեան լրատամիջոցներին մի հաղորդագրություն յղելով ողջունեց Սիրիայի խորհրդարանի կողմից Հայոց Ցեղասպանությունը ճանաչող բանաձեռի միաձայնությամբ որդեգրումը: Արդէն փետրվարի 27-ին Հայ Դատի մարմինը ներկայացնող պատվիրակությունը՝ ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունու գլխավորությամբ այցելեց Լիբանանում Սիրիայի դեսպան Ալի Աբդելին (նկար 1): Հանդիպման ընթացքում Յակոբ Բագրատունին շնորհակալություն յայտնեց Սիրիայի խորհրդարանին՝ բարձր գնահատելով վերջինիս կողմից Հա-

յոց Ցեղասպանության ճանաչումն ու Օսմանեան Կայսրության դատապարտումը:

Լիբանանի Հայ Դատի մարմինը 2020 թ. մարտի 6-ին կազմակերպեց «Արցախի Հանրապետությունը՝ լիբանանցիների վկայությամբ» (նկար 2) խորագրով գրոյց-հաւաքը, որին մասնակցում էին ներկայ ու նախկին նախարարներ, պատգամաւորներ, լիբանանեան քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, մտաւորականներ, խմբագիրներ եւ լրագրողներ: Օրայ բանախօսներն էին՝ դոկտ. Սոհաննադ Նուրէդինը, դոկտ. Լէյլա Նիքոլյան եւ հաղորդավար Հասսան Շամին, ովքեր ակնատեսի վկայությամբ ներկայացրեցին Արցախի Հանրապետությունը, որտեղ 2019 թ. հոկտեմբերին, Հայ Դատի մարմնի հրաւերով, մասնակցել էին «Pro Artsakh» ֆորումին:

Հայ Դատի Լիբանանի մարմինը վարել է ակտիւ յարաբերական աշխատանքներ, մասնաւորապէս



Նկար 1



Նկար 2

44-օրեայ պատերազմի ընթացքում, ինչպէս նաեւ դրանից առաջ ու յետոյ տասնեակ պաշտօնական գրութիւններ են հասցէագրել Լիբանանում գործող այլ պետութիւնների դեսպանութիւններին՝ մասնատրապէս Ուրուգայի, Վրաստանի, Ռուսաստանի, ՍՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի դեսպաններին եւ Եւրոմիութեան պատիրակութեան ղեկավարին՝ բարձրացնելով հայութեանը յուզող հարցերի լայն շրջանակ:

Հայ Դատի մարմինը նաեւ քաղաքական աշխատանք է իրականացրել լիբանանցի քաղաքական գործիչների եւ մտատրականների հետ, որպէսզի հնարատր լինի Լիբանանում ունենալ ադրբեջանաթուրքական ագրեսիայի դատապարտման լայն շրջանակ:

Այդ օրերին կատարել է նաեւ մեծ ծաւալի քարոզչական աշխատանք՝ փորձելով լիբանանեան հասարակութեանը տրամադրել Արցախի շուրջ զարգացումների վերաբերեալ օրինակի եւ իրական տեղեկատուութիւն:

Անցած տարւայ ընթացքում Լիբանանում նկատուեց հակահայ յայտարարութիւնների եւ երեւոյթների աճ, ինչի կանխարգելմանը լծեց նաեւ Հայ Դատի Լիբանանի մարմինը: Այդ շրջանակում Լիբանանում գործող թուլ 18 դեսպանատների ուղարկեցին համապատասխան հաղորդագրութիւններ:

Լիբանանի խորհրդարանի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչման 20-րդ ամեակի առիթով, Հայ Դատի մարմինը ստեղծեց եւ տարածեց վիդէոհոլովակ, որն անփոփում էր Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործընթացի դերակատարների յուշերը:

Հայ Դատի Լիբանանի մարմինը կայուն կապ է պահել եւ աշխատանքներ իրականացրել 2019 թ. հոկտեմբերին Ստեփանակերտում կայացած «Pro Artsakh» ֆորումին մասնակցած «Արցախի լիբանանցի բարեկամներ» խմբի անդամների հետ, որոնք պատերազմի ընթացքում հանրային եւ քաղաքական օժանդակութիւն ցուցաբերեցին լիբանանահայ համայնքին:



Հայ Դատի Աստրիայի յանձնախումբ

Austrian Armenian Committee for Justice and Democracy



www.facebook.com/aacjd

Haytadologi 1. Շայկական ժամանակակից հարցերին ևսիրած դասընթաց, յունարի 31-փետրարի 2, 2020 թ.

Գերմանիայից, Սառիայից, Հոլանդիայից, Լեհաստանից անվի քան 50 երիտասարդներ մասնակցեցին Հայ Դատի ժամանակակից հարցերի վերաբերեալ եռօրեայ դասընթացին:

Դասընթացն ընդգրկեց հայոց ժամանակակից պատմութեան, Հայոց Ցեղասպանութեան, Ղարաբաղեան հակամարտութեան եւ դրա բանակցային գործընթացի, երոպահայ համայնքի մարտահրաւէրների, քարոզչական-յարաբերական աշխատանքի, ՀՀ-ԵՄ յարաբերութիւնների, Հայ Դատի ներկայ հոլովոյթի, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններին վերաբերող հարցերի լայն շրջանակ, ինչպէս նաեւ գործնական վարժութիւններ: Իբրեւ բանախօսներ դասընթացի ժամանակ հանդէս եկան ՀՅԴ Բիւրոյի անդամ, Բիւրոյի Հայ Դատի



Սկար 1



Սկար 2



Սկար 3

Կենտրոնական գրասենեակի պատասխանատու Կիրո Մանոյեանը, Հայ Դատի Երոպայի յանձնախմբի նախագահ Գասպար Կարապետեանը, ՀՅԴ Արեւմտեան Երոպայի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հրաչ Վարժապետեանը, դասընթացին առցանց միացաւ Հայ Դատի Ամերիկայի յանձնախմբի գործադիր տնօրէն Արամ Հանրաբեանը: Դասընթացի այս ծրագիրը շարունակական է լինելու (նկար 1-3):

**Սումգայիթի եւ Բաքւի ջարդերին
Նկրած երթ Վիեննայում**

Փետրարի 22-ին Հայ Դատի Աստրիայի յանձնախմբի կազմակերպմամբ Վիեննայի կենտրո-

նական փողոցներով անցկացւեց երթ՝ ի ոգեկոչումն Սումգայիթի եւ Բաքւի ջարդերի զոհերի յիշատակի: Երթը մեկնարկեց Վիեննայի նշանաւոր Հոֆբուրգ պալատի Հիլթն հրապարակից: Ցուցարարներն մէկ անգամ եւս յիշեցրեցին աղբրեջանական ոճրագործութիւնները, Բաքւի ռազմատենչ եւ հակահայ քաղաքականութիւնը, հայկական ջարդերի կազմակերպիչներին պատասխանատուութեան չենթարկելը, ի հակառակ դրանց՝ ընդգծեց Արցախի Հանրապետութեան ժողովրդավարական բնոյթը: Հազարաւոր անցորդների բաժանուցին աղբրեջանական գործելաճը մերկացնող թռուցիկներ, գրքեր ու տեսասկաւառակներ (նկար 4-5):



Նկար 4



Նկար 5

Մամուլ

Յանձնախմբի աշխատանքների արդիւնքում Աստրիական սամուլում հրատարակել են Արցախին նւիրած յօդաձներ, իսկ պատերազմի ընթացքում հայանպաստ յօդաձներով հանդէս են եկել «Wiener Zeitung», «Profil», «Kurier» կարեւոր թերթերը:

Հայոց Յեղապանութեան ոգեկոչում

Հայոց Յեղասպանութեան 105-րդ տարելիցի ոգեկոչման շրջանակում յանձնախումբը նանակներ յղեց Աստրիայում գործող բոլոր դիանագիտական ներկայացուցչութիւններին, ինչպէս նաեւ

Աստրիայի կառավարութեանն ու խորհրդարանի պատկան մարմիններին:

Արցախեան պատերազմ

Հայ Դատի Աստրիայի յանձնախումբը հոկտեմբերի 5-ին բողոքի նանակ յղեց Աստրիայի վարչապետ Սեբաստիան Կուրցին՝ աստրիական իշխանութիւններից պահանջելով յաւելեալ ճնշում բանեցնել Թուրքիայի ու Ադրբեջանի վրայ՝ վերջիններիս սանձազերծած պատերազմին վերջ տալու համար: Ի պատասխան նանակի, վարչապետը նշանակեց յատուկ ներկայացուցիչ, ով հանդիպեց



Նկար 6



Նկար 7



Նկար 8

յանձնախմբի հետ: Յաջորդ օրը վարչապետ Կուրցը պատերազմի դադարեցման կոչով հանդէս եկաւ եւ պատրաստականութիւն յայտնեց Հայաստանին ու Սղրբեջանին տրամադրել բանակցային հարթակ:

Հայ Դատի յանձնախմբի նամակի յանձնման օրը, վարչապետի նստավայրի դիմաց յանձնախմբի անդամների մի խումբ հայ երիտասարդների կողմից տեղի էր ունեցել ակցիա:

Հոկտեմբերի 17-ին Վիեննայի Օպերայի հրապարակում տեղի ունեցաւ «Ժաղաղութիւն Արցախին» խորագրով սշակութային միջոցառում, որը կազմակերպած էր Հայ Դատի յանձնախմբի եւ «Աստրիայի հայ ուսանողական-երիտասարդական» միութեան կողմից:

Միջոցառումը նւիրած էր մինչ այդ պահը շարունակող պատերազմի ընթացքում զոհած եւ

վիրաւորած հայորդիներին, ովքեր Հայրենիքի սահմանները պաշտպանում էին ահաբեկչական յարձակումներից: Չնայած եղանակային անբարենպաստ պայմաններին՝ հռչակաւոր հայ ու հայութեան բարեկան մի շարք արեստագէտներ աւելի քան մէկուկէս ժամ ելոյթներ ունեցան եւ իրենց արեստի միջոցով յարգանքի տուրք մատուցեցին: Միջոցառման ընթացքում անցորդներին բաժանեցին տեղեկատուական բնոյթի նիւթեր (նկար 6-8):

Հայ Դատի Աստրիայի յանձնախումբը՝ նկատի ունենալով Արցախում հեղուղ արիւնը, համագործակցաբար Աստրիայի Կարմիր խաչի հետ, կազմակերպեց արեան յանձնման ակցիա, որը կրում էր «Let's Donate Blood to Stop the Blood» (Յանձնենք արիւն, կանգնեցնելու համար արիւնը) խորագրով (նկար 9, 10):



Նկար 6



Նկար 10

Հայ Դատի Կիպրոսի յանձնախումբ

Armenian National Committee of Cyprus



www.facebook.com/haytadcy

Հակառակ համավարակի ստեղծած անբարենպաստ պայմաններին՝ Հայ Դատի Կիպրոսի յանձնախումբը նախաձեռնել է իրականացրել է քաղաքական-յարաբերական լայնածավալ գործունեություն: Այնուամենայնիւ, համավարակի անցկացումը չեղարկել կան յետաձգել է որոշ ծրագրեր, ինչպիսիք են՝ Սերի դաշնագրի 100-ամեակի միջոցառումը, Արցախի հերոսներին նրիաձ պուրակի բացումը, այցելություններ Արցախ եւ Հայ Դատի լսարաններ:

Յանձնախումբը քաղաքական-յարաբերական աշխատանքներ է տարել հանդիպումներ ունենալով խորհրդարանական եւ արտախորհրդարանական բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Հետետողական աշխատանք է տարել

կիպրական հասարակական-քաղաքական շրջանակներում Դարաբաղեան հիմնախնդրի էութան վերաբերեալ տեղեկացաձութան բարձրացման ուղղութեամբ՝ զուգահեռներ անցկացնելով Կիպրոսի Հանրապետութեան թուրքական օկուպացիայի հետ:

Արցախի բարեկամների (Pro Artsakh) շրջանակ

2020 թ. մարտի 6-ին Հայ Դատի Կիպրոսի յանձնախումբը կազմակերպեց ներկայացուցչական ընդունելություն, որի ընթացքում հանդիսատրապէս ազդարարեց «Արցախի բարեկամների շրջանակի» կազմութեան մասին, որին անդամակցում են շուրջ 20 անձինք՝ քաղաքական կուսակցությունների ներ-



Նկար 1



Նկար 2



Նկար 3



Նկար 4



Նկար 5

կայացուցիչներ, պատգամաւորներ, ակադեմիական գործիչներ եւ լրագրողներ: Ներկաներին ուղղած իր խօսքում՝ Հայ Դատի Կիպրոսի յանձնախմբի նախագահ Յակոբ Գազանճեանը ներկայացրեց բարեկանութեան շրջանակի կազմութեան դրոշապատճառները եւ ներկայացրեց Արցախի բարեկանների անունները: Ելոյթով հանդէս եկան նաեւ ՀՅԴ Հայ Դատի Եւրոպայի յանձնխմբի նախագահ Գասպար Կարապետեանն ու Արցախի Հանրապետութեան արտաքին գործերի նախարարի տեղակալ Արմինէ Ալեքսանեանը, ով հանդիպում ունեցաւ Կիպրոսի խորհրդարանի նախագահ Դմիթրիս Սիլուրիսի հետ: Ձեռնարկին ներկայ էին եւ այն լուսաբանեցին կիպրական հինգ խոշոր հեռուստաընկերութիւնների ներկայացուցիչները: Ձեռնարկի ընթացքում ստորագրուեց «Արցախի բարեկանների շրջանակի» հռչակագիրը, ապա ձեւաւորուեց շրջանակի վարչութիւնը հետեւեալ կազմով՝ Էլենի Թէոխարուս (վարչութեան նախագահ, Կիպրոսի «Համերաշխութեան շարժում» կուսակցութեան նախագահ), Կոստիս Էֆստադիու (պատգամաւոր, ԷՏԵՔ կուսակցութեան փոխնախագահ), Եօրդոս Պերտիկիս (պատգամաւոր), Սիխալիս Եօրդալլաս (պատգամաւոր), Մնդրէա Պապախարալանպուս (Ստորոլոսի քաղաքապետ), Սիմոն Այնեճեան եւ Յակոբ Գազանճեան (նկար 1-4):

Արցախի պատերազմ

Սեպտեմբերի 27-ին Սդրքեջանի կողմից սանձազերծուած պատերազմը Հայ Դատի Կիպրոսի յանձնախմբին կանգնեցրեց մեծ պատասխանատւութեան առաջ՝ առաւել ակտիւ պաշտպանելու հայութեան շահերը: Պատերազմի լուրը ստանալուց

անմիջապէս յետոյ, յանձնախումբը դիմեց «Արցախի բարեկանների շրջանակի»-ն: Հոկտեմբերի 5-ին Հայ Դատի յանձնախումբը հրաւիրեց մասնաւորի ասուլիս, որին մասնակցում էր նաեւ «Արցախի բարեկանների շրջանակի» վարչութեան անբողջ կազմը (նկար 5):

Հայ Դատի Կիպրոսի յանձնախումբը մասնակցեց նաեւ Արցախի օժանդակութեան Կենտրոնական յանձնախմբի աշխատանքներին: Սյս առումով, յանձնախմբի հիմնական նպատակն էր յօգուտ Արցախի ապահովել նիւթական հանգանակութիւններ: Դրա արդիւնքում, Արցախ ուղարկեց առաւել քան 150.000 EURO ընդհանուր արժողութեամբ դեղորայք: Կիպրոսի պետութիւնը նոյնպէս ի նպաստ Արցախի հատկացում կատարեց:

Հոկտեմբերի 1-ին կիպրահայ համայնքը Նիկոսիայում բազմամարդ ցոյց կազմակերպեց, որը երթով ուղեւորեց Ռուսաստանի Դաշնութեան, Ֆրանսիայի եւ ՄԱՆ ղեսպանատներ: Համայնքի ղեկավարութիւնը ներկայացնող պատիրակութիւնը նամակ յանձնեց նշեալ ղեսպանատներին՝ պահանջելով իբրեւ Սինսկի խմբի համանախագահ երկրներ, միջամտել զարգացումներին, կանխել Թուրքիայի ներգրաւածութիւնը պատերազմին եւ վերջ տալ ռազմական գործողութիւններին: Յոյցին մասնակցում էին նաեւ «Արցախի բարեկանների շրջանակի» անդամները:

Հոկտեմբերի 9-ին, շնորհիւ «Արցախի բարեկանների շրջանակի» ներկայացուցիչների ջանքերի, Կիպրոսի խորհրդարանը միաձայնութեամբ ընդունեց Արցախի դէմ ադրբեջանական ագրեսիան դատապարտող բանաձեւ, Խորհրդարանը դատապարտեց նաեւ Թուրքիայի անվերապահ աջակցու-

թինը Ադրբեջանին եւ վարձկան ահաբեկիչների ներգրաւումը ռազմական գործողութիւններին

Ի զօրակցութիւն Արցախի, հոկտեմբերի 25-ին, Նիկոսիայում անցկացւեց իրազեկման աստուերթ (նկար 6):

Ռազմական յանցագործութիւնների դադարից յետոյ՝ յանձնախմբի նախաձեռնութեամբ՝ «Արցախի բարեկամների շրջանակի» վարչութեան կողմից հայ գերիների ազատ արձակման խնդրով նամակ ուղարկեց Կիպրոսում Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի դեսպաններին, ինչպէս նաեւ Կարմիր Խաչի եւ «Amnesty International»-ի ներկայացուցիչներին:

Արցախում ընթացիկ զարգացումների առնչութեամբ Հայ Դատի յանձնախմբի նախագահը եւ յանձնախմբի անդամները կիպրական լրատուամիջոցների հետ ակտիւ աշխատանքի մէջ են եղել: Յանձնախումբն ինտենսիւ հանդիպումներ է ունեցել եւ քաղաքական խորհրդակցութիւններ անցկացրել կիպրական քաղաքական լայն շրջանակների հետ:

Այլ Հարցեր

2020 թ. տարեակգբին Ադրբեջանի բռնատիրական վարչակազմը, հաստատարիւ իր բիրտ գործելաճի, Կիպրոսի «Համերաշխութեան շարժում» կուսակցութեան նախագահ եւ մեր ժողովրդի մեծ բարեկան Էլենի Թէոխարուսին ձերբակալելու եւ

Ադրբեջանին արտայանձնելու դիմում ներկայացրեց Կիպրոսի իշխանութիւններին: Յանձնախումբն իր գործուն զօրակցութիւնը յայտնեց դոկտ. Թէոխարուսին: Յանձնախումբը 2020 թ. ընթացքում աշխատանքներ է տարել նաեւ ՀՀ-ԵՄ Հանապարհակ եւ ընդլայնաճ գործընկերութեան համաձայնագրի վաւերացման աշխատանքներին նպաստելու եւ այդ գործընթացում Ադրբեջանի վնասակար ներգործութիւնը բացառելու ուղղութեամբ: Դարաբաղեան հիմնախնդրի ճիշտ ներկայացման նպատակով որոշակի աշխատանքներ են տարել Եւրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կիպրացի պատգամաւորների հետ:

Հայ Դատի յանձնախումբն ակտիւ աշխատանքներ է տարել նաեւ տեղական ինքնակառաւարման մակարդակում: Յանձնախմբի խնդրանքով, կիպրական Պաֆոս քաղաքի մէջ վերանաւուեց «Թալէաթ փաշա» անունը կրող փողոցը, ապա հաշի առնելով, որ Լառնագա քաղաքի փողոցներից մէկը կրում է BOZ KURT (գորշ գայլեր) անանումը, յանձնախումբը դիմեց Լառնագայի քաղաքապետարան, յայտնելով յանձնախմբի վրդովմունքը: Փոխքաղաքապետի հետ տեղի ունեցաճ գրոյցի ընթացքում ներկայացւել են փողոցի անանափոխութեան համար հիմք հանդիսացող պատճառները: Փոխքաղաքապետը խոստացել է, որ հարցը քննարկելու է քաղաքի աւագանու կողմից: Հայ Դատի յանձնախումբն ուշադրութեամբ հետետում է գործընթացին:



Նկար 6

Հայ Դատի Ֆրանսիայի յանձնախումբ

Comité de Défense de la Cause Arménienne (CDCA)



www.cdca.asso.fr | www.facebook.com/cdcaANCfr

ՅՈՒՆԻԱՐ

Վ ՀՅԴ Ֆրանսիայի Հայ Դատի յանձնախումբը ամէն տարի նամակացում է CCAF-ի (Ֆրանսայի հայկական կազմակերպութիւնների համակարգող խորհուրդ) ամենամեայ ընթերիքին: 2020թ. այն անցկացւեց յունարի 29-ին՝ ի յիշատակ 2001 թականին նախագահ Ժակ Շիրակի կողմից հայերի ցեղասպանութիւնը ճանաչող օրէնքի ուժի մէջ մտնելու:

Ընթերիքի ընթացքում, համանախագահների եւ Հանրապետութեան նախագահ Էմանուէլ Մակրոնի ելոյթները թոյլ տուցին քննարկել եւ վերանայել Ֆրանսիայի եւ, նամանաւորապէս, նրա արտաքին գործերի նախարարութեան որոշումը խոչընդոտելու՝ Ֆրանսիական քաղաքների եւ ինքնակարավարած համայնքների հարաբերութիւններին Արցախի Հանրապետութեան եւ նրա քաղաքների կան համայնքների հետ (տկար 1-3):



Սկար 1



Սկար 2



Սկար 3



Նկար 4

ԱՊՐԻԼ

Վերականգնողական համաճարակի պատճառով Ֆրանսիայի մեջ Հայոց Ցեղասպանության ոգեկոչումի միջոցառումները տեղի ունեցան առջանց:

Փարիզի ցեղասպանության յուշարձանի մօտ տեղի ունեցաւ ոգեկոչման պաշտօնական բայց ոչ ժողովրդական արարողութիւն մը կազմակերպած CCAF-ի՝ Ֆրանսիայի հայկական կազմակերպութիւնները համակարգող մարմնի կողմէն, որտեղ նախագահ Մակրոնին ներկայացուց Արդարադատութեան նախարար Սիզոլ Պէլուպէն: Փարիզի քաղաքապետ Ման Իտալկոն եւ այլ բարձրաստիճան անձինք եւս ներկայ էին արարողութեան: Այս առիթով Ֆրանսիայի վարչապետ Էդուար Ֆիլիքը ցեղասպանութեան 105-րդ ամեակի ուղերձ յղեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանին, իսկ նախագահ Մակրոն ընկերային ցանցերու միջոցաւ ոգեկոչեց ցեղասպանութիւնը (նկար 4):

Ցեղասպանութեան 105-րդ ամեակի առիթով ՀՅԴ Ֆրանսիայի Հայ Դատի յանձնախմբի ատենապետ Ժիլ Պոյաճեանը Ֆրանսական հանրաճանաչ “Le Journal du Dimanche” պարբերականին մէջ Հայոց Ցեղասպանութեան մասին սինակ մը հրատարակեց: Իր յօդածին մէջ ան ըսաւ՝ չունենալով ցոյց կազմակերպելու իրաւունք՝ այս տարի Հայոց Ցեղասպանութեան ժառանգորդներուն եւ հայկական համայնքի անդամներուն համար մեկուսացումն ու փակումը առաւել անտանելի են:

ՅՈՒԼԻՍ

Վ 19 յուլիսի, 2020 թական. Յոյց ընդդէմ Ադրբեջանի դեսպանատան

2020 թ. յուլիսի 19-ին ՀՅԴ Ֆրանսիայի Հայ Դատի յանձնախումբը մասնակցեց Ադրբեջանի դեսպանատան մօտ անցկացվող ցոյցին՝ դատապարտելու համար Հայաստանի Տաւուշի սահմանին Ադրբեջանի բռնապետութեան կողմից սկսած յարձակումը:

Հայ Դատի յանձնախումբը նախագգուշացրեց Ֆրանսիայի կառավարութեան եւ քաղաքական գործիչներին այդ ռազմական սադրանքների մասին, որոնք վախ են յարուցում տարածաշրջանում նոր սրացումից: Յանձնախումբը Ֆրանսիայի հայ համայնքի կողքին, խստօրէն դատապարտեց այդ գործողութիւնները եւ կոչ արեց միջազգային հանրութեան, մասնաւորապէս Ֆրանսիային զգօն լինել եւ ճնշում գործադրել Ադրբեջանի իշխանութիւնների վրայ վերջ տալու այդ սադրանքներին:

Վ ՀՅԴ Ֆրանսիայի Հայ Դատի յանձնախումբը երկու գործով դատի տաւ Ֆրանսիայի մէջ գործող «Գորշ գայլեր» թուրք ծայրաճեղական խմբաւորման անդամ Սիմեո Չեթինին:

2020 յուլիսին Հայ Դատի յանձնախումբը շարք մը ցոյցեր կազմակերպեց՝ ընդդէմ ադրբեջանական ռազմական ակրեսիային եւ ի պաշտպանութիւն Հայաստանի եւ անոր սահմաններուն: Նման ցոյց կազմակերպուեցաւ նաեւ Ռոնի շրջանի Տեսին քաղաքի մէջ: Հայկական ցոյցին միջամտեցին թուրք ծայրայեղական «Գորշ գայլեր» զինուած անդամներ, որոնք ստելութեան եւ բռնութեան հրահրող կոչեր ըրին, եւ յարձակեցան հայկական խանութներու վրայ:

Թուրք ծայրայեղական «Գորշ գայլեր» խմբաւորման եւ Ֆրանսիայի հայ համայնքի միջեւ բախումները մեծ արձագանք ստացան ֆրանսական մամուլի մէջ եւ քաղաքական շրջանակներուն մօտ:

Բախումներուն անդրադարձան Ֆրանսական ամենաշատ կարդացած թերթերը: Հայ Դատի յանձնախումբի ջանքերով շարք մը քաղաքական գործիչներ որոցմէ՝ նախկին նախագահ Ֆրանսուա Օլանտը հայ համայնքին սատարող յայտարարու-

թիններ կատարեցին եւ նշեցին, որ հայաստեացու-
թինը տեղ չունի Ֆրանսայի մէջ:

Երկու դատավարութիւններու արդիւնքները
դրական էին հայկական համայնքին համար: Չե-
թինը վեց ամիս պայանական ազատագրկում,
հինգ տարի քէարկելու եւ ընտրելու իրատունքի
գրկում եւ 2000 եւրօ տուգանք ստացաւ: Իսկ Գորշ
գայլերու խմբաորումը Ֆրանսիայի կառավարու-
թեան 3 նոյեմբերի 2020-ի որոշմամբ եւ ներքին

գործերու նախարարի յայտարարութեամբ պաշ-
տօնապէս լուծարուեցաւ եւ անոր գործունէութիւնը
արգիլեցաւ Ֆրանսիայի մէջ:

**Ողջ Պատերազմի ընթացքին
բազմաթիւ ցոյցերու համակազմա-
կերպում եւ մասնակցութիւն**

**Վ Յոյց Ադրբեջանի դեպանութեան առջեւ՝
2020 թ. Սեպտեմբերի 29-ին**

2020-ի սեպտեմբերի 27-ին, ի շարունակութիւն
վերջին ամիսների ընթացքում արձանագրած
բազմաթիւ սադրանքներին, Ադրբեջանը լայնա-
մաշտաբ յարձակման անցաւ Արցախում:

Հայ Դատի յանձնախումբը մասնակցեց Ֆրան-
սիայում Ադրբեջանի դեպանատան մօտ CCAF-ի
կողմէն կազմակերպած ցոյցին՝ հանցագործ Ադր-
բեջանի բռնապետութեան գործողութիւնների դեմ,
ինչպէս նաեւ ֆրանսիական հասարակութեան եւ
իշխանութիւններին նախազգուշացնելու յարձակ-
ման մասին, եւ կանխելու երկար պատերազմի հե-



Նկար 5



Նկար 6

րանկարը, որն ապակայունացում է նաև ողջ տարածաշրջանին և Ֆրանսայի համար:

❖ 2020 թ. Հոկտեմբերի 8-ի ցույց Թուրքիայի դեսպանատան առջև

Հոկտեմբերի 8-ին Հայ Դատի յանձնախումբը մասնակցեց ցույցի նախաձեռնությունը Թուրքիայի դեսպանատան դիմաց դատապարտելու Թուրքիայի մասնակցությունը Արցախում 12 օր առաջ սկսած յարձակմանը:

Հաաքը առիթ էր բազմաթիւ ելոյթների, ինչպիսիք էին պատգամաւոր Ֆրանսուա Պուպոնիի, Փարիզի 9-րդ շրջանի փոխքաղաքապետ Ալեքսիս Գովսիյանի և պարոն Պատրիկ Կլուզմանի՝ Փարիզի քաղաքապետի տեղակալ և փաստաբան: Մասնակից բոլոր քաղաքական դէմքերը դատապարտեցին Թուրքիայի մասնակցութիւնը:

❖ 2020 թականի հոկտեմբերի 13-ի ցույց Ազգային ժողովի դիմաց

Հոկտեմբերի 13-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի առջև տեղի ունեցան ցույցեր, որոնց աջակցում էին բազմաթիւ ընտրուած պաշտօնեաներ, ինչպիսիք են պատգամաւորներ Դանիէլ Կազարեանը, Գիյոն Կասարեանը և սենատորներ Պիեռ Ուզուլիասը և Վալերի Բուայէն:

Հանրահաաքի այս կոչն իսկական ազդեցութիւն ունեցաւ, քանի որ անլի քան 7000 սարդ հաաքել էր պատգամաւորներին ահազանգելու արդէն 17 օր տետղ պատերազմի մասին:

Սյս հանրահաաքին յստակ պահաջներից մէկն էր Արցախի անկախութեան ճանաչումը Ֆրանսիայի օրէնսդիր մարմինների կողմից:

Հայ Դատի յանձնախումբը և հայ համայնքը կը շարունակեն բազմապատկել ժողովրդային հաաքները նախազգուշացնելու և դատապարտելու համար յանցաւոր Սդրբեջանական ռեժիմին անօրինական յարձակումը Արցախի խաղաղասեր ժողովուրդի վրայ, ինչպէս նաև պատերազմական և անսարդկային ոճիրները ընդդէմ Արցախի հայկական բնակչութեան և պատմական և կրօնական վայրերուն վրայ:

❖ 2020 թականի հոկտեմբերի 18-ի և 25-ի ցույցեր

Հոկտեմբերի 18-ի և 25-ի ցույցերին հաաքել էր անլի քան 20,000 սարդ: Հոկտեմբերի 25-ին Մարդու իրաւունքների հրապարակից կազմակերպեց երթ՝ Ֆրանսիային կոչ անելու դուրս գալ իր չէզոք դիրքորոշումից և ճանաչել Արցախի Հանրապետութիւնը՝ «Արցախի ճանաչում», «Մակ-



Նկար 7

րոն քայլեր ձեռնարկիր», «արդարություն հայ ժողովրդի համար», «Լէ Դրիանն ընտրիր քո կողմը» բացականչություններով:

Պատերազմի մեկնարկից գրեթե մէկ ամիս անց հայ համայնքն առաւել քան երբեւէ հասախմբել է դատաւարտելու Մինսկի խմբի եւ եւրոպական տէրությունների, ներառեալ Ֆրանսիայի, դիմաւորական մարմինների կողմից ադրբեջանական յանցագործությունների դատաւարտման անընդունելի բացակայությունը (սկար 5-7):

ՇՈՎՏԵՄԲԵՐ

Վ ՀՅԴ Ֆրանսիայի Հայ Դատի յանձնախումբի եւ Ֆրանսայի հայկական կազմակերպություններու համակարգող մարմինի միասնական ջանքերով 3 հոկտեմբերին 174 Ֆրանսացի քաղաքական գործիչներ եւ հանրային դէմքեր ստորագրեցին հրապարակային բաց նամակ դատաւարտելով Ադրբեջանի ռազմական յարձակումը Արցախի վրայ եւ Ֆրանսայէն պահանջելով պաշտօնապէս դատաւարտել ակրէսիան եւ Ադրբեջանէն անմիջապէս պահանջել դադարեցնել յարձակումը այլապէս Ֆրանսիան պէտք է պաշտօնապէս սատարէ Արցախի իշխանութեան եւ անոր անկախութեան արդար պահանջին:

Ստորագրող յայտնի դէմքերէն են Փարիզի քաղաքապետ՝ Ման Իտալկոն, Մարսիլիա քաղաքի նախկին քաղաքապետ՝ Միշէլ Բոպիրոյան եւ շարք մը բարձրաստիճան քաղաքական եւ հանրային դէմքեր:

ՆՈՅՏԵՄԲԵՐ

Վ Պատճառական իրադարձություն:

ՀՅԴ Ֆրանսայի Հայ Դատի ջանքերով պատերազմի եւ յետպատերազմեան ողջ ընթացքին քարոզչական եւ իրազեկման ամէն հնարատրություն եւ գործիք օգտագործեց: Ֆրանսիայի Ծերակոյտը 26 նոյեմբերին ընդունեց Արցախի Հանրապետությունը ճանչնալու անհրաժեշտութեան մասին բանաձեռի նախագիծը:

Ֆրանսիայի Ծերակոյտը 305 թեր, 1 դէմ եւ 30 ձեռնպահ քվէներով որդեգրեց Արցախի Հանրա-



Սկար 8

պետությունը ճանչնալու անհրաժեշտութեան մասին բանաձեռի նախագիծը: Ծերակոյտի գրեթե բոլոր քաղաքական ուժերը զօրակցեցան բանաձեռին: Ծերակուտականները Ծերակոյտի նախագահի յայտարարությունը ընդունեցին յոտնկայս ծափահարություններով:

Սյս բանաձեռով Ծերակոյտը կառավարութեան կոչ կ'ուղղէ ճանչնալու Արցախի Հանրապետությունը եւ այդ ճանաչումը բանակցություններու գործիք դարձնելու կայուն խաղաղութեան հաստատման համար:

Բանաձեռով կառավարութենէն նաեւ կը պահանջի զանգաւածային մարդասիրական օգնություն ցուցաբերել Արցախի բնակչութեան եւ Դարաբաղի մէջ կատարած պատերազմի յանցագործություններու միջազգային հետաքննություն սկսիլ:

Բանաձեռը քննարկման ներկայացած էր Ծերակոյտի խմբակցություններու անդամ հինգ ծերակուտականներու կողմէ՝ գլխատրութեամբ Պրինսօ Ռեթայոն (հանրապետականներու ղեկավար) (սկար 8):

ԴԵՎՏԵՄԲԵՐ

Վ Ծերակոյտին որդեգրած պատճառական որոշումէն մէկ շարքա ետք Ֆրանսայի Ազգային ժողովը 3 դեկտեմբերին իր կարգին Արցախի Հանրապետութեան ճանաչման վերաբերեալ բանաձեռ մը որդեգրեց 188 թեր, 3 դէմ եւ 16 ձեռնապահ քվէներով:





Նկար 9

Բանաձեռին մէջ նաեւ կ'արձանագրուին Ադրբեյջանի կողմէ զինուորական ճամբով խաղաղութիւնը տապալելու եւ Արցախի մէջ Թուրքիոյ աջակցութեամբ ահաբեկչական խմբաւորումներու եւ Սուրիայէն վարձկաններու տեղակայման փաստերը:

Երկու պատմական բանաձեռերէն ետք Հայ Դատի յանձնախումբը Ֆրանսայի կառավարութեան կոչ ուղղելով պահանջեց՝

«Ազգային ժողովի եւ Ծերակոյտի բանաձեռերը, գումարած բազմաթիւ քաղաքներու ինչպիսին են՝ Փարիզը, Մարսիլիան, Նիսը եւ բազմաթիւ այլ շրջաններու արտայայտած Արցախի անկախութեան ցանկութիւնները հզօր քաղաքական միասնականութիւն կը ձեւաւորեն Ֆրանսայի քաղաքական դաշտին մէջ: Մտնք նաեւ Ֆրանսիայի կառավարութեան չեզոքութեան ռազմավարութեան մերժում կ'արտայայտեն:

Ուղերձը յստակ է. Ֆրանսիայի կառավարութիւնը պէտք է ճանջնայ Արցախի Հանրապետութիւնը եւ իր դաշնակիցներուն հրաւիրէ հետեւիլ այս հիմնադիր քայլին: Կառավարութիւնը այսօրուանէ պէտք է անմիջական եւ ուղիղ կապ հաստա-



FLASH INFO
La délégation française du Parti socialiste (PS) en visite officielle en Arménie et en Artsakh
 MERCREDI 9 DECEMBRE

Նկար 10

տէ Արցախի իշխանութիւններուն հետ քննարկման համար, հաստատէ դիւանագիտական յարաբերութիւններ եւ ապահովէ Ֆրանսայի ներկայութիւնը Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ» (Նկար 9):

✔ **Հանագործակցութեամբ Ֆրանսայի Հայկական Բարեգործական ընդհանուր միութեան, ՀՅԴ Ֆրանսիայի Հայ Դատի յանձնախումբը Ֆրանսայի ընկերվարական կուսակցութեան ղեկավար Օլիւիէ Ֆօրի եւ խորհրդարանի շարք մը ընկերվարական անդամներու համար կազմակերպեց դէպի Արցախ առաքելութիւն: Ֆրանսայի Հայ Դատի յանձնախումբի նախագահը միացաւ պատիրակութեան:**

Պատիրակութիւնը ականատես եղաւ Արցախի յետպատերազմեան իրավիճակին եւ հանդիպումներ ունեցաւ երկրի իշխանութիւններուն եւ ժողովուրդին հետ:

Իր վերադարձին Օլիւիէ Ֆօր Արցախի եւ անոր ժողովուրդին իրաւունքներուն մասին շարք մը յօդաւածներ հրատարակեց (Նկար 10):

Հայ Դատի Գերմանիայի յանձնախումբ

Deutsch-Armenisches Komitee für Gerechtigkeit und Demokratie



www.dakgd.de | www.facebook.com/DAKfGD

2020 թ. մարտ ամսին վերակազմաւորեց Հայ Դատի Գերմանիայի յանձնախումբը, որը գերմանական օրէնսդրութեան համաձայն, սկսել է պետական գրանցման աշխատանքները եւ հանդէս է գալու Deutsch-Armenisches Komitee für Gerechtigkeit und Demokratie անամբ:

Յանձնախմբի առաջին քայլերը ներկայացնում ենք ստորեւ:

Համագործակցութեամբ ՀԱԸՄ Մինիսթրի մասնաճիւղի, Հայ Դատի Գերմանիայի յանձնախումբը մարտի 16-ին կազմակերպեց «Genozid an den Armenierinnen und Armeniern und Politik der Leugnung» խորագրով սեմինարը, որն անցկացրեց Լիւդվիգ Մաքսիմիլեան համալսարանի դասախօս դոկտ. Թալին Սուջեանը:

Քարոզչական եւ քաղաքական բնոյթի որոշակի աշխատանքներ են տարել հակազդելու Գերմանիայի կառավարութեան՝ Արցախի Հանրապետութիւնը չճանաչելու որոշմանը:

Համագործակցելով Հայ Դատի Եւրոպայի գրասենեանի հետ, ԵԽԽՎ գերմանացի պատգամաւորների հետ աշխատանք է տարել, որպէսզի վերջիններս նպաստեն հայկական շահերն արտայայտող բանաձեռի ընդունմանը:

Հայ-ադրբեջանական միջպետական սահմանի լարման առթիւ, Հայ Դատի Գերմանիայի յանձնախումբը յուլիսի 18-ին ցոյց է անցկացրել Մինիսթրնում: Մինիսթրնում երկու անգամ ցոյցեր անցկացել են նաեւ 2020 թ. հոկտեմբերին:

Յանձնախումբն իրականացրել է նաեւ որոշակի քարոզչական աշխատանքներ եւ յարաբերութիւններ սկսել գերմանական հասարակական-քաղաքական շրջանակների հետ:



Հայ Դատի Յունաստանի յանձնախումբ

Αρμενική Εθνική Επιτροπή Ελλάδος

Armenian National Committee of Greece



www.ancg.gr | www.facebook.com/ancg

ՀՅԴ Հայ Դատի Յունաստանի յանձնախմբի յարբերութիւնները երկրի պետական, կառավարական, մարզային եւ համայնքային շրջանակների հետ բաական բարձր սակարդակի վրայ են՝ 1996 թ. Յունաստանի Խորհրդարանի կողմից որդեգրած Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի, ինչպէս նաեւ երկու ժողովուրդների եղբայրակից եւ յարգալից զգացումների բերումով: Հայաստանի եւ Յունաստանի քաղաքաների միջեւ համագործակցութիւններով, տարբեր շրջաններում եւ քաղաքներում տեղադրած հայկական յուշարձաններով ու պետական զօրակցական քայլերով յատկանշւած նախաձեռնութիւնները, վկայում են հայ եւ յոյն ժողովուրդների եղբայրական կապերի սասին (նկար 1):

Սյ ծիրի սէջ է նաեւ յունական-պոնտական կազմակերպութիւնների հետ Հայ Դատի յանձնախմբի մսայոն համագործակցութիւնը՝ տարբեր ձեռնարկներում փոխադարձ ներկայութեանը ու

գործոն մասնակցութեանը: Նախորդ տարւայ վերջին լրացաւ Պոնտոսի յոյների ցեղասպանութեան 100-րդ տարելիցը, որի յիշատակման միջոցառման պաշտօնական բացումը կատարեց Սկրոպոլիսի թանգարանում՝ Յունաստանի վարչապետ Քիրիաքոս Միցոդաքիսի ներկայութեանը: Յոյն եւ օտարագգի աշխարհահռչակ գիտնականների մասնակցութեանը, երկօրեայ ելոյթներին հրաիրել էր նաեւ Հայ Դատի յանձնախումբը (նկար 2):

Յատուկ պէտք է անդրադառնալ աւելի քան 20 տարի տեւող յարայատուկ մի ծրագրի, որով ամէն անառ Յունաստանի Սիրոս կղզի են այցելում պատանիներ Սրցախից, ովքեր Սիրոսում եւ Փիրեայոն անցկացնում են 15-օրեայ արձակուրդ: Յանձնախմբի շարունակական ջանքերի արդիւնքում այս ծրագրով առաւել քան 450 արցախցի պատանիներ իրենց անառային հանգիստն են վախել յունական կղզում: Սիրոս կղզու յաջորդական քաղաքային խորհուրդներն իրենց վրայ են վերց-



Նկար 1



Նկար 2



Նկար 3

նում ծրագրի ֆինանսատրումն ու իրականացումը (նկար 3):

Հայ Դատի Յունաստանի յանձնախմբի գործունեությունը 2020 թ. սկզբից ի վեր յարմարեցրեց հանավարակի պատճառով պարտադրած սահմանափակումներին, առկախեցին նախապես ծրագրած տարբեր ձեռնարկներ, դրանցից որոշները կայացան առցանց, առելի ակտիվացրեց սոցիալական ցանցերի օգտագործումը:

2020 թ. յունարին տեղի ունեցավ յունահայ գաղութի տեսակցությունը երկրի վարչապետ Քիրիաքոս Միցոդաքիսի հետ: Յունահայոց թեմի թեմակալ առաջնորդի գլխավորած պատվիրակությանը մաս էր կազմում նաև Հայ Դատի Յունաստանի յանձնախմբի պատասխանատու Հռիփսիմէ Յարությունեանը (նկար 4):

Փետրարի վերջին Յունաստան այցելեց ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ, Հայ Դատի Կենտրոնական խորհրդի նախագահ Յակոբ Տէր-Խաչատուրեանը, ում ներկայությունից օգտուելով բարձր մակարդակի հանդիպումներ կազմակերպեցին Յունաստանի Հանրապետության նախագահի, արտաքին գործերի փոխնախարարի, խորհրդարանի Ազգային անվտանգության եւ Արտաքին յարաբերությունների յանձնաժողովի նախագահի, Հայաստանի հետ խորհրդարանական բարեկամության խմբի նախագահի եւ ՄԻԲԻԶԱ գլխավոր ընդդիմադիր կուսակցության անդամ-նախկին արտգործնախարարի հետ: Յ. Տէր-Խաչատուրեանը հանդիպումներ



Նկար 4



Նկար 5

ունեցավ նաև յունահայ գաղութի ազգային եւ վարչական կառույցը ներկայացնող շրջանակների հետ Աթենք եւ Թեսաղոնիկէ քաղաքներում (նկար 5):

Հայոց Ցեղասպանության զոհերի ոգեկոչման միջոցառումը, Սպրիլի 24-ին իրականացրեց առցանց: Միջոցառման մասնակիցներին իրենց ու-

Հայոց Յեղասպանության 105ամեակ 1915-2020
105th ANNIVERSARY OF THE GENOCIDE OF ARMENIANS FROM TURKEY

ΔΙΑΔΙΚΤΥΑΚΗ ΕΚΔΗΛΩΣΗ

Φέτος τιμούμε την 105η επέτειο της Γενοκτονίας των Αρμενίων, με μια διαδικτυακή εκδήλωση, λόγω των μέτρων για την πρόληψη της εξάπλωσης της επικίνδυνης πανδημίας

Χαιρετισμούς απευθύνουν εκπρόσωποι της ελληνικής πολιτείας,
- Α' Αντιπρόεδρος της Βουλής των Ελλήνων κ. Νίκος Κακλαμάνης
- Υπουργός Εξωτερικών της Ελλάδας κ. Νίκος Δένδιας
- Περιφερειάρχης Αττικής, κ. Γιώργος Πατούλης
- Περιφερειάρχης Κεντρικής Μακεδονίας, κ. Απόστολος Τζιτζικώστας
- Αντιπεριφερειάρχης Ανατ. Μακεδονίας και Θράκης, (Περιφερειακή Ενότητα Καβάλας) κ. Κώστας Αντωνιάδης

Ομιλία
κ. Προκόπος Παυλόπουλος
π. Πρόεδρος της Δημοκρατίας

Χαιρετισμοί,
Πρέσβης της Δημοκρατίας της Αρμενίας στην Ελλάδα, κ. Φατί Τσαρτσουλάν
Εκπρόσωπος της Αρμενικής Νεολαίας Ελλάδας κ. Λορέ Κοιγιομετζιάν

Με δυο τραγούδια που μαγνητοσκοπήθηκαν ειδικά για την διαδικτυακή εκδήλωση συμμετέχει ο γνωστός καλλιτέχνης κ. Χαϊκ Γαϊτζιάν

Εκ μέρους της Αρμενικής Εθνικής Επιτροπής Ελλάδας, κ. Λορέ Μπαροζιάν

Η εκδήλωση θα προβληθεί την Παρασκευή 24 Απριλίου 2020, στις 19:30

από τη σελίδα μας στο Facebook, καθώς και από τους παρακάτω συνδέσμους:
• Website Αρμενικής Εθνικής Επιτροπής Ελλάδος: <https://www.ancg.gr/>
• Website εφημερίδας Azat Ot: <https://azatot.gr/>

ΑΡΜΕΝΙΚΗ ΕΘΝΙΚΗ ΕΠΙΤΡΟΠΗ ΕΛΛΑΔΟΣ

9 σελίδα

Արցախեան պատերազմի ընթացքում կատարած աշխատանքներ

Արցախի դէմ սանձազերծւած ադրբեջանաթուրքական ագրեսիայից անմիջապէս յետոյ առաջին հերթին իրավիճակի նսաին տեղեկացւեցին Յունաստանի կառավարութեան, արտաքին գործերի նախարարութեան եւ քաղաքական կուսակցութիւնների պատասխանատուները: Երանցից պահանջեց դատապարտել Արցախի դէմ յարձակումը եւ զօրակցել հայ ժողովրդին:

Միաժամանակ ծաւալուն քարոզչական աշխատանք տարեց Յունաստանի հանրային կարծիքը ձեւաորոշ հասարակական-քաղաքական եւ լրատւական շրջանակների մօտ: Գոհունակութեանը կարելի է հաստատել, յոյն ժողովուրդի միանշանակօրէն համերաշխ ու զօրակից կեցածքը հայ ժողովրդի հանդէպ, որ ամէն պահ արտայայտում էր:

Հասարակական զօրակցութեանը հետզհետէ եկաւ աւելանալու յունական կառավարութեան հաշնակատ դիրքորոշումը, որ քայլ առ քայլ զարգացաւ արագորձնախարար Նիկոս Տենտիասի ուղղակի միջանտոյութիւնների արդիւնքում: Տենտիասը եւրոպական երկրների կառավարութիւնների անդամներից միակն էր, որ պատերազմի օրերին, հոկտեմբերի 16-ին, այցելեց Հայաստան:

Սեպտեմբերի 30-ին, համագաղութային մեծ հաւաք կազմակերպեց Միւստադանյի հրապարակում: Հաւաքին ներկայ գտնւեցին եւ ելոյթներ ունեցան յունական խորհրդարանի պատգամաւորներ, քաղաքական եւ հասարակական ուժերի ու կազմակերպութիւնների ներկայացուցիչներ (նկար 7):



10 սկար 7

դերձը յղեցին Յունաստանի արտաքին գործերի նախարարը, Խորհրդարանի առաջին փոխնախագահը, Աստիկէի, Կենտրոնական Սակեդոնիայի եւ Թրակիայի նարգպետները, իսկ օրայ բանախօսն էր Յունաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Պրոկոպիս Պապրոպուրը: Հայոց Յեղասպանութեանն անդրադարձան նաեւ Յունաստանի վարչապետն ու կարեւոր այլ քաղաքական դէմքեր (նկար 6):

Կոստանդնուպոլիսի Սյա Սոֆիա տաճարը նգկիթի վերածելու վերաբերեալ Թուրքիայի նախագահի որոշումից յետոյ, Հայ Դատի յանձնախումբը ակտիւ ներգրաւածութիւն ունեցաւ յունական կազմակերպութիւնների կողմից կազմակերպած տարբեր միջոցառումներում:

Յուլիս ամսին, հայ-ադրբեջանական սահմանային լարման օրերին, Հայ Դատի յանձնախումբը գրութիւններ ուղարկեց յունական խորհրդարանի պատգամաւորներին՝ նատնանշելով հայութեան նկատմանը Թուրքիայի ստդրանքները եւ հայ ու յոյն ժողովուրդների նկատմանը իր յարձակողապաշտ քաղաքականութիւնը:



Նկար 8



Նկար 9

ՀՅԴ Յունաստանի Կենտրոնական կոմիտեի և Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել գլխավոր ընդդիմադիր կուսակցության՝ Սիրիզայի նախագահ և նախկին վարչապետ Ալեքսիս Ցիպրասի, ինչպես նաև ՔԻՆԱԼ կուսակցության ընդհանուր քարտուղարի հետ: Բազմաթիվ հանդիպումներ են տեղի ունեցել խորհրդարանի անդամների հետ (նկար 8):

Հոկտեմբերի 4-ին Թեսալոնիկեում տեղի ունեցավ խաղաղ երթ՝ հազարավոր ցուցարարների մասնակցությամբ: Հետագայում ես տարբեր բնույթի հաաքներ կազմակերպեցին, նաև Թրակիայի քաղաքներում, Քալանաթայում և Կրետեյում (նկար 9):

Յունական մասնույում Արցախեան պատերազմը լայնօրէն լուսաբանեց հէնց սկզբից: Լուսաբանման աշխատանքներում լայնօրէն ներգրաւած էին ՀՅԴ Յունաստանի Կենտրոնական կոմիտեի, Հայ Դատի յանձնախմբի և ՀՅԴ Երիտասարդականի անդամները: Սի շարք առցանց քննարկումներ են կազմակերպել նաև յունական քաղաքական գործիչների, խորհրդարանականների կողմից, որոնք լայն արձագանգ են գտել:

Յունաստանի հանրային կարծիքն ու լրատուական դաշտը գրեթէ ամբողջությամբ դիրքորոշեցին հայութեան կողմը: Նաև ակնյայտ էին այն գուգահեռներն ու մտահոգութիւնները, որ յունական շրջանակները տանում էին՝ կապած Արցախի դէմ

պատերազմի և Թուրքիայի Յունաստանի հետ յարաբերութիւնների հետ: Պատերազմի ընթացքում, պարբերաբար Հայ Դատի յանձնախումբը յունական լրատամիջոցներին տրամադրում էր տեղեկատուական բնույթի նիւթեր: Նոյնարնոյթ գրութիւններ էին հասցեագրում խորհրդարանականներիին, ակադեմիական շրջանակներին և այլն:

Ինտենսիւ գրառումներով և ազդու տեղեկատուութեամբ գործում էին յանձնախմբի, ինչպէս նաև ՀՅԴ ուղեկից կազմակերպութիւնների օգտահաշիւները «Facebook», Instagram, «Twitter» սոցիալական ցանցերում (նկար 10), ինչն էապէս նպաստեց լուսաբանման աշխատանքներին:

Պատերազմի ընթացքում երեք յոյն լրագրողներ այցելեցին Արցախ (CNN Greece-Գոսթաս Փիլաքոս, ANTI news-Սիխալիս Վաֆիատիս և իր խումբը, AFP ֆոտոնկարիչ Արիս Մետինիս):

Յատուկ նամակներ ուղարկեցին Յունաստանի խորհրդարանի 24 պատգամաւորների, որոնք Յունաստան-Ադրբեջան միջխորհրդարանական բարեկանութեան խմբի անդամներ էին: Նրանցից պահանջեց հրաժարել այդ խմբին անդամակցութիւնից: Սյ նախաձեռնութիւնը մեծ թափ առաւ նաև հանացանցում և գործադրած ճնշումների արդիւնքում հինգ պատգամաւորներ հրաժարեցին: Սյդ հարցը քննարկման առարկայ էր նաև քաղաքական կուսակցութիւնների և Հայ Դատի յանձնախմբերի հանդիպումների ընթացքում:

Հայ Դատի յանձնախմբերի և ՀՅԴ կոմիտեների աշխատանքների շնորհիւ՝ Յունաստանի 22 քաղաքներ դատապարտեցին Ադրբեջանին և հանդէս եկան Արցախին զօրակցող յայտարարութիւններով: Սյդ քաղաքներից երեքը՝ Սմինոտեն, Քինուրիան և Վիսալթիան ճանաչեցին Արցախի անկախութիւնը, որոշ քաղաքների որոշումներ ըն-



Նկար 10

դրնեցին Արցախին նիֆական օժանդակություն տրամադրելու վերաբերեալ:

Հայ Դատի յանձնախումբը, հոկտեմբերի 26-ին, նամակ ուղարկեց նաև Երոպական յանձնաժողովի նախագահ, ԵՄ արտաքին քաղաքականության եւ անվտանգային հարցերի գերագոյն յանձնակատար Ջոզեֆ Բորելին՝ սատնանշելով պատերազմի ընթացքն ու ադրբեջանական յանցագործութիւնները:

Հայ Դատի յանձնախմբի անդամները պատերազմի օրերին այցելել են նաև Իսրայելի եւ Իրանի դեսպանութիւններ, հանդիպել դեսպանների հետ: Սի դէպքում բողոք է յայտնել Ադրբեջանին վաճառած իսրայելական զէնքի՝ խաղաղ բնակչութան նկատմամբ օգտագործման փաստի առթիւ, իսկ միւս դէպքում գրոյց է ծաւալել, տարածաշրջանային սպառնալից իրավիճակի, Թուրքիայի կողմից ահաբեկիչների ներգրաման եւ այլնի վերաբերեալ: Դեսպանները յանձնառու են եղել արծարծած թեմաները փոխանցել իրենց կառավարութիւններին:

Նոյեմբերի 9-ի տխրահռչակ յայտարարութան ստորագրումից յետոյ, նոյեմբերի 13-ին Հայ Դատի յանձնախումբ նամակով դիմեց Սինսկի խմբի անդամ երկրներին:

Մեծ թով անհատական գրութիւններ են հասցեագրել Յունաստանի պետական եւ ԵՄ պաշտօնատար շրջանակներին՝ հայ գերիների ազատ արձակման խնդրով:

Հայ Դատի յանձնախմբի համար առաջնահերթութիւն դարձաւ մարդասիրական օգնութեան կազմակերպման եւ փոխադրման խնդիրը: Սյս առումով մեծ աշխատանք կատարեցին Յունաստանի Կարկիր Խաչն ու Մակեդոնիայի եւ Թրակիայի «Հայ Գթու-

թեան խաչը»: Քննարկումներ անցկացեցին Յունաստանի Պաշտպանութեան նախարարութեան, Արտաքին գործերի նախարարութեան եւ վերջիս ԻՏԱՍ բաժնի հետ, ինչի արդիւնքում յաջողեց Ը 130 մակնիշի երկու ռազմական օդանաւերով հունանիտար օգնութեան առաքումը Հայաստան եւ Արցախ (նկար 11-12):



Նկար 11



Նկար 12

Հայ Դատի Միացեալ Թագաւորութեան յանձնախումբ

Armenian National Committee of the United Kingdom (ANC UK)



www.ancuk.org.uk | www.facebook.com/armeniannationalcommitteeu

Հայ Դատի Միացեալ Թագաւորութեան (ՄԹ) յանձնախումբը վերակազմաւորեց 2019 թ. վերջին եւ արդէն 2020 թ. ընթացքում, ակտիւ գործունէութեամբ, իր ուրոյն տեղը զբաղեցրեց Հայ դատի համաշխարհային ընտանիքի կազմում: Յանձնախմբի քաղաքական առաջնահերթութիւններն են հանդիսանում Դարաբաղեան հիմնախնդրի հայանպաստ լուծմանը նպաստելը, Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը եւ Հայաստանի անվտանգութեան մակարդակի բարձրացումը: Սյս խնդիրների լուծմանը նպաստելու համար յանձնախումբը ճշտել է ռազմավարական ու մարտավարական բնոյթի առաջնահերթութիւններ: Վերջիններս, ինչպէս նաեւ յանձնախմբի՝ 2020 թ. գործունէութեան հիմնական արդիւնքները ներկայացնում ենք ստորեւ:

Հայաստանի հետ խորհրդարանական բարեկամութեան խումբ (All party parliamentary group)

Բրիտանական Խորհրդարանի Համայնքների պալատում ընդունած ընթացակարգի համաձայն, գործում են խորհրդարանական բարեկամութեան խմբեր: Հայաստանի հետ բարեկամութեան խումբը թէւ մի քանի տարի գոյութիւն ունէր, սակայն պատգամաւոր եւ խմբի նախկին նախագահ Սթեֆն Փատոնդի լիազօրութիւնների աւարտից յետոյ այն չգրանցեց եւ որեւէ ակտիւութիւն գրեթէ չէր ցուցաբերում: Հայ Դատի ՄԹ յանձնախումբը նախ եւ առաջ ձեռննույն եղաւ Հայաստանի հետ խորհրդարանական բարեկամութեան խմբի վերստեղծման եւ այդպիսով քաղաքական-յարաբերական բնոյթի ակտիւ աշխատանքներ իրականացնելուն: Ձեռնարկեցին

գործողութիւններ, որոնք ենթադրում էին՝ Համայնքների եւ Լորդերի պալատներից խմբի անդամների ներգրաւում, խմբի նախագահի ընտրութիւն, առանձին հանդիպումներ խմբի հաւանական անդամների հետ եւ այլն: Հայ Դատի յանձնախմբի նախագահ Մետթ Սուքոթեանը ի սկզբանէ ստանձնեց խմբի քարտուղարի պարտականութիւնները, որպէսզի անմիջականօրէն աշխատի հայկական հարցերով հետաքրքրող գործիչների հետ:

2021 թ. յուլիսի 1-ին կայացած բարեկամութեան խմբի առաջին նիստով՝ Պահպանողական կու-

**All-Party Parliamentary Group for Armenia
Annual General Meeting
1 July 2020**

Tim Loughton
Chair

Andrew Rosindell
Vice Chair

James Gray
Vice Chair

Mark Pritchard
Vice Chair

Baroness Cox
Vice Chair

Feryal Clark
Vice Chair

James Murray
Treasurer

The All-Party Parliamentary Group (the APPG) for Armenia held its inaugural Annual General Meeting today with a cross-party group of MPs and House of Lord peers. The meeting elected Tim Loughton FSA MP as Chair.

The mission of the APPG is to cultivate deeper relations between Armenia and the United Kingdom in areas such as trade, tourism, education and development.

The security of Armenia is a major concern. Promoting its security not only establishes stability in the region but also advances commercial interest of United Kingdom.

The APPG further appointed: The Rt. Hon. The Baroness Cox FRCS FRCN, Andrew Rosindell MP, James Gray MP, Mark Pritchard MP, Feryal Clark MP as Vice Chairs; and James Murray MP as Treasurer. Annette Moskofian Chairperson of the Armenian National Committee (ANC) United Kingdom was appointed as Secretariat. Chargé d'affaires of the Armenian Embassy, Gagik Krakosyan was also present at the meeting as a guest.



1 սկիւր

ասկցությունից խորհրդարանական Թին Լոթնը ընտրուեց խմբի նախագահ, իսկ փոխնախագահներ ընտրուեցին Բարոնուհի Քերոլայն Քոքսը, Մնդրի Ռոզինդելը, Ջեյն Գրեյը, Սարկ Փրիչարդը, Ֆերեալ Քլարկը եւ Ջեյն Սուրայը (նկար 1):

Հայ Դատի յանձնախմբի կողմից խմբի անդամներին պարբերաբար ուղարկել են անհրաժեշտ նորություններ, քաղաքական վերլուծություններ: 2020 թ. յուլիսին սահմանային միջադեպերի, ինչպես նաեւ 44-օրեայ պատերազմի ընթացքում, յանձնախումբը բարեկանության խմբին խնդրել է հանդէս գալ հանապատասխան յայտարարություններով: Պատերազմի ընթացքում խումբը նամակով դիմել է ՄԹ արտաքին գործերի նախարարությանը, որպէսզի նախարարը Խորհրդարանում ներկայացնի Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակն ու պատասխանի բարձրացող հարցերին: Ռազմական գործողությունների օրերին Թին Լոթնը կազմակերպեց նաեւ խորհրդարանական քննարկում:

Ստանձնակի ակտիւթիւն է ցուցաբերել խմբի փոխնախագահ, հայ ժողովրդի մեծ բարեկան Բարոնուհի Քերոլայն Քոքսը, ով նախ սեպտեմբերի 2-ին շտրհատրական ուղերձ յղեց Արցախի անկախութեան տօնի առթիւ, ապա աղբրեջանական քաղաքականութիւնը քննադատող նամակ յղեց Լոնդոնում Աղբրեջանի դեսպանին (նկար 2), իսկ աւելի ուշ Բաքին դատապարտող յայտարարութիւններ արեց՝ Աղբրեջանի կողմից սանձազերծուած պատերազմի առիթով:

Հայ Դատի յանձնախմբի ուղղակի ներգրաւմանը կազմել է նաեւ բարեկանութեան խմբի 1 տարայ գործունէութեան ծրագիրը, յանձնախումբը շարունակաբար քաջալերել է բրիտանացի քաղաքական գործիչներին՝ Ղարաբաղեան հիւնախնդրում դրսետրել յաւելեալ ակտիւթիւն:

Յարաբերութիւնների զարգացում

Հայ Դատի ՄԹ յանձնախումբը քաղաքական յարաբերութիւններ է զարգացրել եւ հանդիպումներ ունեցել Միացեալ Թագաւորութիւնում գործող այլ ազգային փոքրասանութիւններ ներկայացնող կազմակերպութիւնների հետ՝ այդ թում «Կիպրացիների ազգային ֆեդերացիան», «Բրիտանասիրական պատգամաւորական խորհրդը», «Խաղաղութիւն Քրդստանում», «Քրդերի դեմոկրատական ասամբլեան», «Սլեմիների խումբ» կազմակերպութիւնները: Հանդիպումներ են եղել եւ յարաբերութիւններ հաստատել աշխարհահռչակ իրաւապաշտպան Ջեֆրի Ռորերթսոնի, Օքսֆորդի հանապարանի գիտաշխատող եւ Հայոց Յեղասպանութեան հետազօտող



Նկար 2

Statement on Turkey's illegal invasion of northern Syria:
 The National Federation of Cypriots in the UK, the Armenian National Committee UK and Peace in Kurdistan strongly condemn Turkey's illegal invasion of northern Syria. Turkey's invasion has already caused the deaths of many thousands of civilians, created hundreds of thousands of refugees and led to the release of ISIS terrorists from prisons. We are also deeply concerned and appalled by the reports of violations of international law by Turkey in Syria including summary executions and forced demographic change following the invasion - both constitute war crimes.
 Turkey's brutal actions mainly targets Kurds and Christian minorities, who fought nobly against ISIS and have promoted democracy and human rights in the region. We stand in solidarity with the Kurdish people against Turkey's aggression. Furthermore, Turkey's invasion has already led to a worsening of the dire humanitarian situation in Syria and aid agencies must be allowed to operate without hindrance.
 These recent aggressive actions are particularly concerning given Turkey's current illegal drilling in the Republic of Cyprus' Exclusive Economic Zone and despicable history with ethnic minority groups in the region. The Armenian Genocide, Assyrian Genocide, Greek Genocide and Turkey's ongoing occupation of northern Cyprus have never been forgotten by the international community, yet Turkey refuses to recognise, take responsibility or allow justice for any of these atrocities.
 When a crime against humanity goes unpunished it will be repeated. The UK Government should stop all current and future arms exports licenses to Turkey and impose tough sanctions to deter Turkey from its aggressive and authoritarian policies. The UK Government should also put pressure on Turkey to recognise the Armenian, Assyrian and Greek Genocides; and allow a free, united Cyprus through a just and viable solution to the Cyprus issue

Նկար 3



Սկար 4

Մուսան Քելթջիի հետ: Պետական կառավարման համակարգում հանդիպումներ են տեղի ունեցել բրիտանական արտգործնախարարութեան պաշտօնեայ Քրիստոֆեր Լէյի, Խորհրդարանի պաշտպանութեան եւ անվտանգութեան յանձնաժողովի անդամների, Հայաստանում ՄԹ դեսպանի եւ այլոց հետ:

Բրիտանական պատկան կառոյցներին են յղել բազմաթիւ գրութիւններ, որոնցով ներկայացւել են Արցախի եւ Հայաստանի շուրջ ստեղծած իրավիճակը:

Հայ Դատի յանձնախումբը սերտ համագործակցութիւն հաստատուեց յատկապէս կիպրական եւ քրդական կազմակերպութիւնների հետ (նկար 3):

Յուլիսեան սահմանային միջադէպեր


2020 թ. յուլիսին ՀՀ Տաւրշի մարզում սահմանային իրավիճակի լարման եւ սկսած ռազմական գործողութիւնների ընթացքում Հայ Դատի ՄԹ յանձնախումբը մի շարք ակտիւ գործողութիւններով իրականացրեց ՀՀ շահերի պաշտպանութեան աշխատանքներ, որոնք ենթադրում էին ընտրուած պաշտօնեաների նկատմամբ քաղաքացիական ճնշման գործադրում, օրինակ «գրիր քո պատգամաւորին» արշարձ աղբրեջանական ագրեսիան դատաւարտելու պահանջով (նկար 4): Մոբիլիզացվեց Հայաստանի հետ բարեկանութեան խնրի ռեսուրսը: Խումբը նախ դատաւարտեց աղբրեջանական ագրեսիան, ապա առանձին նամակով

դիմեց բրիտանական արտգործնախարարութեանը: Սյո օրերի ընթացքում յանձնախմբի կողմից կատարուեց մեծ ծաւալի իրազեկման աշխատանք (նկար 5-8): Առանձին գրութիւններով հանդէս եկան մի շարք խորհրդարանականներ:

Յանձնախումբը չափազանց ծանրաբեռնուած գրաֆիկով աշխատեց սեպտեմբերի 27-ին Աղբրեջանի կողմից Արցախի նկատմամբ սանձազերծուած պատերազմական գործողութիւններից անմիջապէս յետոյ: Կատարել է հսկայական ծաւալի իրազեկման աշխատանք, բրիտանական պատկան կառոյցներին մշտապէս փոխանցել է թարմ տեղեկատւութիւն ստեղծուած իրավիճակի վերաբե-



Սկար 5



Սկար 6


THE BARONESS COX
 LONDON SW1A 0PW

Rt Hon Dominic Raab MP
 House of Commons
 London
 SW1A 0AA

16 July 2020

Dear Dominic,

I write to express my deep concerns about the serious risk of escalating conflict at the Armenia-Azerbaijani border – a matter of especial concern in the midst of a global pandemic.

Azerbaijan recently deployed artillery batteries close to civilian populations in Tavush, north-eastern Armenia, far north of the disputed territory of Nagorno Karabakh. I understand that four Armenian sergeants and officers were killed on 14 July. Ten servicemen are receiving medical treatment, one of whom remains in a critical condition.

I am deeply concerned by reports that the Azerbaijani military has since opened fire in the direction of a face mask production factory, which plays an essential part in the country's coronavirus response; an attack this morning against a kindergarten in the village of Aygepar, Tavush; as well as reports that the Azeri Defence Minister has called for mass annihilation of the Armenian population and has threatened to target Armenia's nuclear power station.

I also share widespread concerns about the recent pro-war demonstrations held in Baku, during which thousands of protestors demanded the Azeri government fully deploy the army, chanting "Death to Armenians", with some even entering the national parliament.

Given the UK's longstanding commitment to work with the Armenian government and international partners to ensure security in the region, I am writing to urge you to take a firm stance in condemning this threat to peace, to take immediate steps to promote de-escalation of the conflict, and to support Armenia as it seeks to protect its territorial integrity.

Yours ever,


 Personal email: carolinecox1@outlook.com

Նկար 7

Baroness Cox's latest powerful statement



Scroll to read Baroness Cox's powerful statement on recent developments in Artsakh



Նկար 6

Tim Loughton M.P.
 East Worthing and Shoreham

HOUSE OF COMMONS
 LONDON SW1A 0AA

The Rt Hon Dominic Raab MP
 Secretary of State for Foreign, Commonwealth and Development Affairs
 Foreign, Commonwealth and Development Office
 King Charles Street
 London
 SW1A 2AH

5 October 2020

Dear Foreign Secretary

Azerbaijani aggression against Nagorno-Karabakh and Armenia

You will be aware of last week's aggressive offensive by Azerbaijani forces against Nagorno-Karabakh territory including civilian targets as well as against Armenian sovereign territory too. We are afraid to say that the situation has worsened over the weekend and casualties continue to rise yet further.

This unprovoked attack by Azerbaijan, clearly now with Turkish backing, represents a very serious escalation of the hostilities on the Azerbaijan-Armenian border since in July when we had helpful dialogue with Minister Wendy Morton. We believe that there is an urgent need for the UK Government to speak out in condemnation of the action by Azerbaijan as the US and other allies have done, and for the UK to do all it can to end the fighting and encourage both parties back to the negotiation table with the assistance of the OSCE Minsk Group.

The air and artillery attacks by Azerbaijan started last week as well as an infantry offensive along the entire Line of Contact with Nagorno-Karabakh, indiscriminately shelling civilian populations including in the designated capital Stepanakert. We have received a number of alarming reports from the Armenian community in the UK and the Armenian Embassy, including video footage of heavy shelling in civilian areas. We gather that foreign journalists have also been injured.

Particularly worrying has been the involvement of Turkey with reports of F16 Turkish fighters having shot down an Armenian Air Force plane over Armenian territory and attacks by Turkish made UAV's. This has been accompanied by unconditional support for the Azeri actions backed up by belittling statements from the Turkish Government. There are also credible reports of participation on the Azeri side by Foreign Terrorist Fighters recruited from those parts of Syria under the control of the Turkish military.

It is becoming increasingly clear that the conflict is not a spontaneous escalation of recent 'skirmishes' but is carefully planned and prepared aggression. As such we are very worried that the conflict has the capacity quickly to develop into a full-blown war involving other players in the area. We therefore urge you to speak out on behalf of HMG to condemn the protagonists and do all you can to halt the fighting.

We are pleased to note that Minister Wendy Morton has agreed to bring forward the meeting with the All Party Parliamentary Group later this month but obviously more urgent action is needed before then. We have also requested that the Speaker considers our request for an Urgent Question in the House on the issue.

continued

www.timloughton.com loughton@parliament.uk
 The East Worthing and Shoreham Constituency includes
 Cochen, Fishergate, Kingseat, Lancing, Shoreham, Sumpston, Sumpston, Southwick,
 and the eastern wards of Worthing: Broadwater, Gosford, Ovington and Selden.

Նկար 8

րեալ: Փորձ է արել հնարարինս մեր կողմ սեւեռել պետական, քաղաքական եւ հանրային կարծիքը, Հայաստանի շահերի պաշտպանութեան գործուն ներգրատել հնարարինս մեծ թուով գործիչներին:

Հոկտեմբերի 2-ին բաական ծաապուն եւ հանգանանալից ուղերձով հանդէս եկաւ Բարոնուհի Քերոլայն Քոքսը՝ ներկայացնելով Արցախում ստեղծած իրավիճակը, ստեղծած իրավիճակի աննախադէպ բնոյթը, աղբրեջանական ագրեսիան, միջազգային արձագանքն եւ այլն (նկար 9), օրեր անց յայտարարութիւն տարածեց նաեւ Բարոնուհու կողմից հիմնադրած «Հարթ» հիմնադրանք:

Հոկտեմբերի 13-ին, Հանայնքների պալատի 7 անդամներ յայտարարութիւն տարածեցին, որով քննադատեցին աղբրեջանական ուժերի կողմից Շուշիի տաճարի հրթիռակոծումը եւ քաղաքացիական անձանց վրայ յարձակումները: Պատգանատրները նշակութային ժառանգութեան դիտատրեալ թիրախատումը հանարեցին պատերազմական յանցագործութիւն՝ հանաձայն միջազգային իրաւունքի: Պատգանատրները բրիտանական կառավարութեանը յորդորում էին դատապարտել նշակութային կոթողների եւ քաղաքացիական անձանց նկատմամբ աղբրեջանական թիրախային յարձակումները:

Աղբրեջանին դատապարտող յայտարարութիւններով հանդէս եկան խորհրդարանականներ

Ջէյն Սուրայը (նկար 10), Թին Լոթնը, Սառա Օլին եւ ուրիշներ:


Նաեւ Հայ Դատի ՄԹ յանձնախմբի ջանքերով, անգլիական կառավարութիւնը 1 միլիոն ֆունտ հունանիտար օգնութիւն տրամադրեց Արցախում իրականացող աշխատանքներին:

Նոյեմբերի 5-ին Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի իրացման անհրաժեշտութեան մասին բարձրաձայնվեց Լորդերի պալատում: Պատերազմի ամբողջ ընթացքում բրիտանացի բազմաթիւ խորհրդարանականներ գրոյթիններով դիմում էին արտաքին գործերի նախարարին՝ բարձրացնելով հայութեանը յուզող հարցեր, Դարաբաղեան հիմնախնդրի շուրջ զարգացումները քանիցս քննարկել են Խորհրդարանի պալատներում: Նոյնիսկ, Ռուպա Հուքը Համայնքների պալատում ներկայացրեց խնդրագիր, ըստ որի առաջարկում էր ՄԹ-ի կողմից Արցախի Հանրապետութեան ճանաչում եւ տարածաշրջանում Լոնդոնի քաղաքական ու մարդասիրական դերի բարձրացում:

Հայ Դատի յանձնախումբը նոյեմբերի 13-ին, հայկական 18 այլ կազմակերպութիւնների հետ, նամակ ուղարկեց ԵԱՀԿ Մինսկի խմբին, իսկ նոյեմբերի 14-ին հանդէս եկաւ առանձին յայտարարութեամբ: Ըստ այդմ, քննադատում էր նոյեմբերի 10-ի հրադարարի հայտարարութիւնը եւ ԵԱՀԿ Մինսկի խմբին կոչ արում կոնկրետ գործողութիւնների:

Նոյեմբերի 23-ին, Դերբիի քաղաքային խորհուրդը ճանաչեց Արցախի Հանրապետութեան անկախութիւնը, ինչը լաւ նախադէպ է ՄԹ քաղաքների եւ Արցախի միջեւ հետագայում ապակենտրոն համագործակցութեան ծրագրեր իրականացնելու համար (նկար 11)

Դեկտեմբերի 27-ին Սաութֆորքի աւագ քահանան իր եւ Քովենթրիի եւ Էքսֆիթի քահանաների անունից, նամակով դիմեց Իոնեսկոյի գլխաւոր



Նկար 10



Նկար 11

քարտուղարին՝ բարձրաձայնելով ադրբեջանական բռնութիւնների արդիւնքում Արցախում քրիստոնէական դարաւոր ժառանգութեան պահպանման վտանգը:

Վերը յիշատակած գործողութիւնների, դրանց պայմանաւորած քաղաքական-յարաբերական աշխատանքների ընթացքում Հայ Դատի ՄԹ յանձնախումբը մշտապէս փորձել է խթանել համայնքային ակտիւութիւնը:



Հայ Դատի Նիդերլանդների յանձնախումբ

Nederlands Armeens Comité voor Rechtvaardigheid en Democratie



www.haytad.nl | <https://bit.ly/3wjVUrf>

Հայոց Ցեղասպանության ճանաչման վերաբերեալ Նիդերլանդների խորհրդարանում բազմաթիվ որոշումներ են եղել: Վերջին անգամ 2019 թականի ապրիլին ընդունված որոշումը Նիդերլանդների կառավարությանը յանձնարարում էր, որ 5 տարին մեկ, բարձր մակարդակի այցելություն կատարի Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանության յու-

շահամալիք: 2020 թականի յունարի 20-ին արտգործնախարար Ստեֆ Բյոկը յայտարարեց, որ մեկնելու է Հայաստան եւ ծաղկեպսակ է զետեղելու Հայոց Ցեղասպանության գոհեքին նախաձեռնություն: Նիդերլանդների Հայ Դատի յանձնախումբը հանդէս եկաւ յայտարարութեամբ, որտեղ պահանջում էր կառավարութիւնից, որ արտգործնախարարը օգտագործի «Ցեղասպանութիւն» եզրոյթը, քանի որ Նիդերլանդների կառավարութիւնը դեռ պաշտօնապէս չի ճանաչել Հայոց Ցեղասպանութիւնը (նկար 1):

Ընտրութիւններ Արցախում, (27.01.2020)

Հայ Դատի Նիդերլանդների յանձնախումբը նա-մակով դիմեց երկրի արտգործնախարարութիւն՝ տեղեկացնելով Արցախում կայանալիք ընտրութիւնների մասին եւ առաջարկելով, որ Նիդերլանդներից դիտորդներ մասնակցեն ընտրութիւններին: Աշխատանքներ են տարւել մի շարք պատգամա-



Նկար 1



Նկար 2

տրների հետ, որպեսզի մեկնեն Արցախ եւ հանդէս գան, որպէս դիտորդներ, Քրիստոնեայ-ժողովրդավարական Միութիւն կուսակցութիւնից (CDA) Մարտեյն Վան Հելվերտը համաձայնել էր մեկնել Արցախ:

Ամէն տարի, փետրարի 27-ին Ադրբեջանի դեսպանութեան դիմաց բողոքի գործողութիւններ են իրականացնել՝ յիշատակելով Սունգայիթի, Բաքի, Գանձակի եւ այլ վայրերում հայկական կոտորածները: 2020-ը բացառութիւն չէր եւ նորից փետրարի 27-ին, Նիդերլանդների հայկական այլ կազմակերպութիւնների հետ միասին, յանձնախումբը հանրահաւաք իրականացրեց Ադրբեջանի դեսպանատան առջեւ եւ հանրագիր յանձնեց՝ դատապարտելով Ադրբեջանական քաղաքաների հայ ազգաբնակչութեան հանդէպ տեղի ունեցած վարագոյթիւնները (նկար 2):

Քրիստոնեայ-ժողովրդավարական Միութիւն (CDA) կուսակցութեան անդամ Փիթըր Օնտզիխտը առաջադրեց որպէս կուսակցութեան նախագահի թեկնածու: Նա ամենաառաջադէմ խորհրդարանականներից է, ով պետութեան ամենահրատապ եւ զգայուն հարցերը ժամանակին բարձրաձայնում է: Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցում նա միշտ հանդիսացել է առաջամարտիկ եւ մեծ ներդրում ունեցել Նիդերլանդների խորհրդարանում հայանպաստ որոշումների ընդունման մէջ: Նա մեծ յարգանք է վայելում նիդերլանդահայութեան մօտ եւ հէնց այդ պատճառով Հայ Դատի յանձնախումբը հանդէս եկաւ կուսակցութեան նախագահի ընտրութիւններում



Նկար 2

Փիթըր Օնտզիխտի թեկնածութիւնը պաշտպանող յայտարարութեամբ:

Հայաստանի սահմանամերձ Տաուշի շրջանում 2020 թ. յուլիսեան միջադէպերի կապակցութեամբ Անտերդամում, Նիդերլանդների այլ հայկական կազմակերպութիւնների հետ համատեղ կազմակերպեցինք բողոքի ցոյց՝ ընդդէմ Ադրբեջանի սանձարձակ ոտնձգութիւնների: Մասնակցեցին 300-ից աւելի ցուցարարներ:

Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները յուլիսի 28-ին Ալմեյո քաղաքում հանդիպեցին Հայաստանի Հանրապետութիւնում Նիդերլանդների Թագաւորութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Նիկո Սխերմերսի հետ: Քննարկեց փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:

Նիդերլանդների արտգործնախարարութեան հետ հանդիպում (30.07.2020)

Տաուշեան դէպքերի կապակցութեամբ, ինչպէս նաեւ հայ ցուցարարաների հանդէպ Նիդերլանդների ոստիկանութեան անհամաչափ գործողութիւնների առնչութեամբ յանձնախումբը յուլիսի 30-ին հեռավար հանդիպում անցկացրեց Նիդերլանդների արտգործնախարարութեան Կովկասի տարածաշրջանի պատասխանատու՝ տիկին Բաքի հետ: Վերջինիս տեղեկութիւններ փոխանցեցին Տաուշում տեղի ունեցած դէպքերի մասին եւ ադրբեջանցիների սանձարձակութիւնների վերաբերեալ: Խօսեցինք նաեւ հայ ցուցարարների հանդէպ ոստիկանութեան կոշտ վարելաձեւի մասին, որը շատ տարօրինակ էր, քանի որ անցյալում բազմաթիւ ցոյցերի ժամանակ նման միջադէպեր չեն պատահել: Տիկին Բաքի պատասխանը չէր տարբերում մինչ այդ արտգործնախարարութիւնից ստացած պատասխաններից: Բանն այն է, որ Նիդերլանդները, Ղարաբաղեան հակամարտութեան լուծման գործընթացում, ներգրաւած պետութիւն չի: Ինչ վերաբերում է ոստիկանութեան գործողութիւններին՝ սկսած է հետաքննութիւն, որը կպարզի դրանց համաչափութիւնը: Բաքը խոստացաւ յանձնախումբին տեղեկացնել հետաքննութեան արդիւնքների մասին (նկար 3):



**Պատերազմի կանխազգացումը,
(22.09.2020)**

44-օրեայ պատերազմի մեկնարկից օրեր առաջ՝ սեպտեմբերի 22-ին Հայ Դատի յանձնախմբի անունից նիդերլանդացի երոպատգամավորներին նամակ ուղարկեց՝ վերջիններիս զգուշացնելով, որ Ադրբեջանի յարձակողապաշտության վերաբերեալ: Մտահոգութեամբ ընդգծեց, որ ադրբեջանական զորքերի կուտակումը պայթինավտանգ իրավիճակ է ստեղծել եւ պետք է միջոց ու ջանք չխնայել կանխելու համար վերահաս պատերազմը:

**Արցախեան երկրորդ պատերազմի սկիզբը,
(27.09.2020)**

Պատերազմի լուրն առնելուց անմիջապէս հետո Հայ դատի Նիդերլանդների յանձնախումբը կառավարութիւնից եւ խորհրդարանից պահանջեց անմիջապէս եւ խստօրէն դատապարտել ադրբեջանական ագրեսիան եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը բռնութեամբ լուծելու փորձը:

**Հանրահաւաք պատերազմը դադարեցնելու պահանջով
(29.09.2020)**

Հայ Դատի Նիդերլանդների յանձնախմբի եւ Նիդերլանդների հայկական կազմակերպութիւնների կազմակերպմամբ՝ սեպտեմբերի 29-ին Հաւաքայում անցկացւեց հանրահաւաք, որին սամակցում էին

մօտաւորապէս 300 ցուցարարներ, վերջիններիս պահանջը Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի դադարեցումն էր: Միաժամանակ հանրագիր ներկայացվեց Նիդերլանդների խորհրդարան՝ պահանջելով սատնանշել պատերազմը հրահրողին: Հանրագիրը ընդունող պատգամաւորներին յայտարարեցինք, որ Ադրբեջանին զսպող լծակ կարող է լինել միայն Արցախի անկախութեան ճանաչումը:

Նիդերլանդների խորհրդարանի պատգամաւոր՝ Փիթր Օնոզիխտը՝ Քրիստոնեայ-ժողովրդավարական Միութիւն (CDA) կուսակցութիւնից հանդէս եկաւ Ադրբեջանա-թուրքական յարձակումը դատապարտող յայտարարութիւն ընդունելու առաջարկով: Յուլիսի 30-ին Հայ Դատի յանձնախումբը նամակ յղեց բոլոր խորհրդարանականներին՝ խնդրելով, որպէսզի աջակցեն Օնոզիխտի նախաձեռնութեանը (նկար 4):

Հայ Դատի յանձնախումբը երոպական Խորհրդարանում պատերազմի վերաբերեալ քննարկումների նախօրէին՝ հոկտեմբերի 4-ին, նիդերլանդացի պատգամավորներին նամակներ ուղարկեց՝ մանրամասն բացատրելով իրավիճակը: Յանձնախումբը պահանջեց հանդէս չգալ կողմերին զսպածութեան կոչերով, այլ ճշմարտացի գնահատականներ տալ յընթացս գործողութիւններին, սատնանշել ագրեսիան սկսած կողմին:

Հայ Դատի Նիդերլանդների յանձնախմբի կազմակերպմամբ մեծ թուով նիդերլանդահայեր հոկ-



Նկար 4



Նկար 5

տենների 10ին մեկնեցին Բրիսել՝ մասնակցելու Բրիսելում անցկացաող հանրահավաքին: Նոյն օրը, Նիդերլանդների այլ հայկական կազմակերպությունների հետ կազմակերպեց լռակեաց հանրահավաք Հաագայում՝ խորհրդարանի առջեւ, որպէսզի պատգամաւորների ուշադրութիւնը սեւեռւի տեղի ունեցող լայնածաւալ պատերազմի վրայ: ՀՀԴ երիտասարդական միութեան անդամների աջակցութեամբ երկու շաբաթ շարունակ ներկայութիւն ապահովեց այդ ցոյցին, որի արդիւնքում կարեւոր հանդիպումներ տեղի ունեցան, մինչեւ իսկ Նիդերլանդների վարչապետ Մարկ Ռուտեի հետ եւ փոխանցեցինք մեր ստահոգութիւնները (նկար 5):

Հանախորհուրդ հայկական այլ կազմակերպութիւնների հետ՝ հոկտեմբերի 10-ին բողոքի բազմամարդ միջոցառում կազմակերպեց Իսրայէլի դեսպանութեան առջեւ՝ կապված Ադրբեջանին խորալեական անօղաչունների վաճառքի եւ դրանց կիրառութեան հետ:

Նոյեմբերի 2-ին, քաղաքական գործիչ Հարի Վան Բոմելը այցելեց Հայաստան: Նրա նախորդ այցելութիւնը Հայաստան եւ Արցախ տեղի էր ունեցել Հայ Դատի յանձնախմբի նախաձեռնութեամբ:

Նա նշանակալի աւանդ է ունեցել Հայոց Ցեղապանութեան ճանաչման գործում, ինչպէս նաեւ Արցախի ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան հարցում:

Սի խումբ հայամէտ պատգամաւորների կողմից, նոյեմբերի 18-ին, Նիդերլանդների խորհրդարան ներկայացուցին հայանպաստ որոշումների առաջարկութիւններ: Դրանք հիմնականում Ադրբեջանին եւ Թուրքիային դատապարտող որոշումներ էին: Հայ Դատի յանձնախումբը Նիդերլանդների խորհրդարանի բոլոր պատգամաւորներին նամակներ ուղարկեց՝ խնդրելով պաշտպանել այդ առաջարկութիւնները:

Նիդերլանդների խորհրդարանի բանաձեւն Արցախի վերաբերեալ (11.12.2020)

Դեկտեմբերի 12-ին Հայ Դատի յանձնախումբը հանդէս եկաւ յայտարարութեամբ, որտեղ ողջունեց Նիդերլանդների Խորհրդարանի կողմից ընդունած բանաձեւը Արցախի վերաբերեալ, որտեղ մասնաւորապէս նշվում է, որ Արցախի կարգավիճակի հարցը պէտք է քննարկուի եւ լուծուի ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակներում: Այս որոշմամբ,





Գ Գմիր

փաստորէն, Նիդերլանդների խորհրդարանը, անկախ պատերազմի ելքից, ԵԱՀԿ Մինսկի խմբին է վերապահում Արցախի վերջնական կարգավիճակի որոշման հարցը (նկար 6):

**Հանդիպում
Հարի Վան Բոմելի
եւ Անտոնի Հոլսլախի հետ
(12.12.2020)**

Դեկտեմբերի 12-ին յանձնախումբն առջանց հանդիպում անցկացրեց քաղաքական գործիչ Հա-

րի Վան Բոմելի եւ գրող-հրապարակախօս՝ Անտոնի Հոլսլախի հետ, պատերազմի հետեւանքների մասին: Հանդիպման 40-ից անցի մասնակիցներին նրանք պատմեցին իրենց տպավորութիւններն ու պատասխանեցին հնչած հարցերին: Օգտակար գրոյց տեղի ունեցաւ, քանի որ երկու բանախօսներն էլ քաջատեղեակ էին պատերազմի մանրամասնութիւններին: Ծանր հոգեվիճակի մէջ գտնուող մեր հայրենակիցների համար նրանք որոշ խորհուրդներ ունէին այս իրավիճակը յաղթահարելու եւ լուծումներ գտնելու վերաբերեալ:

Հայ Դատի Լեհաստանի յանձնախումբ

Armenian National Committee of Poland



www.facebook.com/haydatpoland

2020 թականի Կորոնավիրուսի ստեղծած իրավիճակի բերումով, Լեհաստանի մէջ բացարձակապէս արգիլած էր որեւէ մէկ հաաքական նախաձեռնութիւն կազմակերպելը: Ժամանակագրական կարգով կարելի է ներկայացնել Հայ Դատի Լեհաստանի յանձնախումբի կազմակերպած, մասնակցած, քաջալերած կամ հանագործակցած աշխատանքները հետեւեալ կէտերու մէջ:

Լեհաստանի մէջ ապրիլեան 105-րդ տարելիցի միջոցառումներ

20 յուլիսի 2020 թ. Լեհաստանի Հայ Դատի յանձնախումբի մասնակցութեամբ եւ Լեհաստանի մէջ գործող հայկական կրօնական, սշակութային եւ այլ կազմակերպութիւններու կողմէ երախտագիտութեան միասնական նամակ մը ուղղեցինք Լեհաստանի խորհրդարանի (Սեյմ) նախագահ Տկն. Էլժպիէթա Վիթէքին, շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնելու Լեհաստանի Սէյմին 19.04.2005 թին միաձայնութեամբ Հայոց Ցեղասպանութիւնը ընդունելու որոշումի 15-ամեակի առիթով:

Լեհաստանի զանազան քաղաքներու մէջ հայկական խաչքարերու կողքին (ոչ խմբային դրութեամբ) ապրիլ 24-ին ծաղկեպսակներու զետեղում:

Լեհական մանուկի մէջ 105-րդ տարելիցի առիթով, լոյս տեսան անդրադարձներ, յիշատակումներ, յօդածներ ինչպէս Հայոց Ցեղասպանութեան մասին իր յօդածներով եւ իր գիրքերով հանրաձայնօթ պրոֆեսոր Կժեկոժ Գուխարչիքի՝ «20-րդ դարը՝ մարդկութեան պատմութեան ամենէն արհիւսալի դարը սկսաւ Քրիստոնեաներու հողորոշումով: Սեր

պարտքն է յիշել Թուրքիայի մէջ Հայոց Ցեղասպանութիւնը» յօդածը եւլն:

23 ապրիլի 2020 թ. երեկոյեան լեհական պետական TVP Historia հեռուստակայանը ցուցադրեց «Հայոց Ցեղասպանութիւն» ֆիլմը, մէկ ժամ տեւողութեամբ: Պատմա-վաերագրական այս ֆիլմը անգամ մը ես կրկնեցաւ 24 Ապրիլին:

Ապրիլ 24-ին լեհական «Polsat News» հեռուստակայանի Համաշխարհային քաղաքական լուրերու բաժնի գլխաւոր վերլուծաբանը անմիջական հեռակայ հարցազրոյց մը ունեցաւ Լեհաստանի մօտ ՀՀ նախկին դեսպան Էդգար Ղազարեանի հետ Հայոց Ցեղասպանութեան 105-րդ տարելիցի առիթով:

Ադրբեջանի զինած ուժերու ՀՀ պետական սահմանի խախտում 12 յուլիսի 2020

Յանձնախումբիս հանանախաձեռնութեամբ եւ հանագործակցութեամբ 20 յուլիսի 2020 թ. լեհահայ փոքրամասնութեան միութիւններու անունով օգնութեան կոչ ներկայացուցինք Լեհաստանի Սենաթի նախագահ Թոնաշ Կրոտօքիին արձագանգելով 12 յուլիս 2020 թ.-ին Ադրբեջանի զինած ուժերու կողմէ Տաուշի ուղղութեամբ ՀՀ պետական սահմաններու խախտումի համար, յիշեցնելով նաեւ Մեծամօրի ատոմակայանը թիրախ դարձնելու ադրբեջանական սպառնալիքներն ու ստորանքները: Լեհաստանի պետութենէն խնդրելով աւելի զգաստ դիրքորոշում ունենալ, ուշադրութեան հրաւիրելով եւ յիշեցնելով նաեւ Լեհաստանի եւ միջազգային ընտանիքի դերակատարութիւնը սահմանային իրավիճակէն բխած ՀՀ եւ հայ ժողովուրդի անվտանգութեան խիստ անհրաժեշտութիւնը:



Ադրբեջանի եւ Թուրքիոյ կողմէ լայնածաւալ յարձակումէն 27.09.2020թ. ետք

Լեհաստանի խորհրդարանի (Սէյմ) մէջ առաջին անգամ ըլլալով 7 հոկտեմբերի 2020թ. Հայաստանի հետ խորհրդարանական համախմբում մը կազմեցաւ (գլխաւորութեամբ Սարթա Քուպիաքի), համախմբումը կը բաղկանայ, իշխող (Օրէնք եւ արդարութիւն) (PIS) կուսակցութենէն երեք պատգամաւորներէ, անոնց անուն նականնումներն են՝ Սարթա Քուպիաք, Քաթաժինա Վոյթիշեք, Կժեկոժ Լօրեք:

Աւելի ուշ այս խմբակին միացաւ ընդդիմադիր կուսակցութենէն՝ քաղաքական պլատֆորմ (PO) կուսակցութենէն Թոմաշ Օլիխաէր:

Ադրբեջանի եւ Թուրքիոյ կողմէ լայնածաւալ յարձակումէն ետք քաղաքական գործիչներու, հոգեւորականներու, արեւստագէտներու եւ ստաւրականներու կողմէ եղան զանազան ասուլիսներ, հարցազրոյցներ, որոնք կը պաշտպանէին Արցախը եւ հայ ժողովուրդի իրաւունքները:

Ծագումով հայ նախկին պատգամաւոր Լուքաշ Սպկարովիչ Łukasz Abgarowicz, լեհերէնով արտասայտեցաւ, նիւթ ունենալով՝ «Առանց Լեռնային Ղարաբաղի չկայ Հայաստան: Սարսափելի է աշխարհի լռութիւնը»:

Հայ ժողովուրդի պաշտպան եւ 2018 թ.-ին Եւրոպայի Հայ Դատի գրասենեակի գնահատագիրին արժանացող հոգեւորական, ծագումով հայ հայր Թադէուշ վրոյ. Իսաքովիչ – Ջալեքին (ks. Tadeusz Isakowicz-Zaleski), լրատական զանազան կայաններուն իր բողոքի խօսքերը փոխանցեց ադրբեջանական յարձակումին առիթով նիւթ ունենալով «ԱՄՆ-ը դաւաճանեց Հայաստանին: Ռուսաստանի հետ դաշինքը սիրոյ դրոյնով չէ»:

14 հոկտեմբերի 2020 թ.-ին Լեհաստանի խորհրդարանի (Սէյմի) փոքրամասնութիւններու յանձնաժողովի նիստին ծագումով հայ իրաւաբան Մաչէյ Պոհոսեվիչը Լեհաստանի վարչապետին եւ պետութեան կոչ ուղղեց խնդրելով օգնել Արցախի հայութեան:

Հարցազրոյց՝ լրագրող Վիթոլդ Ռէպէթովիչի (Witold Repetowicz) հետ «Լեռնային Ղարաբաղ՝ պետութիւն մը, որ չէ ճանչցած»: Պէտք է յայտնել, որ

Վիթոլդ Ռէպէթովիչը միակ լեհ ռազմական լրագրողն էր, որ եղած է Արցախի մէջ պատերազմէն առաջ, իսկ պատերազմի ընթացքին մասնակցած է իր լրագրութիւններով, ներկայացնելով պատերազմի իրականութիւնը եւ հայանպաստ արտայայտութիւններով, ասուլիսներով ու հարցազրոյցներով, թէ յօդածներով ներկայացուցած է Արցախահայութեան քաղաքացիական, մարդկային իրաւունքներու եւ Արցախի իրաւատէր ըլլալու ճշմարտութիւնը: Պատերազմի ընթացքին նկարահանած է Արցախի մասին ֆիլմ մը, որ Լեհաստանի պետական առաջին ալիքէն իր անդրանիկ սփռումը ունեցաւ 24.01.2021 թիւն, «44 dni – koszmar wojny», «44 օրերու պատերազմի մղձաւանջը» անուն տակ:

Հայ Դատի յայնձնախումբի մասնակցութեամբ՝ հանդիպում-զրոյց տեղի ունեցաւ Արցախի 2020 թ.-ի պատերազմի ընթացքին միակ լեհ լրագրող Վիթոլդ Ռէպէթովիչի հետ Վրոցլա քաղաքի մէջ: Հակառակ կորոնավիրուսի ստեղծած իրավիճակին եւ արգելափակումներուն, շաբաթ, 10 հոկտեմբերի 2020 թ.-ին Վարշաւայէն ժամանած լեհ լրագրողը դասախօսեց Արցախի պատերազմի իրավիճակին մասին, իր վերլուծումները ներկայացուց ադրբեջանական ու թուրքական պետութիւններու կողմէ լայնածաւալ յարձակումներէն ետք ստեղծած Հայաստանի թէ՛ Արցախի քաղաքական ու ռազմական իրավիճակին մասին: Լրագրողը խոստացաւ երկուշաբթի օր Արցախ մեկնիլ շարունակելու համար իր առաքելութիւնը, եւ այդպէս ալ եղաւ, դիմատետրի իր ամենօրեայ անդրադարձներով ներկայացուց պատերազմական իրավիճակի տարբեր հանգրիւմները:

Յանձնախումբը 24 հոկտեմբերի 2020 թ.-ին Լեհաստանի Հայ Դատի անունով նամակ մը ուղղեց ԵՄ յանձնակատարին Ջոզէֆ Բորէլին խնդրելով օգնութեան հասնիլ արցախահայութեան:

05 հոկտեմբերի 2020 թ.-ին յանձնախումբի համանախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ՝ կոչ եւ խնդրագիր ներկայացուցինք Լեհաստանի պետութեան նախագահին, վարչապետին եւ խորհրդարանի (Սէյմի) նախագահին, լեհահայ միութիւններու, հոգեւորականներու եւ անհատներու անունով, այդ կոչին միացան նաեւ յոյներ եւ բուլղարացիներ: Լեհաստանի Հանրապետութեան

իշխանություններուն ուղղած կոչի հեղինակները անյապաղ կը խնդրեն վճռական միջոցներ ձեռնարկելու եւ օգնելու Արցախի հայութեան:

06 հոկտեմբերի 2020 թ.-ին աւելի քան 2000 հայորդիներ Վարշաւայի մէջ քայլերթով իրենց բողոքը, զայրոյթը եւ ընդվզումը բարձրաձայն արտայայտեցին ընդդէմ Ադրբեջանի եւ Թուրքիոյ կողմէն Արցախի եւ արցախահայութեան դէմ պատերազմական յարձակումներու համար: Մասնակիցները իրենց խօսքերը ուղղեցին Լեհաստանի նախագահին, եւ իշխանութեան եւ մանաւանդ Եւրոպական Միութեան համայնքներուն եւ անոնց ներկայացուցիչներուն, խնդրելով միանշանակ դատապարտելու թուրք-ադրբեջանական համատեղ զօրքերու բարբարոսական գործողութիւնները եւ ապահովելու հայ ժողովուրդի անվտանգութիւնը:



Հայ Դատի Շեղիայի յանձնախումբ

Svensk–Armenisk Kommitté för Rättvisa och Demokrati



www.facebook.com/eajfd.sweden

Կորոնահամավարակը արդէն իր վատ հետեւանքը ձգած էր մեր միութենական աշխատանքներու վրայ, Արցախեան քառասունօրեայ պատերազմը եկաւ շարունակելու ջլատել մեր միութենական ժողովները, բայց այս բոլորին հետ մեր քոյր միութիւնները իրենց աշխատանքով զօրավիզ կանգնեցան Արցախեան շարժման աշխատանքներուն՝ եւ օժանդակեցին նիւթապէս եւ բարոյապէս, օժանդակելով Արցախեան պատերազմի մեր ազատամարտիկներուն: ՀՅԴ Շեղիայի կոմիտէի ընկերները համագործակցաբար Հայ Դատի յանձնախումբի հետ, քաղաքական հանդիպումներ ունեցան Շեղիական քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներու հետ՝ յատկապէս ձախակողմեան կուսակցութիւնը, Քրիստոնիայ Դեմոկրատ, Լիբերալներու հետ:

44-օրեայ պատերազմի ընթացքին զօրաշարժի ենթարկած ենք մեր ամբողջ ներուժը, որպէսզի կարելի ըլլայ մեր բողոքի ձայնը լսելի դառնայ միջազգային ընտանիքին: Չնայած համավարակի տարածման պատճառով, ցոյցերու սահմանափակումն ու հանրահաւաքներու կրճատման օրէնքին՝ կարողացանք տարբեր վայրերում թիով եօթը ցոյց կազմակերպել ընդդէմ թուրք-ադրբեջանական ոտնձգութիւններուն: Առաւել եւս մեր երիտասարդները բողոքի ցոյց մըն ալ կազմակերպեցին Իւրայէլի դեսպանութեան դիմաց, ինչպէս նաեւ TV4 հեռուստաընկերութեան կայանին դիմաց սպատեղեկատուութիւն սփռելու պատճառով:

Նամակներ ուղղած են նաեւ խորհրդարանի տարբեր կուսակցութիւններու ներկայացուցիչներու, որպէսզի իրենք ալ իրենց կարգին զօրակցին մեզ:

Յատուկ հանդիպում ունեցանք Շեղիոյ խորհրդարանէն ներս Քրիստոնեայ կուսակցութեան ներկայացուցիչ Lars Adaktusson հայ ժողովուրդի մեծ բարեկամ եւ ջատագով Արցախեան հիմնահարցին, որը խորհրդարանէն ներս Շեղիոյ արտաքին գործոց նախարարուհին ներկայացուցիչի հետ Ann Linde բանավիճելով պաշտպանած էր Արցախի ժողովուրդի դէմ շղթայազերծած անողորմ պատերազմը:

Ինչպէս նաեւ հանդիպումներ ունեցանք Ստոկթըլիոյն ներս, «Քրիստոնիայ Դեմոկրատ» կուսակցութեան ներկայացուցիչին հետ եւ քննարկած հայ ժողովուրդը յուզող հարցեր, յատկապէս Արցախեան պատերազմի ընթացքին հայ ռազմագերիներու հարցը եւ արգիլած զէնքեր գործածել եւ պատերազմի հետեւանք ձգած Արցախի հայ գաղթականներու եւ անօթեան մնալու հարցը:

Հայ գաղթականներու իրավիճակի մասին Lars Adaktusson արծարծեց արտաքին գործոց նախարարուհի Ann Linde հետ խորհրդարանէն ներս բանավեճի ժամանակ:

Առաւել հանդիպումներ ունեցանք քաղաքական եւ պետական մշակութային եւ մարմնակրթական յանձնախումբերու ներկայացուցիչներու հետ եւ քննարկած բոլոր այն միջոցները, որով կարելի պիտի ըլլայ օժանդակութիւն հայթայթեն նիւթական Ստոկթըլիոյ Կենտրոնի համար, նկատելով կորոնայի պատճառած հետեւանքները, որը նախապէս օժանդակութիւններ կը ստանայինք ABF եւ Belda-էն, ցարդ դադրած են, սակայն բանակցութիւնները կը շարունակին:

Հայ Դատի Երուսաղէմի յանձնախումբ

Armenian National Committee of Jerusalem



www.facebook.com/ANCJerusalem

Հայ Դատի Երուսաղէմի յանձնախումբը յատկապէս մեծ ակտիւոյնին ցուցաբերեց Արցախի դէմ 2020 թ. սեպտեմբերի 27-ից սանձազերծուած ադրբեջանաթուրքական պատերազմի մեկնարկից յետոյ, ինչը մեծապէս պայմանաւորուած էր Իսրայէլի կողմից Ադրբեջանին հսկայական քանակութեամբ նորագոյն զէնք-զինամթերքի վաճառքի փաստով: Ընդհանուր առմամբ կազմակերպել են թուով 9 ցոյցեր, որոնք ներկայացնում են ստորեւ:

2020 թ. հոկտեմբերի 6-ին, Հայ Դատի Երուսաղէմի յանձնախումբի նախաձեռնութեամբ, Իսրայէլի վարչապետի նստավայրի դիմաց տեղի ունեցաւ բողոքի ցոյց՝ Ադրբեջանին իսրայէլական զէնքի վաճառքի դադարեցման եւ ազրեւսիայի դատապարտման պահանջով:

Բողոքի ցոյցի նպատակն էր յիշեցնել Իսրայէլի կառավարութեանը, որ զինելով Ադրբեջանին, Իսրայէլն ըստ էութեան զինում է Թուրքիային՝ աջակցելով նրա ծաւալապաշտական եւ արկածախնդիր քաղաքականութեանը, ինչը վտանգ է ներկայացնում ամբողջ տարածաշրջանի, այդ թում եւ Իսրայէլի համար: Համավարակով պայմանաւորուած սահմանափակումների պատճառով՝ բողոքի

ցոյցին թոյլատրուեց մասնակցել միայն 20 հոգու (նկար 1):

Նոյն պահանջով եւս մէկ ցոյց, արդէն համայնքային լայն ներգրամամբ, կազմակերպուեց հոկտեմբերի 22-ին Իսրայէլի Արտաքին գործերի նախարարութեան դիմաց (նկար 2):

Հոկտեմբերի 27-ին բողոքի ցոյց տեղի ունեցաւ ընդդէմ Իսրայէլական լրատամիջոցների, որոնք միտումնաւոր չեն լուսարանում թուրք-ադրբեջանական ահաբեկչական յարձակումը Հայաստանի եւ Արցախի վրայ: Բողոքի ակցիան անցկացուեց Իսրայէլի առանցքային լրատամիջոցներ՝ «Իսրայէլ ալիք 13» -ի եւ «Կեշետ մեդիա խմբի» դիմաց:

Հոկտեմբերի 29-ին ոգեկոչման լուսակցիա իրականացուեց ի յիշատակ քաղաքացիական անձանց ու խաղաղ բնակիչների յիշատակի, ովքեր զոհուել էին պատերազմի ընթացքում, հնչեցին Ադրբեջանին Իսրայէլական զէնքի վաճառքը դատապարտող յայտարարութիւններ: Իսրայէլական զէնքի վաճառքը դադարեցնելու կոչերով բողոքի եւս մէկ ցոյց-երթ կազմակերպուեց արդէն նոյեմբերի 2-ին: Նոյն նպատակով ցոյցեր կազմակերպուեցին նաեւ նոյեմբերի 6-ին եւ 9-ին (նկար 3):



Նկար 1



Նկար 2



Նկար 3



Հայ Դատի Թեհրանի յանձնախումբ

“Hoor” Research Institute of Armenian Issues

موسسه ترجمه و تحقیق هور



www.hoosk.ir | www.paymanonline.com

Հայ Դատի յանձնախումբը իր ենթակայ ենթայանձնախմբերով եւ ամենօրեայ բանուկ գրասենեակով արտաքին իրանական եւ ներքին հասանքային ճակատներուն գործունէութիւնն է ծաւալել հետեւեալ բնագաւառներուն.

Համացանց

Որպէս տեղեկատուական միջոց օգտագործել է կայքէջը (հայերէն եւ պարսկերէն տարբերակներ), երեք «ֆէյսբուք»ային էջ: Տեղադրուել է 11 ֆիլմ youtube-ուն:

Յանձնախումբը ակտիւ գործունէութիւն է ծաւալում «facebook» սոցիալական ցանցում եւ telegram-ուն:

Թիրախատրուել է յատկապէս ոչ-հայ լսարանը: Փորձ է կատարուել նրանց տրամադրել լիար-

ժէք լրատուութիւն, ինչպէս նաեւ ապահովել վերլուծական յօդաձեւերով, որոնք ուղղակի կան անուղղակի վերաբերում են Հայ Դատին, Հայաստանին, Արցախին եւ տարածաշրջանային հիմնախնդիրներին:

Յանձնախումբը ակտիւ ներկայութիւն է ապահովել նաեւ Վիքիպեդիա առցանց հանրագիտարանի պարսկերէն բաժնում, տեղադրելով 560 յօդաձեւեր եւ փորձելով կանխել հակահայկական յօդաձեւերի թողարկումը:


Օգտագործելով առկա հնարաւորութիւնները, տպագրուել են մի շարք յօդաձեւեր՝ Հայաստանի եւ Արցախի վերաբերեալ: Արցախեան 44-օրեայ պատերազմի օրերին, Հայ Դատի յանձնախումբն օգտագործելով այս հնարաւորութիւնը, փորձել է ներկայացնել ողջ իրողութիւնը եւ յաջողել է մի քանի նիւթեր եւ յօդաձեւեր տրամադրել պատկան լրատամիջոցներին:



Նկար 1



Նկար 2



Նկար 3

Թարգմանչական եւ հրատարակչական աշխատանքներ

Պարսկերէն թարգմանութեանը հրատարակել է՝ (նկար 1-4)

- ✔ Ռիչարդ Յովհաննիսեանի «Հայաստանի Հանրապետութիւն» գրքի 2-րդ հատորը
- ✔ ایالات متحده آمریکا و نسل کشی ارمنیان (United states of America and the Armenian Genocide) (Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ Հայոց Ցեղասպանութիւն) (Իսիկ Իննանիսեան)
- ✔ نسل کشی ارمنیان در مراجع بین المللی («Հայոց Ցեղասպանութիւնը» միջազգային ատեաններում) (Յարութ Սատունեան) (Թարգմանիչ՝ Վահիդ Ամիրանի)
- ✔ «Killing orders» (Թանէր Աքչամ) (թարգմանիչ՝ տէն. Աթուսա Սամիի)

Հայ Դատի յանձնախումբը կարողացել է իր շուրջ հասնախմբել 400 իրանցի մտատրականների, այդ թուում՝ գրողներ, թարգմանիչներ, հանալսարանի դասախօսներ եւ լրագրողներ: Սյա շրջանակի համար, 2020 թականի սկզբում դասախօսութիւններ եւ ծրագրեր է կազմակերպել:

- 1. Դասախօսական երեկոյ՝ «Հայերի ներդրումն Օսմանեան կայսրութիւնում» դասախօս՝ ճարտարագէտ՝ Արմիկ Նիկողոսեան:
- 2. Գնահատանքի երեկոյ ի պատիւ պրոֆ. Մկրտիչ Թումանեանի, ով հանդիսանում է Իրանի գիտութիւնների ակադեմիայի մաթեմատիկայի ճիւղի նախագահը:
- 3. Դասախօսական երեկոյ՝ «Տարածաշրջանի օրայ հարցերի վերլուծութիւն եւ ապագայի

հեռանկարներ» թեմայով: Դասախօս՝ Գոկտ. Հոսէյն Դահեշեար (Ալանէ Թարաթարայի հանալսարանի դասախօս, քաղաքագէտ): (նկար 5-6)

Յանձնախումբը հիմնականում կենտրոնացել է «Ֆէյսբուք», , telegram, instagram եւ youtube էլեկտրոնային ցանցերի միջոցով, նիւթեր եւ պատմական կարճ ֆիլմերի տարածմամբ:


- Սոցանց ծրագրեր.
- 1. Նախաձեռնել է մէկօրեայ «online talk show webinar» նիւթ՝ կոնֆիլկտ, անելիքներ եւ չանելիքներ:
- 2. Կազմակերպել է «Տեսակէտ» ծրագիրը online տարբերակով կապիտուլեացիոն յայտ՝ պատճառա-հետեանքային քննարկում:

2020 թականի մարտ անսից, կորոնավիրուսի պատճառով չի իրականացել այս ծրագրերը:

- ✔ Սպրիլ 24-ին Մեծ Եղեռնի ոգեկոչման 105-րդ տարելիցին նիրաձ միջոցառում
- ✔ «Հայ Դատն այսօր» 14-րդ խորհրդածողով
- ✔ «Հայ Դատն այսօր» սեմինար իրանցի մասնագէտների համար



Նկար 5



Նկար 4



Նկար 6

- ✔ **Դասախօսությունների անսական շարան**
- ✔ **Հայոց Յեղասպանության ճանաչման քարոզչական նպատակով, Մեծ եղեռնի ոգեկոչման 105-րդ տարելիցի առիթով Իրանցի ստաուրականության համար միջոցառում:**
- ✔ **Մեծարանքի երեկոյ՝ նախած Դիանա Սրգարի:**
- ✔ **Գրքերի շնորհանդես:**

Հայ Դատի յանձնախումբը կանոնաւոր կապի մէջ է պարսիկ անհատ ստաուրականների, քաղաքական-հասարակական գործիչների եւ դասախօսների հետ:

Համագործակցում է երկրում աշխատող մի քանի հեղինակաւոր վերլուծական-հետազօտական կենտրոնների հետ:

Ստեղծել է լրագրողների ցանց, որոնց հետ կանոնաւոր կապի մէջ է եւ նրանց միջոցով փորձում է տարածել Հայ Դատի, Հայաստանի եւ Արցախի հետ կապած նիւթեր:


Թուրքիայի եւ Ադրբեջանի դեսպանատները օգտուելով հիմնականում պանթուրանական շրջա-

նակներից ծաւալում են ակտիւ հակահայկական քարոզչութիւն: Նրանք նաեւ լաքքիստական աշխատանքներ են ծաւալում Իրանի քաղաքական, հասարակական եւ ԶԼՄ-ների շրջանակում:

Համահայկական հարցերի կապակցութեամբ համագործակցում է Իրանի ՀՀ դեսպանութեան հետ:

«Պայման» եռամսեայ հանդէս

«Պայման» եռամսեայ հանդէսը կանոնաւոր ձեւով լոյս է տեսնում արդէն 23 տարի՝ եռամսեայ պարբերականութեամբ: «Պայման»-ը լինելով հայ ժողովրդին Իրանական յարանկին ծանօթացնող միակ պարսկալեզու հանդէսը, հանդիսանում է յանձնախմբի արտաքին քարոզչական եւ յարաբերութիւնների ազդեցիկ եւ կարեւոր գործիքակազմից մէկը, որն առիթ է ընձեռնում հիմնականում Իրանի ակադեմիական շրջանակների հետ ձեւաւորել եւ ընդլայնել տարբեր նակարդակների քաղաքական, հասարակական եւ մշակութային յարաբերութիւններ՝ հանդէսի շուրջ համախմբելով պարսիկ ստաուրականների ներկայացուցչական բանակ: Սինչ այժմ լոյս են տեսել «Պայման»-ի թուով 94 համար:



Հայ Դատի Եւր Ջողայի յանձնախումբ

Հասնաճարակի ստեղծած բոլորին ծանօթ պատճառներով, 2020 թականի փետրար ամսից, գրասենեակի աշխատանքներն իրականացել են սոցցանցերի միջոցով:

Հայ Դատի գրասենեակը «Facebook» սոցցանցի «Հայկական Հարցի արտացոլումը» պարսկերէն իր էջով նիւթեր է տարածում Իրանում Արրբեջանի եւ Թուրքիայի կողմից իրականացող հակահայ քարոզչութեան դէմ:

Հայ Դատի յանձնախմբի հիմնադրման 75-ամեակին նիւրած, 2020 թականի յունարի 22-ին կազմակերպել է «Հայ Դատի եւ Արցախի բարեկամներ» խորագրով հանդիպում, համայնքի անդամների մասնակցութեամբ (նկար 1):

Սիրիայի խորհրդարանի կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման մասին 2020 թականի փետրարի 13-ին հաստատուած բանաձեռի կապակցութեամբ, երախտագիտութեան նամակ է առաքել Սիրիայի խորհրդարանի նախագահին եւ շնորհատրանքի նամակ՝ Հ.Յ.Գ. Սիրիայի Հայ Դատի յանձնախմբին:

Հայոց Յեղասպանութեան 105 եւ 106-րդ տարելիցի առթիւ, Հայ Դատի գրասենեակը տեսաուղերձ է յղել, որը ցուցադրել է յանձնախմբի ինստագրամի էջում:

Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչը մասնակցել է թեմի ազգային իշխանութեան, ԻԻՀ-ում Վատիկանի դեսպանի եւ Իրանի ՍԳՆ մանրոյ խօսնակի հետ հանդիպմանը (10 յուլիս 2020 թ.), որի ընթացքում յատուկ անդրադարձ է եղել Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին Հռոմի Պա-

պի կողմից Հայոց Յեղասպանութիւնը ճանաչելու փաստին եւ պատուիրակութեանն է փոխանցել մեր երախտագիտութեան խօսքը (նկար 2):

2020 թ. օգոստոսի 4-ին, Բէյրութում տեղի ունեցած աղէտի առթիւ Հայ Դատի գրասենեակը հրապարակել է Լիբանանի հայութեանն ուղղած զօրակցութեան կոչ:

2020 թականի սեպտեմբերի 5-ին թեմի ազգային իշխանութեան եւ Շւէյցարիայի արտաքին գործերի նախարարի հետ հանդիպմանը ներկայ է եղել նաեւ Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչը, որտեղ շնորհակալական խօսք է փոխանցել Շւէյցարիայի խորհրդարանին՝ Հայոց Յեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչելու կապակցութեամբ եւ աւարտին Հայոց Յեղասպանութեան յուշարձանի մօտ տեղի է ունեցել ծաղկեմատոյց (նկար 3-4):

Արցախի 44-օրեայ պատերազմ

Հայ Դատի յանձնախմբի միջոցով կազմակերպել է նիւրահաւաք՝ Արցախեան 44-օրեայ պատերազմի տուժածներին օժանդակելու համար:

2020 թ. հոկտեմբերի 18-ին հանդիպում է տեղի ունեցել ազգային մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչների հետ, որտեղ Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչը զեկոյց է ներկայացրել Արցախին օժանդակելու ուղղութեամբ՝ Հայ Դատի յանձնախմբի իրականացրած աշխատանքների շուրջ:

Արցախի պատերազմի ընթացքում Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչը նահանգի պատասխանատուների հետ հանդիպումների ընթաց-



Նկար 1



Նկար 2





Նկար 3

քում տեղեկություններ է փոխանցել պատերազմում ահաբեկչական խմբավորումների մասնակցության վերաբերեալ, ընդգծելով այս խմբավորումների կողմից ներկայացրող հաանական վտանգը Իրանի համար:

Հայ Դատի յանձնախումբը հանդէս է եկել յայտարարութեամբ, որով դատապարտել է Սդրբեջանի յարձակումը Արցախի բնակչութեան վրայ եւ միջազգային հանրութիւնից պահանջել է դատապարտել Սդրբեջանի եւ Թուրքիայի գործողութիւնները:

Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչը մասնակցել է Թեմի ազգային իշխանութեան եւ Ռուսաստանի դեսպանութեան ներկայացուցիչների հետ հանդիպմանը, որտեղ վերջիններս յանձնեցին թեմակալ առաջնորդին ուղղած դեսպան Լեւոն Ճաղարեանի պատասխան-նամակը, որում մատնանշած էր Ռուսաստանի կառավարութեան տարած ջանքերը՝ Արցախում խաղաղութիւն հաստատելու եւ պայմանագրի ստորագրումից յետոյ նախատեսած ծրագրերի վերաբերեալ: Յատկան-



Նկար 4

շելի է, որ Իրանի ՍԳԵ-ն եւ Իրանում Ռուսաստանի ու Ֆրանսիայի դեսպանատներին յղած առանձին նամակների միջոցով պահանջել էր համապատասխան քայլեր ձեռնարկելով, օր առաջ կարգադրել հայկական կողմի անհետ կորածներին գտնելու, գոհաձների աճիւնները եւ գերիներին վերադարձնելու գործը:

Հայ Դատի գրասենեակը Արցախի պատերազմական իրավիճակի հետ կապած աշխատանք է ծաւալել սոցցանցերում, պատրաստել է նամակներ եւ յղել Իրանում Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Շէյքարիայի, Յունաստանի, Կիպրոսի, Չինաստանի եւ Վրաստանի դեսպանատներին, ընդգծելով տարածաշրջանում Թուրքիայի ծաւալապաշտական քաղաքականութիւնը, Արցախեան պատերազմում ահաբեկչական գրոհայիների ներկայութեան հետեանքները եւ Արցախի Հանրապետութեան ճանաչման անհրաժեշտութիւնը:

Հայ Դատի գրասենեակի անդամներից մէկը հարցազրոյց է տւել իրանական IMNA լրատուական գործակալութեանը:

Հայ Դատի Սուրիոյ յանձնախումբ

Armenian National Committee of Syria



www.alqadiya.com | www.facebook.com/alqadiya1915

Յանձնախումբին մնայուն եւ առօրեայ աշխատանքն է Ալքադիա կայքէջը (www.alqadiya.com), ուր կը հրատարակի Հայ Դատի հետ կապած բոլոր տեսակի լուրեր եւ արաբերէն հրատարակութիւններ, այս շրջանին նաեւ յանձնախումբը նախաձեռնեց կարգ մը տեսաերիզներու արաբերէնի թարգմանութեան եւ անոնք որպէս subtitle տեսաերիզին միացնան աշխատանքին, օրինակ Ցեղասպանութեան թանգարանի հրատարակած կարգ մը վկայութիւններու տեսաերիզները որոնք կը տեղադրին կայքէջին մէջ:

Կայքէջը ունի յատուկ «Facebook»-ի, Instagram-ի էջեր, ինչպէս նաեւ Telegram channel եւ Android App:

Հայ Դատի եւ այդ ուղղութեամբ տարած աշխատանքներու ծանօթացման ծիրէն ներս, ինչպէս նաեւ Արցախեան խնդրի ու վերջին պատերազմի կապակցաբար՝ յանձնախումբս ունեցաւ դասախօսական շարք մը Ա.Ե.Մ., Ս.Պ.Մ եւ Հ.Ա.Ը.Մ. շարքերուն (նկար 1):

Իրարայացօրդ Սուրիոյ Հայ Դատի յանձնախումբերու եւ անոնց հունին մէջ աշխատող գործիչներու երկար տարիներու աշխատանքներուն շնորհիւ, 13

փետրուար 2020-ին Սուրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ ճանչցաւ Թուրքիոյ կողմէ իրագործած Հայոց Ցեղասպանութիւնը միաժամանակ դատապարտելով այդ բռնարարքները՝ կոչ ուղղելով միջազգային ընտանիքին ապագային կանխելու ցեղասպանութիւնները (նկար 2):

Հոկտեմբեր 2020-ին նախաձեռնութեամբ յանձնախումբի եւ համագործակցութեամբ «Քրիստափոր» Ուսանողական միութեան կազմակերպեցաւ Արցախի զօրակցութեան հալէպահայ գաղութին համար իր տեսակին մէջ առաջինը հանդիսացող ժողովրդային բողոքի հաւաք, որ տեղի ունեցաւ Հալէպ քաղաքի Ազիզիէի հրապարակը:

Հաւաքին սնանակցեցան Սուրիոյ խորհրդարանի անդամներ, քաղաքական կուսակցութիւններ, իսլամ եւ քրիստոնէայ համայնքապետեր եւ ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ եւ այլ դէմքեր: Ներկայացուցիչները խօսք առնելով հաստատեցին Արցախի ժողովուրդի իրաւացիութիւնը ինքնորոշման իրաւունքի կիրարկման եւ իր սեփական Հայրենիքին մէջ ազատ ապրելու, նաեւ կոչ ըրին դադրեցնելու պատերազմը դատապար-



Նկար 1



Նկար 2





Նկար 3

տելով Թուրքիոյ ոճրային մեղսակցութիւնը այս պատերազմին:

Սելի քան 20 զանազան արար եւ այլ լրատուական միջոցներ ներկայ էին հաւաքին եւ ներկաներուն ու վերոնշեալ կողմերուն հետ հարցազրոյցներով ու մեկնաբանութիւններով արձագանգեցին այս ակտին (նկար 3-4):

Դեկտեմբեր 2020-ին յանձնախումբս կազմակերպեց խորհրդակցական հանդիպում (Սրցախեան վերջին պատերազմ) վերնագրով, տարիներու ընթացքին Սիրիոյ Հայ Դատի աշխատանքներուն աշխատակիցներու սնանակցութեամբ, հանդիպումը գումարեցաւ երկու նիստով եւ սնանակիցները առաջարկեցին 3-րդ եզրափակիչ նիստով աւարտել սոյն խորհրդակցական հանդիպումը:

Հանդիպումին ընթացքին ներկայացուցաւ եւ քննարկեցաւ հետեւեալ խնդիրները.

- ❑ **Զեկոյց՝ Սրցախեան վերջին պատերազմին սնան, զեկուցաբեր՝ Միջին Արեւելքի Հայ Դատի գրասենեակի տնօրէնուհի՝ դոկտ. Վերա Եագուպեան,**



Նկար 4

- ❑ **Ներկայացում՝ պարտուղական յայտարարութեան 9 կէտերուն եւ անոնց առարկայական քննարկումն եւ արժեւորումը,**
- ❑ **Հայաստանի դաշնակից եւ թշնամի պետութիւններու դերակատարութիւնը պատերազմի ընթացքին,**
- ❑ **Հայաստանի անվտանգութեան սպառնացող նոր սարտահրաւէրները,**
- ❑ **Պարտութեան ազդեցութիւնը հայ ժողովուրդի բարոյա-հոգեբանական վիճակին եւ Հայ Դատի պայքարին եւ աշխատանքներուն վրայ,**
- ❑ **Մեր պարտաւորութիւնները Սրցախի Հանրապետութեան ճանաչման առ առաւել հաստատման, ինչպէս նաեւ Սրցախեան պատմա-մշակութային արժէքներու պահպանման կապակցաբար,**
- ❑ **Հայաստանի քաղաքական ներքին իրադարձութիւնները եւ Սփիւռքի դերակատարութիւնը:**

Հայ Դատի Իրաքի յանձնախումբ

Armenian National Committee of Iraq لجنة القضية الارمنية في العراق



www.facebook.com/ANCIRAQ/

Հայ Դատի Իրաքի յանձնախումբը Իրաքի առաջնորդարանին մէջ եւ Ազգային Կենտրոնական վարչութեան հովանաւորութեամբ, ունի գրասենեակ՝ Յեղաապականութեան եւ Արցախի հարցերու կապակցութեամբ աշխատանքները առաջ տանելու համար:

Վերջերս Հայ Դատի յանձնախումբը կարողացաւ որոշ գիրքեր ապահովել զանազան աղբիւրներէ Հայ Դատի եւ Արցախի վերաբերեալ եւ նասամբ թարգմանել արաբերէնի, որոնք են: –

– «Shameful Act», Թաներ Արչան, թարգ.՝ Գէորգ Խաթուն-Օհաննէս (անգլերէնէ թարգմանած)

– «Killing Orders», Թաներ Արչան, թարգ.՝ Գէորգ Խաթուն-Օհաննէս (անգլերէնէ թարգմանած)

– «Ղարաբաղ արհմահոս վերքը», Արշակ Փոլատեան – արաբերէնով

– «Ղարաբաղի հարցի պատճառները եւ արձանները», Արշակ Փոլատեան – արաբերէն լեզուով

– «Ղարաբաղ օրէնսդրական նայածք», Շահէն Աւագեան, թարգ.՝ Նորա Սրիսեան

– «Իրաքահայութեան պատմութիւն», Սեդա Օհաննէան, թարգ.՝ Վահէ Յակոբեան եւ դոկտ. Զաւահ Ալբէրդանի (հայերէնէ թարգմանած արաբերէնի)

Հարկ է նշել, որ այս գիրքերէն օրինակներ նրիւսած են Իրաքի տարբեր նարգերու մէջ գտնուող հասարակարաններուն, ինչպէս նաեւ կարեւոր նշանակութիւն ունեցող կենտրոններուն:

Հայ Դատի յանձնախումբը Արցախի պատերազմի օրերուն իրենց ժիր աշխատանքը կատարեցին եւ նիւթական օժանդակութիւն ապահովելու համար դիմեցին տարբեր միջոցներու, ինչպէս Արցախի նասին հայերէն լեզուով գրութեամբ (T-shirt) պատրաստել եւ վաճառել:



Հայ Դատի Քուվեյթի յանձնախումբ

Armenian National Committee of Kuwait



<https://bit.ly/3krkH88>

Հայ Դատի Քուվեյթի յանձնախմբի աշխատանքային առաջնահերթությունները ընդգրկում են գործունեության և արտաքին, և ներքին ճակատները:

Յանձնախումբը պարբերաբար հանդիպումներ է ունեցել համայնքի կաթողիկոսական փոխանորդ հոգժ Տ. Պետրոս վրդ. Մանուէլեանի և Քուվեյթում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Սարմէն Բաղդասարեանի հետ: Այս հանդիպումների ընթացքում քննարկել են համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունը:

Համավարակով պայմանավորված սահմանափակումների թելադրմամբ՝ Հայոց Ցեղասպանության 105-րդ տարելիցի ոգեկոչումն իրականա-

ցաւ առջանց: Առջանց կայացաւ նաեւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան տօնակատարութեան ձեռնարկը: Այս ձեռնարկներում կարեւոր ներգրավածութիւն ունեն Քուվեյթի Երիտասարդական միութեան անդամները:

Յանձնախումբը կապեր է հաստատել Քուվեյթում գործող մի շարք զանգուածային լրատուամիջոցների ներկայացուցիչների հետ (նկար 1), ինչը հնարավորութիւն է տւել այն լրատուականներով եթեր ստանալ և ներկայացնել յանձնախմբի դիրքորոշումը այս կամ այն խնդրի վերաբերեալ: Այս առումով յատկանշական է, «Ալ Ջարիտա» թերթում հրապարակած յօդաւածը՝ Հայ Դատին առնչող հարցերի վերաբերեալ:



Նկար 1

Հայ Դատի Նոր Զեյլանդիայի յանձնախումբ

Armenian National Committee of New Zealand



www.facebook.com/ancnz

2020թ. մարտի 11-13ը Հայ Դատի Նոր Զեյլանդիայի յանձնախմբի հրաւերով Նոր Զեյլանդիայի Օքլենդ եւ Վելինգտոն քաղաքներ այցելեց Հայ Դատի Սատրապիայի յանձնախմբի պատիրակութիւնը: Հանատեղ հանդիպումներ անցկացուցին ՆԶ խորհրդարանականների, հասարակական-քաղաքական գործիչների հետ:

Օքլենդի համալսարանում կազմակերպեց Հայոց Ցեղասպանութեան եւ Թուրքիայի հետ Նոր Զեյլանդիայի յարաբերութիւնների վերաբերեալ յատուկ քննարկում, որին մասնակցեցին ակադեմիական գործիչներ, ուսանողներ եւ հանրային գործիչներ (սկար 1):

Քննարկումը հիւրընկալեց Օքլենդի համալսարանի եւրոպայի ինստիտուտը, քննարկման խորագիրն էր՝ «Նոր Զեյլանդիան եւ Հայոց Ցեղասպանութիւնը: Ո՞րն է մարդու իրաւունքների գինը Թուրքիայի հետ յարաբերութիւններում»: Քննարկ-

ման ընթացքում դասախօսութիւններով հանդէս եկան Հոլոկոստի ուսումնասիրութիւնների աատրալիական ինստիտուտի դոկտոր Պանայիոտիս Դիանադիսը եւ Օքլենդի համալսարանի քաղաքականութեան եւ միջազգային յարաբերութիւնների աագ դասախօս Մարիա Սրնոդեանը:

Նման քննարկումները կարեւոր են Նոր Զեյլանդիայի հանրութեան շրջանում Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ տեղեկացածութիւնն ու գիտելիքների մակարդակը բարձրացնելու տեսանկիւնից:

Սշխարհահռչակ երաժիշտ Սերժ Թանկեանը, ով Նոր Զեյլանդիայի քաղաքացի է, ակտիւօրէն մասնակցել է Նոր Զեյլանդիայում Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ աշխատանքներին: Թանկեանը ցեղասպանութեան ճանաչման կոչով դիմել է նաեւ Նոր Զեյլանդիայի արտգործնախարարին: Սյդ ինդրով հայազգի երաժիշտը հանդի-




Սկար 1



Նկար 2

պումներ է ունեցել երկրի խորհրդարանում, ներկայացրել անձամբ իր պատմությունը, թե ինչպես է ցեղասպանությունն ազդել իր ընտանիքի ու իր կեանքի վրա: Թանկեանի գործողությունները լայնորեն լուսարանել են նորգելանդական լրատամիջոցներով (նկար 2):

Հայ Դատի Սատրապիայի եւ Նոր Զելանդիայի յանձնախմբերի կազմակերպմամբ, 2020 թ. մարտի 11-ին կայացաւ յայտնի գրող Ջեյմս Ռոբինսի նոր գրքի՝ «Երբ մեռած ենք արթնանում. Սատրապիան, Նոր Զելանդիան եւ Հայոց Ցեղասպանությունը» առցանց շնորհանդէսը: Գիրքը կանրջում է պատմական երկու իրադարձություններ՝ Հայոց Ցեղասպանությունն ու Գալիպոլիի ճակատամարտը եւ ներկայացնում է աստրալացի ու նորգելանդացի ռազմագերիների վկայությունները, ովքեր վտանգելով կեանքը փորձում էին պաշտպանել հայ փախստականներին եւ սեփական աչքերով են տեսել թուրքական վայրագությունները (նկար 3):



Նկար 3

«Մյս դժուարին պահուն, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր աշխարհասփիւռ կառուցով, Հայ Դատի Յանձնախումբերու եւ գրասենեակներու ցանցով, ուղեկից միութիւններով ու համակիրներով կանգնած է հայկական զոյգ պետութեանց, հայկական բանակին կողքին: Ինչպէս միշտ, մենք պատրաստ ենք մեր բոլոր հնարաւորութիւններն ու կարողականութիւնը ի սպաս դնել Հայրենիքին ու հայութեան անվտանգութեան եւ զարգացումին»:

Հ.Յ. Դաշնակցութեան Բիւրօ
14 Յուլիս 2020

